ԼԵՌՆԱԿԱՆՔ

Բ.

ՓՈՐՁ

ԿՈՎԿԱՍԵՍԵՆ ՓՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹԵՍՆ

ԹԱՓԱՐՈՐԵՍՆ ՀԱՅԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

ՇՈՒՇԻ

Տպարան Մ. Բաբաջանեանի, Թամիրեան փողոց № 5.

1912

ՀԵՌՆԱԿԱՆՔ

ՓՈՐՁ ԿՈՎԿԱՍԵՑՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՋԳԱԳՐՈՒԹԵՑՆ

ԼՈՒՍԱՀՈԳԻ ԾՆՈՂԻՄ

ՏԷՐ-ԱՍՏՒԱԾԱՏՈՒՐ

ՔԱՀԱՆԱՅ

ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՓԻ

ԱՆՄԱՀ ՅԻՇԱՏԱԿԻՆ

9026
S-37

Тагцы

Опытъ Сравнительной Этнографіи
КАВКАЗСКИХЪ НАРОДНОСТЕЙ
Вып. II.
ТАГАУРСКОЕ ОБЩЕСТВО

ԼԵՌՆԱԿԱՆՔ

Բ.

ՓՈՐՁ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵԶՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱՒՈՐԱՑԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

1183

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

ՇՈՒՇԻ
Տպարան Մ. Բաբաջանեանի, Թամիրեան փողոց № 5.
1912



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Յառաջաբան

Ա. Նախապիտակը . . . . . ԺԱ.
Բ. Թաղիտ . . . . . ԺԴ.
Գ. Ալդաբ . . . . . ԻԳ.
Դ. Զուգակշիռ . . . . . ԼԴ.
Ե. Օրէնք և Ողբ . . . . . ԽԲ.
Զ. Մատենագրութիւն . . . . . ԽԵ.

2, Կապիտան Նորվենատրենգի Ցիշատակարանը 1

3, Նկատողութիւններ 27

4. Յաւելուածներ

Ա. Հայ-Ալագիրեան գաղթը . . . 57
Բ. Հայ-Զերքեզական գաղութ . . . 65
Գ. Ալդաբնեցի ցեղացուցակը . . . 69
Դ. Ցեղացոյց Բագրատունեաց . . . 70

5. Օսեմի եւ ղրացիք (քարտէզ) . . . 72

ՅԱՒԱՔԱԲԱՆ

Ա. ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Կովկասի լեռնարնակ ժողովուրդներից շատերն իրենց ծագման մասին մէկ կամ մի քանի ժոդովրդական աւանդութիւն ունին, որոնց վրա ամեն մի տոհմ հիմնում է իր ազնւական ծագումը, անձնական իրաւունքներն ու կալւածատիրական կարգերը։ Օր. Դիգորի Բաղիատները, Թագաւորեան էլդարները կամ Թաղիադները, Կաբարդայի Ուորդ տոհմերը ամենքը[1]) պատմում են մի մի այդպիսի աւանդութիւն, և որդից որդի հաղորդում են յետագայ սերունդներին։

Սակայն կան այնպիսի հասարակութիւններ էլ, որոնց աւանդութիւնները ոչ մի գործնական նշանակութիւն չունին նրանց համար։ Օր. Ուրուսբի, Զեգեմ, Բեղինդի և Բալկար հասարակութիւնների աւանդութիւնը նրանց գաղթի մասին Մաջառից[2]), Չեչին ժողովրդի աւանդութիւնը Ակուշա աուլի և առհասարակ Նախչևանների հայկական, Ցադախար աուլի վրացական[3]), Կիստին տոհմի ասորական և Արմեի կամ Արմախի աուլի պարսկական[4]) ծագման մասին։ Այս աւանդութիւնները նպատակաւոր լուսաբանութիւն չունին, այլ ինքն տոհմական շահադիտական ձգտումների են ծառայում։

Ը նայած որ թէ մէկ և թէ միւս կարգի աւանդութիւնների շարքը կարելի է դեռ աւելի երկարացնել, սակայն աւելի քան այդ նշանաւոր է այն հարցը, թէ ինչպէս են առաջ եկել այդ աւանդութիւնները։

---

[1]) „Сбор. Свѣд. о кавк. гор.“ V. „Матеріалы для ист. осетинъ“ гл. XXXI—XXXII.

[2]) „Ставропол. Вѣдом.“, 1856, № 12—20, ст. Архипова; „Осет. Этюды—Вс. Миллеръ, I. 159, прим. 7.

[3]) „Сбор. Свѣд. о Терск. Обл.“ I, 1878, стр, 366; „Терскій Сбор. в. III, кн. II. стр. 21. *Տես ներքև էջ 61։*

[4]) „Терск. Сбор.“, в. II, стр. 78—80.

Իսկ այդ արդէն բացատրւած մի խնդիր է այսօր. միջին դարերում մի կողմից բռնակալների քաղաքական, անտեսական և կրօնական հալածանքը և միւս կողմից տեղական գահակալող տոհմերի մրցումը և նրանց վրէժխնդրական կարգերը յաճախ ստիպել են ժողովրդին դաշտային երկիրները թողնել և ապաւինել լեռներին: Յետոյ նրանք խառնւել են իրենց նոր հայրենիքում տեղացիների հետ, ընդունել են բազմութեան լեզուն և կրօնը՝ առաւելապէս մահմէդականութիւնը, կորցրել են իրենց դէմքի գծագրութեան և ներքին բնաւորութեան առանձնայատուկ շատ կողմեր: Այդ հանգամանքն է պատճառն այն երեոյթի, որ այսօր այդպիսի գաղթերի ծագման մասին գոյութիւն ունեցող աւանդութիւնները շատ անդամ անհաւատալի են թւում և չեն էլ արդարանում թէ նրանց լեզւի և թէ ժողովրդական սովորութեան իրաւունքի և կրօնական կեանքի հետազօտութիւններով. մինչդեռ ինքը ժողովուրդը շարունակում է հաւատալ իր աւանդութեան և համարում է այն իր ծագման և իրաւունքի հիմնաքարը:

Թէպէտ այդպիսի մութ ծագում և կասկածելի նշանակութիւն ունին և միմեանցից նաև օսական երկու տոհմի՝ թագաւորհանների և ալագիրցիների, աւանդութիւնները, որոնց տեսակը կը գտնի ընթերցողը այս գրքոյկի մէջ, սակայն նրանց միտքը շատ պարզ է:

Օս ժողովուրդը բաղկացած է մի քանի հասարակութիւններից. Դիգորեան, Ալագիրեան, Թագաւորեան, Կուրտաեան և Թուալեան: Նրանց ազնւական դասակարգը կոչւում է ուզդանլազ (ուզդան՝ ազատ, լազ՝ մարդ), բացառութեամբ Թագաւորեան ուզդանլազների, որոնք յաւելեալ տիտղոսով կոչւում են Էլդար և Թաղիսար[1]): Վերջիններս իրենք իրենց համարում են Թագաւոր անունով մի հայ արքայազնի սերունդը և պատմում են, թէ ինչպէս նրանց նախահայր Թագաւորը

[1]) „Сбор. Свѣд. о Кавк. I, 200 и 206; „Ист. войны и владыч.“—Дубровинъ т. I, кн. I, гл. IV; Сбор. Свѣд. о кавк. горцахъ „Матеріалы для ист. Осетинъ“ гл. XXXI—XXXII; Акты, т. VII, стр. 366 և այլն:

Հայաստանից գաղթելով, լեռներում հաստատել է իր իշխանութիւնը: Այդ պատճառով նրանք իրենց երկիրը կոչում են Թագաւորեան, իրենց տոհմը—նոյնպէս, և չը նայած որ ռուս կառավարութիւնը էլդարներին ազնւական չը ճանաչէց, այլ անուանեց նրանց աւագ—старшина, այնուամենայնիւ նրանք իրենց կոչում են այն հին տիտղոսով՝ Ալդար և համարում են իշխան:

Թէպէտ այս ժողովրդական աւանդութիւնը լսել և գրի են առել շատ՝ առաւելապէս ռուս բանահաւաքներ, բայց նրանք նախ՝ անծանօթ լինելով հայոց լեզուին և միջնադարեան յիշատակարաններին, և երկրորդ՝ օսական աւանդութեան իբրև ժողովրդական առասպելական նիւթի մի առանձին ուշադրութիւն չը դարձնելով, անուշադիր են թողել մի շարք այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր պատմական ցուցմունքներ են բովանդակում յիշեալ աւանդութեան ստուգութեան համար: Այդպիսի խնդիրներ են ա) Թաղիադին տոհմը, բ) Էլդարութեան պաշտօնը, գ) առասպելական հերոսների պատմական անուններն ու գործերը, դ) գաղթի պատմութիւնն ու մանրամասնութիւնները և այլն:

Ի՞նչ նշանակութիւն ունին մի առասպելական աւանդութեան վերաբերեալ այդ խնդիրները, որոնց լուսաբանութիւնը ընթերցողը կը գտնի այս յառաջաբանի մէջ:

Իհարկէ այդ խնդիրները ոչ մի կապ չունին օրւայ հետ և լեռնցիների համար գործնական նշանակութիւն ունենալ նրանց պատասխանը չի կարող (տես. Նկատ. ԺԵ. էջ 39), որովհետև նրանք միայն պատմական հարցասիրութիւնից են ծագում և կարող են վիճելի և անընդունելի իսկ համարւել: Արդարև՝ խիստ վանդատուր և սայթաքեցուցիչ մի հարց ենք առաջադրում, քանի որ նա վերաբերում է ժողովրդական անդիր, այն էլ իր մէջ իշխանասիրական տենդից բովանդակող մի աւանդութեան ստուգութեան խնդրին, ինչպիսին է Թագաւորեան Ալդարների աւանդութիւնը: Սակայն յիշեալ խնդիրները և նրանց լուսաբանութիւնը մէկ ուրիշ կարևոր նպատակ ունին:

Յայտնի է, որ լեռնականների կեանքը միջին

դարերում միշտ ազդած է եղել ներգործապէս և կրա-
պորապէս հարաւային նրանց դրացի երկու ուժեղ հո-
սանքով խփող քաղաքակրթական աղբիւրներից, այն է՝
հայերից և վրացիներից. իսկ հիւսիսի կողմից ընդար-
ձակ անապատները, ուր մոնղոլները կաշկանդել էին
կեանքը XII դարից ասդին, բացասական նշանակու-
թիւն են ունեցել։ Ուստի և անհրաժեշտ է համարն կով-
կասեան ժողովուրդների բոլոր դրաւոր և բանաւոր
նիւթերի համեմատական հետազօտութիւնը ձեռքի
տակ ունենալ, երբ պէտք լինի լուսաբանել լեռնական
ժողովրդի կեանքին վերաբերեալ որևէ խնդիր։ Եւ սը-
խալ ու անարդար են այն բոլոր կովկասագէտ հետա-
զօտողները, որոնք՝ արհամարհելով այդ էական պայմանը,
դանց են անում վրաց և հայոց միջնադարեան յիշատա-
կարանները, չեզոքացնում են կովկասեան լեռնական-
ների ազգագրական և տնտեսական կեանքի պայման-
ները և շատ անգամ ակնյայտնի փոխանցումը և փոխա-
ռութիւնն իսկ համարում են ինքնուրոյն հետևանքներ
միատեսակ հանգամանքների (տ. Նկատ. Ի. էջ 42)։

Ահա այս յառաջաբանի մէջ լուսաբանելով և ըս-
տուգելով օսական աւանդութեան միտքը հայոց միջ-
նադարեան յիշատակարանների համեմատութեամբ,
միաժամանակ կովկասագէտների սխալ ընթացքը պար-
զած կը լինենք, որով մինչև այժմ նրանք առաջնորդ-
ւել են իրենց հետազօտութիւնների ժամանակ։

Բ. ԹԱՂԻԱԴ

Թագաւորեան ուղղանվագների այս տիտղոսը կըր-
ճատած է Թաղիադին անունից։ Բացի այդ ձևից կայ
նաև Թաղիհադին և Թաղիյելղին։ Զուգորդւում է կով-
մութեամբ հայոց Նորադին, Սրաջադին, Գուրզիադին,
մոնղոլական Շարաֆադին, Խիթադին, Սալահադին, Ա-
լադին, Ալայելղին և օսական Կուրտատին անունների
հետ։ Հաւանօրէն՝ մինչև այսօր լեհական ծագումից
ճանաչված Аладинъ ռուս աղնւականների առհմանունը
նոյն կազմութիւնն ունի։ Թէպէտ այդ բոլոր անուննե-

րը միակերպ բարդած են պարսկական դին «հաւատ»
«պաշտամունք» նշանակող բառով, օր.՝ Սալահ-ադ-դին
կամ կրճատը Սալադին, որ նշանակում է բարեհաւատ,
Նորադին՝ նորահաւատ, Ալադին՝ մեծահաւատ և այլն,
բայց թէ՛ հայերէն և թէ՛ օսական լեզուներում այդ
կազմութիւնն այլայլել է և դարձել Թաղիադ Tariaтъ։
Սկզբնական ձևը-Թաղիադին-նշանակում է Թագ(աւոր)ի
հաւատը ունեցող, ինչպէս Գուրզիադին՝ վրացու հաւա-
տը դաւանող։ Գուրզի արմատից կազմւել էր նոյնիսկ
մի ամբողջ դասակարգի անուն. իրենց սուրբ դասա-
կարգին օսերն անւանում էին զուրզիակ՝ բաղադրու-
թեամբ գուրզի «վրացի» և ակ (բացառ. «ից» վերջա-
րութիւն)։ Միջին դարերում հայոց մէջ ընդունված էին
դին բառի հետևեալ նախադաս և յետադաս բարդու-
թիւնները. դենադարձ, որ համապատասխանում է ան-
դրադարձ իմաստով վերոյիշեալ Նորադին անւան, Դե-
նակորոյս, նոյնպէս և Պարսկադեն ու Համակդեն (տես
էջ 15 և Նկատ. Ե. էջ 33։ Հմմտ. H. Hubschmann Arm.
Gram. 139)։

Գալով Թագաւորադին իմաստին, հայոց յիշատա-
կարանների մէջ կարդում ենք հետևեալ մեկնութիւնը
նրա ծագման մասին։ Թաթարները «զքրիստոնեայս
արքայուն կոչէին». ուստի Մանկու ղան Սմբատ Օրբել-
եանին յուշած շնորհը արտայայտեց ասելով.—«Զայս
մի արքայուն մեզ պահեսցուք»։ Տես փ. Օրբելեանը,
որին վկայում են նաև Հեթում և Կիրակոս պատմիչներն,
ուրիշ անգամ Թագաւորական դահ ասելու փոխարէն
գործ է ածում «տախտ արքայութեան»։ «Կոչէին զԲայ-
ատուն, զի դիցեն ի տախտն արքայութեան»։ «Եկեալ
նստաւ ի տախտն արքայութեան ղան ի վերայ ամե-
նայն աշխարհի»։ Նստուցանեն զնա ղան և Թագաւոր
ի վերայ ամենայն աշխարհի ի դաշտին Սրաւայ»։

Այսպիսով գուգորդւում է Թաղիադին կամ Թագա-
ւորադին իմաստին այն, որ Թաթարները քրիստոնեանե-
րին արքայուն էին անւանում. ուստի հետևողութեամբ
կազմեց Թաղիադին—Թագաւորահաւատ կամ արքայա-
հաւատ անունը, ինչպէս և յունադաւանները կամ աւելի
ճիշտը վրացահաւատները՝ Գուրզիադին կոչեցին։

Բացի կազմութիւնից և իմաստից, Թաղիադին սիտղոսի ծագումը պէտք է ցոյց տալ։ Հայոց միջնադարեան յիշատակարանները Թաղիադին անունով պատմական մի անձն են յիշում, որը թաթարական շրջանում էր ապրում։ Նրա տոհմագրութիւնը հետևեալն է։ Բագրատունի Աշոտ Ողորմած թագաւորի թոռը, որ միևնոյն է Գագիկ թագաւորի եղբօր Գուրգէնի որդին, Դաւիթը՝ Անհողին մականունը ժառանգած, վերանորոգեց Աղւանից թագաւորութիւնը վրաստանից մինչև Կասպից ծովը ազատելով. նա ըմբոստացաւ իր հօրեղբօր Գագիկի դէմ. բարեկամացաւ Դւնի ամիրայի հետ՝ իր քրոջը նրան տալով և Ախլաթների հետ՝ նրանց թագաւորի աղջկան իրեն կնութեան առնելով. յետոյ պարսից յարձակումը վանից օգնութեան զօրք պահանջելով Ախլաթից, Անւոյ և Կապանի Բագրատունիներից. գործել 988—1050 թուերին և թաղուել Սանահնի վանքում, իր թագաւորութիւնը կիւրիկէ Բ-ին տալով. այնուհետև Լօռում, Տաւուշում և Մածնաբերդում հետևեալ թագաւորական տոհմագրութիւնն առաջացաւ.

Աշոտ Գ. Ողորմած†977

Աշոտի որդիք՝ Գագիկ և Գուրգէն (կիւրիկէ Ա.)։

Գուրգէնի որդին՝ Դաւիթ Անհողին։

Դաւիթ Անհողնի որդին՝ կիւրիկէ Բ.։

կիւրիկէ Բ. որդին՝ Դաւիթ Բ.†1145։

Դաւիթ Բ. որդին՝ կիւրիկէ Գ.։

կիւրիկէ Գ. որդին՝ Աբաս Բ.։

Աբաս Բ. որդին՝ Աղսարթան Ա.†1230։

Աղսարթանի որդին՝ կիւրիկէ Դ.։

կիւրիկէ Դ. որդիք՝ Փոյվահլեան, Թաղիադին (1260 թ.) և Աղսարթան Բ.։

Թաղիադինի որդին՝ Սարգիս։

Թաղիադին թագաւորի Սարգիս որդին յիշւում է առանց թագաւոր տիտղոսի և ինչպէս որդու նոյնպէս նրա հօր մասին պատմիչների տեղեկութիւնները կցկտուր են[1]։ Թաղիադին՝ Աղւանից վերջին թագաւորը, ապրում էր 13-րդ դարի կէսին։ Միջագետքի արշա-

[1]) Ասողիկ Դ. 45 և 30, Լաստիվերցի Ժ., Մաղաքիա 28 և այլն.

ւանքի ժամանակ պատւում էր Հուլաւուի բանակում. Նիքիկեա-Մարտիրոսաց քաղաքի յաջող արշաւանքից դառնալու ժամանակ, Մարութայի հաւաքած մասունքներից իր հետը Սանահնի վանքը տարաւ Խաչափայտի մասը։ Այնուհետև պատարում են տեղեկութիւնները Դաւիթ Անհողնի սերունդի մասին։

Այդպիսի ընդհատման պատճառը մենք քիչ յետոյ պիտի պարզենք. այստեղ պէտք է զուգորդել Թաղա անունով մի անձնաւորութեան Թաղիադին թագաւորի հետ՝ նոյն 13-րդ դարի շրջանում։ Թաղա անունով է կոչւած Տարսայիճ Օրբելեանի կնոջ Մինա խաթունի կամ նոյն Տարսայիճի եղբայրը[1])։ Աղւանքի և Սիւնիքի Զալալ իշխանը Մինա անունով իր աղջկան Տարսայիճին կնութեան էր տւել. այդ շրջանից է պատմում ահա վայոց Զորի Նորավանքի արձանագրութիւնը. «...կամաւ և հրամանաւ պարոնացն իմոց Տարսայիճին եղբաւր Սմբատայ արքայի և ամուսնոյ իւրոյ Մինայ խաթունին և եղբարց իւրոց Լիպարիտի և Թաղայի շինեցի զխուրատունս... (Ալիշան. Սիսական 203)։

Վերջապէս՝ Թաղա անունը Սիւնիքում երկար ժամանակ գործ ածւելիս է եղել։ 17-րդ դարում մի այլ Թաղա հանդէս է գալիս իբրև Սեանի անապատի մէջ տոհմական գերեզմանատան տէր անձնաւորութիւն, որ վերաբնակւելով հանդերձ Թիֆլիզում, շարունակում է իր ուխտն ու ընծանները միշտ ուղղել Սեանի անապատին։ 1654 թուերից սկսած Թաղայի երեք որդիները շարունակում են մի քանի արձանագրութիւններով անմահացնել իրենց անունը. նրանց մէջ հաղորդւած է, որ Թաղայի հայրը Միվէլն էր, իսկ որդիքը կոչւեցին Զիթաղեան, Զիթղենց, Զթաղենց[2]) հետևեալ պատճառով։ Հայերը, չունենալով հանդերձ ազնւականութեան ճշգրիտ ծագումը արձանագրող պետական մի գիւան, իրենք հակւելիս են եղել շարունակ իշխանական տոհմերի ճիւղագրութեան, որովհետև նրանցից իրենց ֆէօ-

[1]) Մինչդեռ ոչ Տարսայիճի և ոչ Մինայի հարազատների թւում պատմիչները չեն յիշել Թաղային, ընդհակառակն արձանագրութեան խմբագրութեամբ Թաղան նրանցից մեկնումեկի հղայրն է։

[2]) Յ. եպ. Շահխաթ. «Սաորագրութիւն»... Բ. 213—215։

գաւորութեան, ինչպէս նաև նրանց արիւնակից Օրբելեան և Ազանական ֆէոդալների թագադիր տիտղոսի հանդէս գալը թաթարների մէջ, նոյնպէս զարմանալի չէ նաև, ընդհակառակն, թաթարների անուններով քրիստոնեայ զաւակներին կոչելը: Միւս կողմից թաթարների մէջ զօրեղացող մահմէդական կուսակցութիւնը, որին կը դառնանք շարունակութեան մէջ, աշխատում էր կրօնով արևելեան կայսրութեան հետ միացած Գուրզիադիններին և Թաղիադիններին յետին կարգը դասել, ինչպէս և ետ ու վերջ ի վերջոյ ամբողջ թաթարների մահմէդականութիւն ընդունելով: Ուստի հասկանալի է պալատական կեանքի այն մանրամասնութիւնը թագուհիների մասին (գրած է՝ Թաքուհի, Թաքութաը, Թագուտար և Տանգուտար), թէ նա խան դառնալուց յետոյ թէ իր անունը փոխեց և թէ վերաբերմունքը դէպի եկեղեցին, հակընթաց ստեղծելով իր քրիստոնեասէր հակառակորդին, Ապաղային[1]): Թագուհի անուան վերջին վանկը լծորդ է Հլդայի տիտղոսին. դար համապատասխանում է հայ. «աւոր», «կալ» վերջավանկին և Թագուհի նշանակում է թագաւոր և թագակալ, իսկ էլդար՝ ժողովրդապետ:

Նոյնիսկ թագաւոր բառը թաթարները, իբր ստորադաս ժողովուրդ, խլացնելով հայերից, տարածել են Փոքր-Ասիայում Տէկֆուր ձևով: Այսպէս՝ Ադրիանուպոլսոյ վիլայէթում Տէկֆուր գաղը, Ռօդոսթօ քաղաքի անունը, կէստենջէ քաղաքի մօտ «Տէկֆիւր կէօլիւ» և Բիւթանիոյ մէջ «Տէկֆուր չայըրը»[2]): Բացի յատուկ անուններից, Տէկֆուր բառը հանդիպում է դաշինքների, դրամների և արձանագրութիւնների մէջ ևս: Միւս ուշադրութեան արժանի կէտն այն է այդ բոլորից, որ հայերէն բառը զանազան գաւառում զանազան հնչիւնափոխութեան է ենթարկւած. Տէկֆուր՝ հեռաւոր արևմուտքում, Թագաւոր՝ արևելքում. իսկ Ալաշկերտից հարաւ արևելք Ծաղկանց—Ալադաղ—լեռների մէջ Զիլանաձոր գաւառի քրդական ցեղը լինքն իրեն կոչում է

1) Ստ. Օրբ. «Սիսական» 425: Համեմ. նոյն՝ Մոսկվա, 311-312:
2) Հանդ Ամս. 1911. 262-8.

զալներից կախումն ունէին: Այդ հանգամանքով Ղարաբաղում թաթարական բառով են որակել մելիքների անհարազատ շառաւիղներին. Ճըղ-Մելիք կամ Ճըղ-Շահնազար անուններըը ժողովուրդը յատկացրել է անտեսական խնդիրների թելադրութեամբ ինքնակոչ ուղուրպատորներին: Վրաստանի մայրաքաղաքում վերաբնակւած Թաղայի որդիքը նոյնպէս մերժւեցին բուն Թաղիադիններին հաւասար պատւից. մինչդեռ Երևանում Թաղիադհաննները և նրանց մի ճիւղը Թիֆլիսում կոչւեցին իրենց ժառանգական իշխանական տոհմանունով, ընդհակառակն նրանց կողքին վերաբնակւած Թագայի որդիքը կոչւեցին կեղծիք ու ժխտումն նշանակող նախավանկով Զի կամ Զը—Թաղեաններ: Մի հանգամանք, որից ակնյայտանի կերպով հետևում է, թէ բուն Թաղիադինները ունեցել են իշխանութեան իրաւունք և խնամք՝ իրենց տոհմական աճեցումն անխառն պահելու:

Վերջապէս՝ Թաղիադին անւան մի ուրիշ զուգադիպութիւն ունինք կրկին 13-րդ դարից: Թաղա Օրբելեանի և Թաղիադին Բագրատունու ժամանակ ապրում էր Հուլաւու խանի մի որդին, Թագուդար կոչումով. նրա մայրը քրիստոնեայ աղջիկ էր. Հուլաւուի հարեմում նրա 30 կանանցից մէկը լինելով հանդերձ, իր որդուն նա կարողացաւ մկրտել տալ և Նիկողայոս անւանել, երևի շնորհիւ թաթարական պալատի նախամամիկական շրջանում ունեցած համբերատարութեան:

«Սա յաւուրս մանկութեան իւրոյ մկրտեալ էր և Նիկողայոս կոչեցեալ. բայց յետոյ առ կենաց կոյսրդ լինելոյ սաթակինոսաց՝ զոյս սիրէր, սաթակինոս հղև և կամեցաւ կոչիլ Մահմէդ խան և ամենայն ջանիւ գարձոյց զքաթոլս իկրօնս Մահմէդի» (Հէթում Լէ. 56): Միևնոյն տեղեկութիւնը հաղորդում են նաև Ստ. Օրբելեան և ուրիշները: Այսպիսով «Թագուդար» ներկայանում է իբրև տիտղոս, թերևս «Նիկողայոս-Թագուդար» ձևով: Ինչպէս ունենալով այն մի շարք ազգախառն առանձնաւորութիւնները, որոնք պատմիչները 12—13-րդ դարերի հայոց իշխանական և թաթար խաների, զօրավարների և պաշտօնեաների ընտանեկան կեանքում յիշում են, զարմանալի չէ հանդիսանում Բագրատունեաց թա-

«Թագաւորեան—Թագուլեյք»[1]: Դաւիթ Անհողնի կալուածքում, Դիզակում, գտնւում է մինչև այսօր մի պալատ, մի ցամաքած աղբիւր և մի տապանաքար, որոնք տեղացիներից կոչւում են «Թագաւորի պալատ», «Թագաւորի աղբիւր» և «Թագաւորի գերեզման»[2]: Վերջապէս՝ Ալանաց դուռը և Դեղորակի սառցարանը կոչւում էին նախ քան ռուսական տիրապետութիւնը Тагаурское, Thagaur[3]: Եթէ նոյնիսկ այդ վոխոխակների թիւն երկարի դէտ այսուհետև էլ—այդ շատ հասկանալի մի երևոյթ է և կը ծնայ, գոնէ նկատելով Թագաւոր բառի՝ Թաթարական շրջանում ունեցած ընդունելութեան:

Թագաւոր և Թագ բառի այդ ընդարձակ ժողովրդականութիւնը առեղծւել էր այդպիսով Թագաւրի Բագրատունիների հռչակաւոր շառաւիղների ժամանակ Հայաստանում, Աղւանքում, Վրաստանում, Կովկասեան սարերում և Պօլսում[4]:

Այժմ տեսնենք, թէ Թագաւոր-Թաղիադին անունը ինչպէս և երբ անցաւ Կովկասեան սարերը: Հայոց յիշատակարանները պատմում են, որ Թաղիադինի օրօք Հուլաւուն մի արշաւանք սկսեց իր ազգակից Բերքայի դէմ, որը նստում էր Վօլգայի ափերին: Իւր զօրքը նա երեք մասի բաժանեց. մէկը հարաւ ուղարկեց Պարսկաստանով իր որդու Ապաղա խանի հետ, միւսն ինքը տա-

[1]) Հայկունի—Ժող. վէպ, Էմին. Ազգ. ժող. Բ. 51:
[2]) Մ. եպ. Բարխուդարեան—«Արցախ» 79:
[3]) Терс. Сбор. кн. II, 85 և Կիպերտ Կովկ. քարտէզ 1854:
[4]) Մեսրոպ Թաղիադեանի «Թանգարան Թաղիադեանց» վիպասանութիւնը թերևս պարզեր այդպիսի ժողովրդականութեան պատճառը, բայց դժբաղդաբար նրա 1400 տողը միայն պահւած է, որ և մեզ անծանօթ է (Յ. ա. ք. Մկրեանի աշխատութիւնից տեղեկանում ենք նրա մասին, կենսագրութիւն Մ. Դ. Թաղիադեանց 1886, Թիֆլ. 169): Ուրիշ տեղից յայտնի է թէ ինչ նպատակ ունէր հեղինակը այդպիսի պատմական վէպեր յօրինելու ժամանակ. «Մի տող իմանէ, ասում է Մեսրոբ Թաղիադեանց, շատ արժէ իշարթուցանել զոգիս քոյոյն Հայկազունեաց, որում յաւէտ պէտս ունիմք, քան զնաւար մատեանս վեհերոտաց: Ձմարիտ ազգասիրին է օրինակաւ քոյլ գործոց նախահարց՝ զոգիս որդւոց դարթուցանել յազատութիւն հայրենեաց»: Վէպ Վարդգիսի Տն. Տուհաց, Կալկաթա 1846, յառաջաբան:

բաւ Դարբանդով հիւսիս, իսկ երրորդը իւր նշանաւոր զօրավարների հետ հիւսիս ուղարկեց Ալանաց դռնով. Միջագետքի և Մարտիրոսաց քաղաքի առման ժամանակ նրա նշանաւոր զօրավարներն էին Թաթար ազգից Ջագատար, Աղւանքի Պռօշ իշխանը, Թաղիադին Բագրատունին, Աւագ և Էլիկում Օրբելեանները և այլն: Եւ ահա այդ զօրավարների և Հուլաւուն խանի անուննները հանդէս են գալիս այսօր իբրև օսական աւանդութեան հերոսներ: Ահա տեկստը.—

«Եւ Հուլաւուն յղեաց զօր բազում իվերայ քաղաքին (Մարտիրոսաց) և գլխաւորս կացոյց իվերայ զօրացըն զՋաղատայ ոմն, որ զօրավար էր յառաջ եկեալ Թաթար զօրուն և ի քրիստոնէից զիշխանն Պռօշ, զոր Հասան կոչէին» (Կիրակոս՝ 162. 148. 231):

«Գնաց Թաթարն և տարաւ ընդ իւր զօրսն Վրաց և զԱւագն և զՇահնշահ, ընդ որոց և գնաց Էլիկումն ի վերայ քաղաքին Մարտիրոսաց, որ Նէրկերտ կոչէ» (Տաեփ. Օրբ., 404):

«Էին և ընդ Հուլաւայ և Ջաքարիա իշխանն Հայոց որդի Շահնշահի և Սմբատ Ուռպելեան որդի Ելիկումայ և Սևադա որդի Գրիգորի Խաչենեցւոյ և Թաղիադին իշխան որդի Կիւրիկէի ի ցեղէ Բագրատունեաց» (Չամչեան Գ. 256):

«Բերքայն ժողովեաց զօրս անթիւս և անհամարս գալ առնուլ զվրէժ արեան ազգականացն ի Հուլաւուէն: Իսկ Մեծն Հուլաւու ժողովեաց նոյնպէս զզօրս իւր բազմաձեռն և արար երիս առաջս. զմինն ետ ի ձեռս որդւոյն Ապաղանին, և առաքեաց ընդ Խորասան օգնել Աղուին յայնմ կողմանէ, եւ զմի բաժինն զումարեաց ի դուռն Ալանաց, և զայլ զօրսն ընդ իւր առեալ՝ գընաց եմուտ ի ներքս քան զդուռն Դարբանդայ, զի այս երկու մուտք են՝ որ յԱլանս և ի Դարբանդ» (Կիրակոս՝ 237—8):

Յայտնի է, որ Հուլաւուի այս արշաւանքն անյաջող անցաւ. Եթիլ-Վօլգա գետի մօտ նա ջարդւեց և հազիւ մի խմբով յետ վերադարձաւ Դարբանդի դռնից ներս՝ Մուղան: Այսքան է միայն յայտնի երեք բանակներից առաջինի մասին. միւս երկու բանակների մասին մեր յիշա-

տակարաններըը լռում են։ Սակայն բարեբաղդաբար այն տեղից, ուր նրանք լռում են, շարունակում է օսական աւանդութիւնը, որի հերոսների անունը և շարժման ուղղութիւնը թոյլ են տալիս ենթադրելու, որ երկու տարբեր աղբիւրների նոյնացումն արդարացի է՝ պատմութիւնն ամբողջացնելու համար.

Сыновья Оса, по имени *Ось-Багатаръ* и *Ось-Чагатаръ*, убѣгая отъ шаха *Хелы*, перешли съ своими приверженцами людьми черезъ Кавказскій хребетъ и расположились въ Алагирскомъ ущельи... два брата Курта и Тага переселились... *Тага* съ своими приверженцами людьми расположился въ сосѣдственномъ ущельи, названномъ по его имени *Тагаурскимъ* (*Տես էջ 24 և Նկատ. ԻԲ՝ էջ 44*)։

Սակայն միայն աւտաքին աչքաչափ և նոյնահնչիւն պայմանները չեն արժանի ուշադրութեան այստեղ, այլ նաև մի քանի այլ պատմական պայմաններ։ Հայոց փէոդալ իշխանների շառաւիղներից գլխաւոր այժերին Հուլաւուն զբաղեցնում էր իր արշաւանքների և պատերազմների մէջ. այսպէս էին Զաքարիա իշխանը, Էլիկում, Սմբատ և Բուրթել Օրբելեանները, որոնցից վերջինը Վոլգայի ափերին ընկաւ կուի մէջ, Սևադա Խաչենեցին, Պռոշ իշխանը և Թաղիադին Բագրատունին։ Նոյնիսկ հայոց տեղական կեանքի և գործիչների վրա յատուկ հակող և նրանց դպող թաթար պաշտօնեաները էին նշանակւած—Զաղատա, Զարմաղան, Ջոջ-Բուղա և Ղարա-Բուղա զօրավարները։ Սակայն թէ հայ իշխանները և թէ թաթար զօրավարները միակերպ ենթակայ էին ժամանակի քաղաքական կեանքին. գահակալական և մանաւանդ քրիստոնեասիրական հակումները յաճախ առիթ էին տալիս նորանոր խմբումներ, հալածանքներ և ըմբոստութիւններ. հէնց Հուլաւուի անյաջող արշաւանքը դէպի Վոլգայի ափերը առաջ էր եկել մի այդպիսի գահակալական հարցի պատճառով։ Ուստի պատերազմական տագնապի շրջանը, մանաւանդ արշաւանքի անյաջող ելքը յարմար էր, որ դժգոհ զօրավարները և աւանդական բնիկ իշխանները, որոնք իրենց ոսկէ շղթայի ծանրութիւնը զգում էին արդէն թաթար պալա-

տի յարկի տակ, խոյս տային իրենց բռնապետներից և ապաստանէին կամ նրանց թշնամու և կամ մի չէզոք երկիր, իրենց ինքնուրոյն ազնուական կեանքը շարունակելու համար. այդպիսի չէզոք երկիր էին Կովկասի անմատչելի կիրճերը, որոնք միևնոյն ժամանակ թէ հիւսիսի և թէ հարաւի թշնամացած թաթար տոհմերի բնակչն և չէզոք սահմանն էին կազմում, ուր և Զապատան և Բագրատունի Թաղիադինը վերահաստատուեցին, համաձայն վերոյիշեալ զուգակշռի։

Թաղիադինի համար ևս առաւել այդ հնարաւոր էր, որովհետև Դաւիթ Անհողնի ժամանակից սկսած նրա տոհմակից Բագրատունիների մի ճիւղը ապրում էր լեռներում և այդ գաղթը պահպանում էր մայր երկրի հետ իր կապը կամ խնամութիւն անելով և կամ կրօնական միութեամբ. այսպէս Թաղիադինի նախահայրը՝ Դաւիթ Անհողինը ամուսնացած էր Ափխազաց դշխոյի հետ։ Սենեքերիմ Արծրունու աղջիկը, Մարեմը կամ Մարիամը, որի մայրը Անուոյ Գագիկ Ա-ի դուստրն էր, ամուսնացած էր Վրաց պալատում, և ինքն իրեն արձանագրութիւնների մէջ անուանում է Ափխազաց և Հայոց թագուհի։ Թէ այս Մարիամը և թէ նրա սկեսուրը Սոփի, որ Անուոյ Աշոտ Գ. Ողորմածի դուստրն էր, չը նայած որ Վրաց և Ափխազաց թագուհի էին դարձել, Շիրակում եկեղեցիներ էին շինում և իրենց կալւածները նւիրում վանքերին։ Վերջապէս Անիի Աբաս Ա. թագաւորը կնութեան էր առել Ափխազաց թագաւորի դստերը՝ Շուշանին, իսկ իր երկրորդ որդու՝ Մուշեղի համար կին էր բերել Մինգրելի թագաւորի աղջկանը։

Գ. Ա Լ Դ Ա Ր

Կիրակոս Գանձակեցին հաղորդում է, որ Թաթարները «կոչէին զերկիր էլ» (Պատմ. էջ 161—2), ուրից բարդւած են Էլդան, Էլջի և Էլդամղա. վերջին բառը բոլոր հպատակներին ուղղած շրջաբերական թուղթ էր նշանակում։ Էլդաբ, որ միևնոյն արմատից է ծագում, կոչւում էր բացի ժողովրդապետից նաև

կալւածատէրը։ Լեռնցոց բարբառներում նա դարձել է ալղար, իսկ բանահաւաքները յիշում են երկու ձեւ նա։ Հարաւում և Աւորպատականում, սալ-ան-դար, քալ-ան-դար և ուրիշ բաղադրութիւնների նման, ալ-դար դարձել է ալ-ան-դար, որից ապա, ն և մ ձայնների սովորական փոխանակմամբ, կազմւել է ալ-ամ-դար։ Իսկ ա հնչիւնների շրջմամբ յետոյ ալ-ան-դար դարձաւ էլ-էն-դար, ինչպէս այդ հանդիպում է նաև Սալահ-ադ-դին՝ Սալահ-էդ-դին, Մուհամմադ՝ Մուհամմէդ, Թագաւոր՝ Տէկֆիւր և այլն անգամները։

Թէպէտ կարելի է կարծել, որ էլդար տիտղոսը շուտով տեղի տւաւ միւլք-ադ-դար տերմինին և այդ պիտով մոռացութեան տրւեց նա, քանի որ շատ հազւագիւտ անգամ է պատահում, սակայն հաստատ է, որ Մխիթար Գօշի դարում նա գոյութիւն ունէր դեռ, և բոլորովին անկախ իր թաթարական կազմութիւնից՝ նշանակում էր Բագրատունիների տոհմական պատիւը-Թագաւոր պաշտօնը։ Ահա Մխիթարի խօսքերը.—

«Առաջին դաս պալատին, որ է դարպասն— էլչնդիարք, որք են պահապանք ոսկի վաղարին. զգեստ է նոցա դիպակ ոսկեթելով կազմաւ և ուներն գաւազանս ոսկիս և գործ է նոցա տանել յառաջ զագաւորդան և զայլս, զոր խնդրէ արքայն»[1]։

Այստեղ յիշած էլչնդիար ձևը թաթարական հընչման պատկերը ճշտութեամբ պահել է ա ձայնի շրջմամբ և նշանակում է կայսերական պալատի՝ ամենաբարձր պաշտօնեան, որ պարտաւոր էր ա) ոսկի խոյրը պահպանել, բ) հագնել ոսկեթել կազմածով «դիպակ» հագուստը, գ) բռնել ոսկի գաւազան, դ) թագաւորի շրջելու ժամանակ «տանել յառաջ զագաւորդան»։

Թէպէտ դժւար է լուծել այն հարցը, թէ ինչու այդ բարձր պաշտօնը կոչւեց թաթարական բառով, բայց անկարելի չէ. պաշտօնի պատմական անցեալը բաւական լոյս է սփռում այդ խնդրի վրա։ Սկսենք այնտեղից, որ Գօշի յիշած պաշտօնը Բագրատունիների ժառանգական իրաւունքն էր.

[1]) Դատաստանագիրք Հայոց, կանոն ՃԻԳ. էջ 234.

Նախ և առաջին, գրում է Խորենացին, օրհնադրէ Թագաւորն զինքն և դառն իւր, սկիզբն առնէ լով ի գլխոյն իւրմէ և ի թագէ։ Եւ զկոչեցեալն Բագարատ՝ որ ի հրէից, (պարզաւորէ) իշխել նմա թագ ի գլուխ դնել Թագաւորին և կոչել Թագադիր և Աստեա և առանց ոսկւոյ և ականց զկրասեր մարզպարիան երեքտակէն վարսակալ առնել՝ յորժամ յարքունիս և ի տան Թագաւորին շրջիցի» (Բ. 7)։

Թէպէտ Թագադիր պաշտօնը Պլուտարքոսի յիշատակարանում հաղորդած է Պարթևական մի երևելի տոհմի սեպհականութիւնը, սակայն մեր հարցի համար Բագրատունիների ծագման հրէական թէ պարթևական տոհմից լինելը անտարբեր խնդիր է, այլ հետաքրքիրը է այն, որ այդ պաշտօնը գոյութիւն ունէր Արշակունեաց ժամանակ, և Բագրատունի տոհմը Թագադիր տիտղոսն ունէր։ Գիտենք նաև, որ Մխիթարի դարում գոյութիւն ունէին մի կողմից Թագադիր և էլդար տիտղոսները և մւս կողմից պաշտօնը՝ իբրև արարողութիւն։

Երկար հանդամանքով այդ հարցի դրական պատասխանը ապահովւած է։ Առաջին՝ պաշտօնը գոյութիւն ունէր միանգամայն Վրաստանում, Կիլիկիայում և Մուղանում։—Ստ. Օրբելեանը իր տոհմի համար գրում է (էջ 378—9).

«Եւ ծանիր զի սոքա խնամութեամբ խառնեալ էին ընդ Թագաւորին Վրաց և ընդ Թագաւորին Հայոց Կիւրիկեանց, որք էին Բագրատունիք. վասն այնր պատճառի առին ի նոցանէ զԲագրատունի անուանն։ Պատիւ և բարձ ցեղին Օրբելեանց ի տան Թագաւորին էր այսպէս. լինել սպասալար ամենայն զօրացն և հրամանատար ամենայն աշխարհին Վրաց և ամենայն գործակալք տանն արքունի ընդ ձեռամբ նոցին. ունել սեպհական երկոտասան գրօշս և յամին գրօշ հազար այր. և զի սահման էր Թագաւորին սպիտակ լինել վառն և կարմիր նշան ունել, հրամայեցին նոցա կարմիր ունել զվառ գրօշին և սպիտակ նշան ի վերայ, և ի շրջելն առաջի Թագաւորին և ի կանգնելն ունել ի ձեռին գաւազան առիւծագլուխ, և ի ժամ ճաշոյն առանձին նստել

բազմականացն 'ի վերոյ քան զամենայն զեղեալսն նա-
խարարան և ուսեալ հաց արծաթի սեղանով և սոքա էին
Թագադիրք Թագաւորին»։

Այսպէս էր Թագադիրի դերը Վրաստանում. նրա
առուգաբանական խնդիրները մենք կը տեսնենք «Ջու-
ղակշռի» մէջ։ Այժմ տեսնենք Կիլիկեան հայոց պալա-
ոի Թագադիր պատիւը, որ յիշում է Կիրակոս Գանձա-
կեցին.

Կոստանդին իշխանաց իշխանը իր մանկահասակ
Հեթումի Թագադրութեան ժամանակ «կաժեցաւ թի-
կունս օգնութեան իւր առնել զորդին Հեթմոյ զկոս-
տանդին համանուն իւր. տայ 'ի նա զվամբրօն զսեպ-
հական իւրեանց և եղ զնա Թագադիր որդւոյ իւրոյ
(էջ 169)։

Վերջապէս՝ պարզւած է, որ Մխիթար իր ՃԺԳ
կանոնը կազմել է յատուկ նպատակով— Թագադիր
Զաքարիա սպասալարի խնդրանօք, որպէսզի նրա պա-
լատի կարգերը իր ժամանակի հասկացողութեամբ
Թագաւորավայել հռչակ ստանան, ուստի և Կանոնի մէջ
'ի կիր առնւած պաշտօնները ու տիտղոսները մէկ կամ
մէս ժամանակակից-պալատներից, լեզուներից և արա-
զողութիւններից են առնւած (Դատաստանագիրք Հա-
յոց, էջ 275, Ծնթ.)։

Մուղանում Թագադրութեան պաշտօնը չէզոքա-
ցած վիճակ չունէր. նրա հետ միասին Արշակունեաց
հին պաշտօնները հանդէս են գալիս Թաթարական
պալատում այնպէս, ինչպէս այդ տեսնում ենք Վրաս-
տանում և Կիլիկիայում։

Այսպէս էին՝ օր., հետևեալ պաշտօնները. 1) Ի վե-
րոյ ամենայն կերակրոց և ըմպելեաց, 2) Ի վերոյ զո-
րոյ բազմաց, 3) Ի վերոյ որսական թռչնոց և գազա-
նաց, 4) Գանձապետ արքային, 5) Ի վերոյ դատաստա-
նաց և մեծ դիւանին, 6) Ի վերոյ ամենայն հարկաց, և
այլն։ Այդ տրադիցիաների հետ Մուղանի պալատին
անցել էր նաև Թագադիրը—էլչեր պաշտօնը, որի նը-
կարագիրը զանազան պատմական և քաղաքական խըն-
դիրների հետ է շաղկապւած, ինչպէս այդ երևում է
հետևեալից։

Առհասարակ սովորութիւն է զաւակներին կոչել
պաշտօնի կամ աստիճանի անունով, օր. Մելիք, Ուզ-
բաշի, Սարդար, Տիրացու, Միրզա և այլն։ Նոյնպէս
նաև Ելչեր կամ Էլչեր, որ նշանակում է ժողովրդա-
պետ, կալւածատէր և Թագադիր, գործ է ածւել իբրև
անձի անուն, նման Ալամդար և Բալանդար տիտղոս-
ների[1]։

Ելչերի պատմութիւնն անում է Ս. Օրբելեանն
այսպէս[2]). Պարսկաստանի Թաթար գահակալներից ըստ
կարգին չորրորդի ժահը և՛ անբնական կերպով կատար-

---

[1]) Բալանդարի իբրև ժողովրդապետի մասին տեղեկանում
ենք Ջամչհանից (Գ. 837), որ նա բարձր էր քան Մելիքը. «Ազգա-
պետ երևանայ, այն է՝ Բալանդար և անուն նրա Ցարովեն, և գոր-
ծակալ տեղւոյն, այն է՝ Մելիք, որ կոչիւր Խաչի Պապ»։ Պատմու-
թեան մէջ ամենանշանաւոր Բալանդար տոհմը Զուղայեցի Շեհրի-
մանեաններն են, որոնցից Յովհայ Նազարը իր հարստութեամբ
պարսից Շահաբբասից բացի՝ յայտնի էր դարձել նաև անգղիական
շրջաններում. Հայաստանը փողով գնելու ծրագիրը նոյնպէս այդ
տոհմի գաղափարն էր, նա սպառւեց ըստ Ալիշանի (Սիսական
473—4) Վենետիկում 1854 թւին։ Բալանդարութեան տիտղոսը նը-
րանց տոհմական պատիւն էր։ Գնելով կամ շնորհմամբ Բալանդա-
րութիւն ստանալ չէր կարելի և այդ պատճառով զանազան հա-
րուստների տանեակ հազար թումանները ծախսեցին Բալանդա-
րութիւնը Շեհրիմանեան տոհմից խլելու համար—անյաջող հետե-
ւանքով։

Բալանդարի կազմութիւնը ստուգւած չէ. գաւառ, հալխ,
խալխ բառը և հին գրաբարի աղխ թերևս կապ ունին «քալ» նա-
խանդամի հետ, որով բառացի ժողովրդապետ կը նշանակէ Բալան-
դար։ Սակայն ստոյգ է, որ Բալանդարը ունէր իր յատուկ զէնքը։
Նորմանների ուսանների փոխ առած զրահը 13-րդ դարում տեղի
ունեց Թաթարական զրահին, որի նկարագիրը և անունները պահ-
ւած են ռուսաց յիշատակարանների մէջ. Байдакъ, Бахтерецъ
(մոնղ. բեկաւոր կամ բեկաւար բառից), Юшманъ, Куякъ և այլն։
„Бектаръ"-ը բէկի զէնքն է, որին նման կազմութիւն ունի նաև
Каландаръ կոչւած զրահը, հիւսւած մետաղ տախտակներից, երեք
կարգ լայնքում և 6 կարգ վերից վար մինչև գօտկատեղ, առանց
թևերի, լանջի պահպանութեան համար (П. Ф. Винклеръ. „Дос-
пѣхи" Энц. сл. Брок. и Ефр.)։ Բալանդարութեան Կալանտարъ
զրահը յիշեցնում է հայկական վէպի չորս բառը Բէլի զրահի մա-
սին. «Տախտակք պղնձիք Բիւրանց և լանջայ» (Մոր. Ա. 11)։ Փոքր
Ասիայում Բալանդարեան տոհմը այժմ իրեն կոչում է Թաթար-
կան հնչմամբ «Չալէնտեր-հան»։

[2]) Սիսական, Գլ. Հ. էջ 469—473։

մի՝ համարեա քրիստոնեական թագաւորութիւն. հայոց վանքերը, քրիստոնեայ մայրերից ծնւած թաթարական գահակալներն ու զօրավարները, տեղական հայ ֆէոդալները, բիւրապետներն ու թագաւորազները Իսլամի դէմ մտածելին հակայժ տեղծել՝ Բայտուին թագաւորեցնելով, որովհետև նա «էր օրինօք քրիստոնեայ», թէպետ յետոյ «խաբեալ ի զօրագլխաց Լուրց հրդև Մահմէդի օրինօքն և վարէր զարքայութիւն իւր Թոյլ և վատթար և անարի տմարդութեամբ»։ Այդ բոլորին համաձայն է նաև այն, որ Բայտուն, իբրև քրիստոնեայ, Մուղանի պալատը ցանկացաւ դարձնել նաև կենդրոն կրօնական իշխանութեան համար. Աղւանից կաթողիկոսութեան իրաւանշանները—ս. Գրիգորիսի գաւազանը և «36 ակամբք պատւականօք զարդարեալ» Աչափայտի հռչակաւոր մասունքը տանել տւաւ Մուղանի պալատը[1]։ Ըստ երևոյթին Բիւրապետ Դուքալ և Թագաւորազն Ելղար յաջողւած էին. սակայն մի քանի տարուց յետոյ Իսլամը կազմակերպեց իր կուսակցութիւնը. Արղունի հարազատ որդին Ղազանը հանդիսացաւ իսլամական կուսակցութեան հերոսը, նա շրջապատեց իրեն քրիստոնեայ ծագում ունեցող, մահմէդականացած և անուն ու պատիւ ժառանգած զօրավարներով.—

«Մեծ և բարեբարոյ Խութլուշահ, որ թարգմանի շնորհաւոր թագաւոր և անյաղթն ի պատերազմունս և բազմահնարն Նաւռուզ, որ թարգմանի Նաւասարդ։ Եւ դի ամենեքեան առհասարակ թողեալ էին զբնական սահման իւրեանց և մտեալ ընդ Մահմէդի օրինօք. և այս Նաւռուզս էր որդի Արղունին, յոյժ ատեցող քրիստոնէից և թշնամի եկեղեցեաց»։

«Երբ գողը տանից լինի, եղը երդիկով դուրս կը քաշեն»։ Դուքալ և Ելղար նկատեցին հզօր խալամի ոյժը և տեղի տւին. Դուքալ փախաւ թաղնւեց քրիստոնեայ պետութեան մէջ, երբ տեսաւ, որ զօրքն իրեն դաւաճանեց, «մտաւ յամուրսն Վրաց». իսկ Ելղար

---

[1]) Ցետոյ այդ Թանկապին հնութիւնները Պօլիս ուղարկեցին միջնորդութեամբ Ապազայի կնոջ և Բայտուի մուսիկ Դեսպինա անունով յոյն կնոջ։

ւեց, և՛ մի շարք նորութիւնների պատճառ եղաւ։ Արղունը իր հարճի ձեռքով դեղամահ եղաւ և միաժամանակ նրա գանձապետը, պալատի հսկիչը, դատաւորների կառավարիչը և հարկապետը միանգամից կոտորւեցին։ Պետութեան հարստութիւնը յափշտակւեց և զօրքը երկու կուսակցութեան բաժանւեց. մէկ կողմը ցանկանում էր Արղունի ազգական քրիստոնեաներ Բայտուին թագաւորեցնել, իսկ միւս կողմը՝ Արղունի եղբօրը Գեղաթուին, որը տատում էր քրիստոնեաներին և մահմէդական կրօնի կուսակիցն էր։ Գեղաթուն մրցման մէջ յաղթեց, բայց անյաջող հետևանքով. նա նկատեց, որ հակառակ կուսակցութիւնը դաւադիրներով շրջապատել ու լցրել է նրա պալատը. ուստի բանտարկեց իր որդուներին, պալատի հսկիչին, զօրապետին և ուրիշ շատերին, իսկ յետոյ զօրքը վերցրած գնաց Բայտուի վրայ կռիւ։ Սակայն դաւադրութիւնը խելացի էր կազմւած. բոլոր կալանաւորները ազատւեցին «՚ի ծուկ ձեռն տուեալ ՚ի Բիւրապետ մի Դուքալ անուն և ՚ի Թագաւորազն մի Ելղար անուն», որոնք բանակ պահանջներին կալանաւորեցին և հակողութեան տակ դրին. այդ գործում նրանց օգնում էր Տաթևի վանքը. «Զմեծ հազարապետ Յուսումշէն լսելով ի վանսն մերմ Տաթև, եղին առ մեզ ՚ի պահեսոի աւուրս բազումս»։ Այնուհետև նրանք յարձակւեցին Գեղաթուի վրա, նրա համախոհներին ցրեցին և իրան էլ խեղդեցին. «Սպանին առհասարակ զամենայն համախոհս նորին և գնացեալ ընդ առաջ Բայտուին, մինաւ ուրախութեամբ նըստաւցանեն գնա գան և թագաւոր ՚ի վերայ ամենայն աշխարհի»։

Ի՞նչ էր Արղունի հարճատան լինելու և այդ կուսակցութիւնների պատճառը. մոնղոլները մահմէդականութիւնն ընդունելով՝ առիթ աւին հակառակ ոյժ ստեղծելու այն մի շարք քրիստոնեաէրներից, որոնք հնուց իվեր բուն էին դրել Մուղանի պալատում։ Հուլաւու, Աղաղա, Արղուն խանները ոչ միայն քրիստոնեաէր, այլ նոյնիսկ քրիստոնեայ աղջիկների ամուսին և զաւակների հայր էին։ Արղունը մանաւանդ Սմբատ Օրբելեանի և Սահմանագոս Մաթոսալովի հետ սերտ էր

վախաւ Յունաց սահմանները, «ի կողմն կալնոյ քաղաքի»։ Երկուսին էլ գան և «սատակեցին»։

Այս բոլոր մանրամասնութեան մէջ մի խնդիր պարզ չէ. որքան լինքնըսահնքեան Դուքալի[1]), իբրև Բիւրապետի, նշանակութիւնը հասկանալի է Բայուրի գահակալական դասդրութեան մէջ, նոյնքան անհասկանալի է մի ոմն «Թագաւորաղն Ելդար»-ի անհրաժեշտութիւնը, եթէ նա նշանակում է բառացի ժողովրդապետ. քանի որում ժողովուրդին ոչ հարցնում էին նման խնդիրներում և ոչ էլ նա դեր էր խաղում որևէ կերպով՝ թէկուզ նոյնիսկ քրիստոնեասէր գահակալի օգտին։ Բայուրին Ելդարի արիւնակից լինելը յայտնի չէ. հակառակ մարքով Ելդար կոչած է «Թագաւորաղն», որով թաթարական տոհմագրութեան և ոչ մի անդամ կոչած է։ Ուստի պարապ հարց է թէ արդեօք Ելդար այնպիսի մի թագաւորաղն էր, ինչպիսին այսօրւայ բոլոր թագաւորական էլդարներն են իրենց համարում թէ ոչ, իրև հայոց արքայազնից սերւած։ Ահա այդ մութ խնդիրը պարզում է Թօշի Դաստատանագրքի ՃԺԹ կանոնի այն հատւածը, որ յիշել ենք արդէն. այնտեղ էլդարների պաշտօնի մասին ուղիղ ցուցումն կայ, թէ նրանք թագի պահապան—Թագադիր, այն է՝ պալատի առաջին պահպան ունէին, ըստ Սահի. Օրբելեանի՝ Թագադիր պաշտօնը։ Ուստի այդ ցուցումի շնորհիւ որոշ նշանակութիւն է տանում քրիստոնեայ Բայուրի գահակալութեան և դասդրութեան գործում «Թագաւորաղն Ելդարի» մասնակցութիւնը. գօրքը, յանձին Բիւրապետ Դուքալի, իր քրիստոնեասէր ծրագիրը իրագործելու համար, միացաւ Թագադիր Թագաւորաղն Ելդարի հետ, հիմնւելով այն հեղինակութեան վրա, որ այդ պաշտօնը ունէր միջին դարերում թէ քրիստոնեասէր կուսակցութեան, թէ քրիստոնեայ Բայուրի, թէ Տաճկի վանքի և թէ առհասարակ ռեպական ֆէօդալ իշխանների, վերջս ու կլիրիկեան պետութիւնների աչքում, երբ մի նոր միապետ իր գահակալութեան իրաւունքը հաստատել էր կամենում։ Այսպիսով Թօշի կանոնը նախ լրացնում է

[1]) Ըստ կազմութեան առընչութիւն ունի Քալ-ան-դար, Բայ-ատ, Քեզ-ա-տու մոնղ. անուններին հետ։

Բայուրի թագաւորութեան պատմութիւնը, որը պատմիչը չի մնկնել՝ նկատի ունենալով Ելդարութեան՝ ժամանակակիցների համար հասկանալի դերը, և երկրորդ՝ միևնոյն ժամանակ վկայում է, որ Ելդար—Թագադիր պաշտօնը գոյութիւն ունէր թաթարական կառավարութեան մէջ։

Վերոյիշեալ պատմութեան պակասը լրացնում են հայոց յիշատակարանները ուրիշ երկու տեսութիւնով։ Յայտնի է, օր., որ նոյնիսկ Հայկազեան տոհմի շառաւիղները չէին կարող թագաւոր դառնալ, որքան էլ ուժեղ, խելօք և հարուստ լինէին, եթէ Բագրատունի տոհմը չը տար իր համաձայնութիւնը։ Այդպէս էր վեստ Սպատ Սարգիս Սիւնեցին, «յիշխանաց տանն հայոց. նա կամեցաւ թագաւորել ի վերայ հայոց, ասում են Մատթ. Ուռհայեցին և Սմբատ պատմիչը, զոր ոչ ընդունեցին զնա ազգն Բագրատունեաց, վասն զի Հայկազն էր» (էջ 39—40 և 84)։

Միանման ընթացքով, Մատթէոս Ուռհ. հաղորդում է նոյն տեղը, որ Բագրատունիների մէկ ճիւղը միւսի վրա տիրել է երբեմն իբր ազգապետ և թէ ազգապետի իշխանութիւնը Բագրատունի տոհմի աւագին էր պատկանում.

«Յայսմ ամի բազում անցուածս եղև տանս Հայոց, ի ձեռն Դաւթի Անհողինի՝ ազգապետին Յովհաննիսի Հայոց արքային»։ Չենք կարող ասել թէ, այսպիսով, ազգապետ բառը համապատասխանում էր նախնի հայոց նահապետ (տանն Արծրունեաց, Մամիկոնեան և այլն) դաղափարին, իբրև տոհմապետի։ Ուստի պարզ է միայն թէ ազգապետ-ժողովրդապետ տիտղոսը, որ Ելդարի թարգմանութիւնից պիտենք, գոյութիւն ունէր հին հայոց թարգմանութեամբ նաև միջին դարերում. մի անգամ նա ազգապետ ձեռվ Յովհաննէս Անիի Թադաւորի և Դաւիթ Անհողինի, միւս անգամ Ելդար ձեռվ մի անյայտ թագաւորաղնի և թաթար Բայուրի, երրորդ անգամ Թագադիր ձեռվ Օրբելեան—Բագրատունիների և վրաց թագաւորների յարաբերութիւնն էր նշանակում. վերջապէս՝ մի չորրորդ անգամ Էլչինդիար ձեռվ Կոստանդինոս—Հուլաւուի և ոսկի վաղարի պա-

հապաննելի յարաբերութիւնն որոշում։ Բայց միշտ և ամեն անգամ տիտղոսը միևնոյն պաշտօնն էր նշանակում իր բոլոր արտայայտութեան ձևերով։

Հարկաւոր ենք համարում մի քանի ծանօթութիւն տալ Մխիթար Գօշի ՃԺԳ կանոնի վերաբերեալ—Ցաղագս դասատանաց կարգաց եկեղեցւոյ և սան թադաւորի»։ Այս կանոնը յօրինել է Մխիթար հետևելով Եղիշէի Վարդանանց պատմութեան, Շահապիվանի ժողովի, Մովսէս Կաղանկատացու պատմութեան և եկեղեցական հայրերի կանոնների։ Մխիթարի նպատակն է եղել վերահաստատել հայոց եկեղեցու մէջ լինը դասերը, որպէսզի վրացիների, յոյների և բոլոր արևմտեան քրիստոնեաների առաջ այդ մեկ պակասութիւնով, լինը դասերի բացակայութեամբ, տուժող հայ եկեղեցին հաւասար ճանաչէի մես եկեղեցիներին։ Այդ պատճառով էլ այդ կանոնը վրացիները չեն մուծել Գօշի Դատաստանագրքի վրացերէն թարգմանութեան մէջ։

Որպէսզի եկեղեցու լինը դասի պահանջը Մխիթար սրբագործէ, նա թուում է հետևել 6 դէպքերը, ուր լինը դասը միշտ պահպանւած է.

ա) լինն դասք երկնայինք
բ) » » Տրանին Ղևտացւոց
գ) » » Հին Ուխտի
դ) » » Եկեղեցւոյ
ե) » » պալատին Կոստանդիանոսի
զ) » » » » կրկնաբար։

Մեզ հարկաւոր հատւածը Կոստանդիանոսի պալատի նկարագրութեան մէջ է, որի վերջում հեղինակը աւելացրել է.—Եթէ ոմն թագաւորին ըստ այսմ յօրինի, որչափ երկնաւոր թագաւորին Քրիստոսի։

Դժբաղդաբար Կոստանդիանոսի պալատի նկարագրութիւնը անթիւ տարակուսանքների տեղիք է տալիս, և էլենդիար տիտղոսը իրրև չէզոքացած կիրառումն պարզ չէ դառնում ընթերցողի համար։ Բազմաթիւ անուններն ու տերմինները, որոնք ոչ մի կերպ չեն ըստուգւում, Գօշի աղբիւրի մասին լուծիւնը, նրա լ-

տիներէն և յունարէն չիմանալը, ընդօրինակող գրիչների՝ անգործածական բառերի մեկնութիւնը աւորական, պարսկական և հայերէն տերմիններով—զարգաս, գըրատաք, կապայ, Թամաշայ—այս բոլոր հանգամանքները միանգամայն անհասկանալի և՝ նոյնիսկ քիչ քէ շատ չափով հաւանական ենթադրութիւնից զրկնացած վիճակի մէջ են ձգել Սքոդարք, Եսկոլօտիրայ և էլենդիարք տերմիններըը։ Թողնելով առաջին երկու բառն այնպէս ինչպէս կայ, տեսնենք էլենդիարք բառի հանգամանքները։ Նրա մասին հրատարակիչը գրում է.

«Ջանազան կիրպով է գրւած զանազան օրինակներում. զոր օրինակ № 488, 489, Կաբապ., և մեր օրինակ՝ եղեն դիւարը, № 490 և Կանոնագիրք № 761 (Սինոդի)՝ էլենդիարը, և այլն»։

«Եւ այլն» ընդհանրացուցիչը, իհարկէ, հէնց այս անգամ է, որ չը պիտի լինէր։ Հրատարակիչը ընտրել է «եղեն դիւարը» ձևը, ձեռագրի «դ» ն փոխանակելով «Դ»-ի, որովհետև կարծել է թէ Հռոմի պապի թագը՝ «տիարա»—Tiara-ն է այս բառը։ Կամայական մի ընտրութիւն է այս՝ իհարկէ. նոյնպէս անիրաւացիօրէն նա էլենդիարների համար գրում է «ամպ հովան բըռնադնակ», վարար բառը ոչ թէ ուղիղ մտքով—խոյր թագ, պսակ—մեկնելով, այլ երկրորդական նշանակութեամբ՝ ամպ հովան. ասում ենք անիրաւացիօրէն, որովհետև հէնց կանոնի մէջ ասւած է, որ «գործ է նոցա ամենի յառաջ գազաւորողն և զայլս զոր խնդրէ արքայն», և «պահապանք ոսկի վաղարճին»։ Զի նկատել հրատարակիչը նաև, որ թէ Տրդինացու պատմածը վաղարշակի կարգերի մասին և թէ Գօշի հատւածը Կոստանդիանոսի պալատի դասերի մասին մեզ հարկաւոր մասում բացարձակ կրկնութիւն են մեկզմեկու. այսպէս՝ առաջին դասն է՝ վաղարշակի Բագարատ թագապիրը (Տրդին.) և Կոստանդիանոսի վաղարի պահապան էլենդիարը (Գօշ)։ Երկրորդ դասն է վաղարշակի զգեստացանողը «Զձեռէս» (Ն. Բիւզանդ. Տեղեկ. ի գիրս Ասողկան էջ 10) Գնթունին (Տրդին.) և Կոստանդիանոսի Vestitor—հանդերձապահը (կեղծ՝ պսակակալ, ըստ Գօշի)։ Երրորդ դասն է վաղարշակի «Քինինապահն

իւր, զինու հանդերձ, նիզակաւոր և սուսերաւոր» (Ասող.) և Կոստանդիանոսի Conditor, որք զոսկի սէգն ունէին, այսինքն զոսկով կազմած խիշտս, որք զդէնսն կրեն թագաւորին (Գօշ)։

Պարզ է այսպիսի զուգընթաց նկարագրիւ, որ Էլէնդիար=Թագադիր միևնոյն պաշտօնն է։

Վերջապէս հրատարակիչը չի նկատել, որ Էլէնդիար թաթարական բառը Գօշ մուծել է Կոստանդիանոսի պալատի նկարագրի մէջ 13-րդ դարի գաղափարների զուգորդմամբ. Թաթարների Հուլաւու զօրը հայ պատմիչների և հայոց հակացօղութեամբ սուրբ Կոստանդիանոսին հաւասար է. և եթէ կայսրները իրօք հաւասար են, հակառակիօրէն նրանց պալատների կարգերը և սիւղոնները նոյնպէս անխոր կարող են փոխարինել, մանաւանդ մի այնպիսի կանոնի մէջ, որի նպատակն է ոչ թէ պալատների ճըշմարիտ նկարագրութիւնն անել, այլ ինչը զօր մի կերպ յերիւրել՝ որպէսզի եկեղեցու ինչը կարգը՝ ևս առաւել պահանջող հանդիսանայ. այդ յերիւրման և այլևայլ ձեռագրական հանգամանքների՝ յօգուտ մեր մեկնութեան պատկերը մենք այստեղ, իրը մեր բուն խնդրին ոչ-անմիջապէս զուգորդ պարագայ, չենք նկարագրում մանրամասնօրէն, քանի որ այսքանն էլ մեր նիւթից դուրս էր, այլ յիշում ենք միայն Օրբելեանի բառերը (Սիսական, 419)։

«Բայց մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյն և ակնակալութիւնն քրիստոնէից՝ Հաւլաւու զանն մեռանի ի յ713 թուին. ընդ նմին և ամենօրհնեալն Տօնդուզ խաթունն՝ կին նորա, որք դեպակուր եղեն ի բազմահնար Ջոջային Սահիպէն. որև Տէր պիտէ՝ ոչ ինչ էին ընդհատ բարեպաշտութեամբ քան զԿոստանդիանոս և զմայր իւր Հեղինէ, որք թագաւորեցին ամս 8»։

Դ. ՋՈՒԳԱԿԵՑԻՈՒ

Թագաւորևան և Ալպիրեան աւանդութիւններից երեք խնդիր զուգորդում են հայոց յիշատակարան-

ների տեղեկութիւններին. ուստի համեմատութեան համար ընդօրինակում ենք նրանց տեկստը, որից երևում է որ հայոց մատենագրութեան այն շրջանը, երբ Թագիադին և Ելդար ապրում էին, ծաւալում է ոչ միայն լեռնցոց աւանդութեան տէտղոններն ու յատուկ անունները, ինչպէս տեսանք արդէն, այլ նաև լեռնցոց գաղթի պատմութիւնն այնպէս, ինչպէս աւանդութեան մէջ է տպորդւած։ Բացի այդ՝ Ալպիրեան աւանդութիւնը կրում է իւր մէջ որևէ գրաւոր յիշատակարանի ազդեցութիւնը. նա յիշում է.

Три брата воеводы—Осъ, Картулъ и Лекъ; отъ Оса происходятъ осетинцы, отъ Картула—Карталинцы, отъ Лека—Лезгинцы։ Ուրիշ վարիանտներ յիշում են որ Օսն ունէր եօթը որդի (Ներքև էէ 22—24 և Сб. Св. о Кавк. горцахъ V, Матеріалы для ист. осетинъ, гл. XXXI).

Իսկ հայոց յիշատակարանների մէջ յաճախ անփոփոխ խմբագրութեամբ հանդիպում է միևնոյն տոհմագրական առասպելը. Սա. Օրբելեան գրում է.

Էին Թորգոմայ որդիք ութ. Հայկ, Քարթլոս, Բարդօս, Մովկան, Լևկան, Հերօս, Կովկաս, Եգրեսս։ Տայ զՀայաստան աշխարհս Հայկայ և զծմակայինն աշխարհն հիւսիսային Քարթլոսայ և այլոց եղբարցն (Սիսական 368 և Նկատ. ԻԴ. էէ 43)։

Եթէ այս առընչութեան պատճառն անհնարին է մեկնել, գրա փոխարէն՝ մեկնութեան կարիք չունի ահա վերոյիշեալ երեք խնդիրների համեմատող տեկստը, որոնց նիւթը միևնոյն պատմական իրողութիւններն են։ Այդպիսի խնդիրներից առաջինն է գաղթի ուղղութիւնը, որի մասին Վարդան Վարդապետը գրում է (Հաւաքումն... էէ 101)։

«Աւրք ոմանք քաղդէացիք ելեալք յաշխարհէն իւրեանց զան ի Գարգման և ասեն յիշխանն Գարգմանայ. Տուր մեզ զման Ճաչին, զոր ես Հերակլ, և լինիմք քրիստոնեայք, և քո ծառայք. և կատարեցան իրքն։ եւ լուեալ ամենայն Բազպատայ, ազատնայ յոյժ. յորմէ երկուցեալ գնացին յոտն Կաւկասու. և աջողեալք ի Քրիստոսէ, յոր հաւատացին, տիրեցին ամենայն գաւառացն. մինչ զի և սմն ի նոցանէ թագաւորեաց Դաւիթ անուն, որ խնամեցաւ ընդ աբ-

քային Ջորոյ Գետոյ, եւ կոչեցին զգաւառն Ծանարք, զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց. և իշխանն Գարդմանայ կոչեաց զնոսա քորեպիսկոպոս ըստ լեզուին Վրաց»[2]:

„Въ старинное время, неизвѣстно когда вышли изъ Мислуга (страны далеко на югѣ) три брата воеводы, по имени Осъ, Картулъ и Лекъ. Осъ завладѣлъ страною около города Горы, отъ него происходятъ осетинцы. (Ներքև էջ 23—24):

Երկրորդ հալած է օսական աւանդութեան մէջ յիշած գանձերի, արծաթեայ սեղանների, և հացկերոյթի սպասների վոխադրութիւնը. հայոց յիշատակարանները այդ պատմութիւնը կապում են Սիւնեցի Վեստամ կամ Ազատ Սարգսի անուան հետ: Այսպէս է պատմում այդ դէպքը Մատթէոս Ուռհայեցին. (Պատմ. էջ. 84).

«Եւ զկնի մահուանն Յովհաննիսի այր մին յիշխանաց տանն հայոց, որ էր այր նենգաւոր, անուն Ազատ Սարգիս Հայկազն, ազգ առնէր Հոռոմոց և ի տուր տայր զաշխարհն Հայոց և զգանձատունն առաջին Թագաւորացն հայոց յափըշտակեաց և տարաւ յԱփխազս, բերդամուտ եղեալ. և աւանս բազումս էառ ընդ ձեռամբ իւրով և կամեցաւ Թագաւորել ի վերայ Հայոց, զոր ոչ ընդունեցին զնա ազգն Բագրատունեաց, վասն զի Հայկազն էր»:

Լաստաւերացին յիշում է այդ բոլորը, բայց Ափխազի դէպքը չի յիշում. ուստի շարունակութեան մէջ երկու յիշատակարաններն էլ-Լաստիվերացին և Մատթէոս-երը յիշում են Անդում Վեստամ Սարգսի պահած գանձերի յետ խլելը, Ափխազ անուան և Կովկաս տարուած գանձերի մասին լռութիւն է պահում: Մեզ համար, սակայն, ժողովրդական աւանդութեան՝ մի գրաւոր յիշատակարանի մէջ հանդիպումն է էականը, և երբէք չի նւազում այդ հանդիպման հետաքրքրութիւնը նոյն իսկ նրանով, որ գրաւոր յիշատակարանի օր. Ուռհայեցու տեղեկութիւնն էլ կարող է երբեմն լինել նոյնպիսի մի ժողովրդական աւանդութեան հետքը, ինչպիսին է Օսական աւանդութիւնը (Ներքև էջ 4-5).

Тагауръ бѣжалъ къ осетинамъ. Онъ привелъ туда съ собою нѣсколько дворовыхъ людей и привезъ много денегъ и дорогой посуды, состоящей изъ небольшихъ

2) «Ծանար» անուան մեկնութեան և ծանարների երկրի մասին տես Գ. Նկատ. էջ 31:

круглыхъ серебряныхъ столовъ, котловъ, большихъ и малыхъ чашъ и прочаго.

Արդ՝ այս արծաթէ սպասները միայն Թագաւորներին իրրև բարձրագոյն պաշտօնէութեան արտօնուած էր գործածելու և ուրիշ ոչ ոքի. ուստի և հակադիր իմաստով արծաթէ սպասների յիշատակութիւնը վկայում է, որ արդարև գաղութը Բագրատունի Թագաւորների որևէ շառաւիղից է եղած. ահա Ստ. Օրբելեանի վկայութիւնն այդ մասին (Սիսական 378 և վերև էջ Իե):

«Պատու Օրբելեանց էր այսպէս, որք խնամութեամբ խառնեալ էին ընդ Թագաւորին Վրաց և ընդ Թագաւորին Հայոց Կիւրիկեանց, որք էին Բագրատունիք... Հրամայեցին... ունել ի ձեռին գաւազան ասիւծագլուխ, և ի ժամ ճաշոյն առանձին նստել բազմականացն ի վերոյ քան զամենայն դեղեցուկ նախարարսին, և ուտել հաց արծաթի սեղանով. և սոքա էին Թագաւորք Թագաւորին» (Königskröner):

Օսական աւանդութեան բանահաւաքը և ինքը օս պատմողը, չը հասկանալով արծաթէ սպասների իրրև Թագաւորութեան յատուկ արտօնութեան նշանակութիւնը, հաղորդել են Тагауръ-*ի ստացուածքի վոխադրութիւնը՝ խնդրի նիւթական կողմը շեշտելու համար միայն, հերոսի հարստութիւնը ընդգծելու համար, մինչդեռ, ինչպէս մեկնում են Ստ. Օրբելեանի տողերը, սպասները ախտղոսի յատուկ նշաններն են: Ստեփ. Օրբելեանի յիշած արծաթէ սպասների և օսական վէպի արծաթէ սեղանների զուգակշիռը հարստանում է նաև մի երրորդ՝ ժամանակակից դոկումենտով. 1837 թ. աշխատում էր մի* Коммисія для разсмотрѣнія Грузинскихъ и Имеретинскихъ царскихъ документовъ. *Նրա քննութեան նիւթերի թւում էին նաև օսական 12 ալդարների դոկումենտները, որը նրանք ներկայացրել էին՝ խնդրելով ճանաչել ալդարների տոհմական ազնւական ծագումը: Այդ դոկումենտների տեկստը մենք չենք տեսել, բայց բովանդակութիւնը, որ յիշած է յիշեալ* Коммисія-*ի №61 արձանագրութեան մէջ, մեր հարցի համար շահեկան է, իրրև անալօգիա Թագաւորների իրաւունքի մասին Օրբելեան Ստեփ. պատմիչի խօսքերին և օսական աւանդութեան. այսինքն՝ նաև 19-րդ դարում ալդարներն իրենց ազնւականութիւնը ուզում*

էին հաստատել նրանով, որ հիւրասիրական ուրոյն պարագաներով և Պալատի արտօնած ելումուտքի իրաւունքով նրանք իրենք անձի ճանաչուել են ազնուական. ահա Коммисія-ի բառերը.—

«Подлежитъ 12 документовъ, достоинство коихъ нельзя опредѣлить по правиламъ сенатора Мечникова, данные осетинамъ на безпрепятственный пропускъ ихъ къ царямъ, на оказываніе имъ гостепріимства и проч., представленные Осетинами, въ числѣ 162-хъ дворовъ, въ доказательство непринадлежности ихъ князьямъ Мачабели (Акты VIII, док. 61, стр. 89).

Ռուսական կամբագրութեան պաշտօնական և քաղաքագիտական ձևը, մանաւանդ այդ բառերի մէջ նշանակուած «и проч.» ամենաբովանդակ կրճատումը շահագրգիռ են դարձնում պատմական խնդիրը լուսաբանելու հէնց յիշեալ դոկումէնտների տեկստը հրատարակելով։ Բայց այն, ինչքան որ ասած է այդ կամբագրութեան մէջ, արդէն իսկ ձայնակցում է Թագաւորը պաշտօնին այնպէս, ինչպէս որ նա ծանօթ է մեզ Սա. Օրբելեանից, Խորենացուց և Վրաց յիշատակարաններից. տարաբաժան տողերը այդ են վկայում[1]։

Երրորդ հարցն է գաղթի շարժառիթը, վրէժը և խորթ եղբարոյ իբրև գահակալող անձանց մրցումը. հարցեր՝ որոնք մանրամասնութեամբ, տեղ տեղ բառացի կըրկնաբար պատմած են տեկստերի մէջ։ Թագաւորեան ա-

1) Թէ ինչ ծագում ունի արծաթէ տապանների, իբրև Թագաւորի պաշտօնի յատուկ նշանների՝ սովորութիւնը, ոչ մի տեղեկութիւն չունինք։ Բայց բոլոր հեռաւոր պայմանները մատնել են տալիս հեռեալը։ Բագրատունի տոհմն ապրում էր Տայքում, Սպերում (Խորեն. Գ. 43), իսկ Գիւմիւշխանէ և Սօֆլեր անուննները վկայում են այդ նահանգի հանքագործութեան մասին։ Միւս կողմից գիտենք, որ դարբինը՝ քուրմ, իսկ հանքը և հնոցը՝ սրբատեղի են եղած շատ հին ժողովուրդների մէջ. Ափրիկայի և շատ կղզիների խուլ անկիւններում մինչև այսօր մնացել են այդ պաշտամունքի հետքերը (Эд. Тайлоръ—Первобыт. Культ. I. 286)։ Նախնի հայոց Դարբնաց Քարից բայի՝ յայտնի է նաև որ Սպղնձահանքը մտնելուց առաջ օսերը վինաթափւում էին և ապա մրտնում՝ իբրև մի տաճար (Рус. мысль 1881. сент. 61.)։ Օսական աւանդութիւնն էլ ասում է, որ Օս-Բագատարը V դարում Վրաց Վաղթանգ Ա. ժամանակ (446—499) արծաթ էր շահեցնում Սպղնձի հանքերում (Акты, X. стр. 152)։ Արդեօք երբևիցէ այս հատուկտոր տեղեկութիւնները նեբբին իմաստ կտանան, պատճառաբանելով Թագաւոր Բագրատունեաց տոհմի գարբին, հանքագործ կամ արծաթագործ և քուրմ լինելը—այդ խնդրելի է։

աւանդութիւնն այսպէս է հաղորդում գաղթի շարժառիթը և խորթ եղբայրների մրցումը (տես նեքև էջ 4).

„Тагауръ, родоначальникъ осетинскаго общества Тагауръ, былъ неизвѣстно когда и при какомъ царѣ, наслѣдникомъ армянскаго престола. Когда по смерти отца ему, какъ старшему сыну, достался престолъ, то братья его отъ другой матери, желая воцарить старшаго изъ нихъ, возмутили народъ противъ Тагаура и хотѣли убить его.

Тагауръ видя неминуемую гибель свою, бѣжалъ изъ Арменіи къ иронамъ или осетинамъ, жившимъ въ горахъ на сѣверъ отъ Мингреліи и Имеретіи".

Այստեղ ակնարկուած մրցակից պայազատների ծագումն աւելի պարզ է երևում հետևեալ անուանական տախտակից, որ կազմած է հայոց յիշատակարանների ցուցմամբ (տես Յաւելուած Դ. էջ 70—71)։

Բագարատ Վրաց 980—998

Որդի Դաւրժէն Ա. Բագրատունւոյ և Սոփի Դշխոյին Անւոյ

Ա. կին (անյայտ անուն)	Բ. կին Մարիամ Հայրն՝ Սենեքերիմ Վասպուրականի, մայրն՝ Խուշուշ Դշխոյ Անւոյ
Գաւրժէն Բ.	
Բագարատ Ամիրասպայ	Մրցակիցը — Որդիք անյիշատակ

Բագարատի երկրորդ կինը՝ Մարիամը, ինքն իրեն անուանում է Մարիամշէնի արձանագրութեան մէջ «Ամիրասպայ և Հայոց թագուհի, դուստր Մհծին Սենեքերիմայ և թոռն Գագկայ Հայոց արքայի (Շահխաթ. Ստոր. Բ. 272, Ալիշան՝ Շիրակ 125 և 149), իսկ Մարիամի սկիսուրը, այսինքն՝ Բագարատի մայրը Սոփին, որ Աշոտ Գ. Ողորմածի աղջիկն էր, Մրէնի և Ալէմի արձանագրութիւնների մէջ ինքն իրեն կոչում է Հայոց և Վրաց թագուհի։

Բացի մրցակից պայազատների անուանական և համայնքական տախտակից, մեզ հասել են նաև մրցման մանրամասն պատմութիւնը և առաջացրած խլըր-

տուճեսերը, որոնց շնորհիւ օսական աւանդութեան ընդհանրացումն ու տարածումը կոնկրէտ բնոյթ է ստանում ժամանակի, տեղի և ընտանութեան պայմաններով։

Հայոց բոլոր յիշատակարաններն ցան ու ցրիւ տեղեկութիւններն այդ գաղթի մասին՝ ի մի խմբագրել է Զամչեանն, որից և մենք ընդօրինակում ենք իր գրքի մի ամբողջ էջը (Բ. 869—870) և այդ դիտումով. թէ Զամչեանի խմբագրութեան։ շնորհիւ հայոց ազգութիւնները և թէ Նորգինտրինդի տեսարը ժողովրդական անդրի աւանդութիւնների և նաև ռուսերէն կիրառման պատճառով խիստ այլայլած պիտի լինէին, անկասկած է այդ. սակայն զարմանալ պէտք է, որ այնուամենայնիւ երկու տեսարերի զուգակշիռը նոյնիսկ բառացի արտայայտութիւններ ունի։

Տարբերութիւնն այն է, որ աւանդութեան մէջ գլխաւոր տեղը բռնում են՝ նման բոլոր ժողովրդական նիւթերի, մրցման գաղափարը և ընդհանրացումը, իսկ երկրորդական տեղը բռնում են դէպքերի մանրամասնութիւնը, անուններն ու տեղի և ժամանակի մոռացութիւնը։ Ահա Զամչեանի խօսքերը.

«Ընդ այն աւուրս թագաւորէր յաշխարհին Վրաց Բագարատ որդի Թոռնին Աշրնեբսէհի Մեծի և սերնդոյ Բագրատունեաց. քանզի դէնի Աշրնեբսէհի Մեծի թագաւորեաց որդի նորա Դաւիթ. և ապա եղբօրորդի Դաւիթի՝ Գուրգէն և ապա որդի Գուրգենայ Բագարատ։ Սա, ըստ գրելոյ Վարդանայ՝ էառ ի կնութիւն զդուստր Սենեքերիմայ արքային Վաղուրշականի՝ յետ մահու առաջին ամուսնոյ իւրոյ։ (Տես Յաւելած Դ. էջ 70—1)։ Եւ էր նորա որդի մի չափահաս Գուրգէն անուն ծնեալ յառաջնոյ կնոջէ, և այսմ Գուրգենայ եղև որդի Բագարատ անուն։ Անկաւ յայն աւուրսն խռովութիւն յաշխարհին Աբխազաց, և թագաւոր նոցա Թեոդոս կամ Թեզոս՝ ընկեցաւ յաթոռոյ և զրկեցաւ յաչաց։ Եւ ի լինել այսր արքայն Հայոց Սմբատ և Դաւիթ կիւրապաղատ Տայոց՝ թագաւորեցուցին ի վերայ Աբխազաց զԲագրատ զորդի Գուրգենայ զԹոռն Բագարատայ։ Այս Բագրատ էր պատանի հզօր և սէգ և ակն ունէր տիրել նաև ի վերայ սահմանաց թագաւորութեան Վրաց. այլ մինչ նա յայսմ խորհրդի էր, հաւ նորա Բագարատ մխիթոն լեալ ընդ կնոջ իւրում՝ հալածեաց զառաջին որդի իւր զԳուրգէն զհայրն Բագարատայ, զի խորհէր թագաւորեցուցանել զմի ի զաւակացն՝ զորս ծնաւ յերկրորդ կնոջէ անտի ի դստերէն Սենեքերիմայ։

Այսմ իրաղեկ լեալ պատանին Բագարատ արքայ Աբխազաց, զարձաւ իթիշնամութիւն ընդ հաւուն իւրում Բագարատայ, միանգամայն և ընդ Դաւթի կիւրապաղատի՝ կարծելով և զնա խորհրդակից լինել նմա. որոյ վասն զուտարեալ զօր սաստիկ յաշխարհն սարմատացւոց և անցեալ յայակոյս ընդ լերինս Կովկասու՝ եկն բանակեցաւ յեզերս Կուր գետոյ։ Զայն տեսեալ Դաւթի և Բագարատայ՝ խնդրեցին ի Սմբատայ յարքայէն Հայոց օգնութիւն և նորա առեալ ընդ իւր զԳագիկ զեղբայր իւր և զթագաւորն Կարուց Աբաս, և զամենայն զօրս Հայոց, եկն առ նոսա ի գաւառն Ջաւախայ և բանակեցաւ ի գեօղն, որ կոչիւր Դլխւանկ. և էին զօրքն Աբասայ առնասարակ կարմրազգեցեալք և զօրքն Սմբատայ ծաղկազգեստք։ Անդ հասին վաղվաղակի և նախարարք Աղւանից և Սիւնեաց, ընդ որս և թագաւորքն Վասպուրականի Գուրգէն և Սենեքերիմ։

Յայսչափ բազմութենէ զարհուրեալ արքային Աբխազաց՝ հրեշտակս առաքեաց առ կիւրապաղատն Դաւիթ խօսիլ ի հաշտութիւն. և Դաւիթ խնդրեաց ի նմանէ զքերդն Սակուրչէթ կամ Ակուրչէթ. զոր և առեալ՝ ընծայեաց մեծի արքային Հայոց Սմբատայ, շնորհս կամելով առնել նմա վասն հաւանելոյ նորա յօգնութիւն. և ապա գնացին իւրաքանչիւր յաշխարհս իւրեանց։ Այլ ի մեռանիլ Բագարատայ ծերունւոյ՝ յամի տեառն 998, զօրացաւ և թագաւորեաց ի վերայ Վրաց առաջին որդի նորա Գուրգէն, այն է՝ հայր Բագարատայ պատանւոյ՝ արքային Աբխազաց։

Ի վերջ բանի՝ նկատելու արժանի է, որ օսական աւանդութիւնն իր բոլոր վարիանտների մէջ միևնոյն հարաւից եկած գաղթի այլևայլ դէպքերը պատմում է կապակցեալ, կենդրոնացրած մէկ հերոսի՝ Taraypъ-ի շուրջը. իսկ ընդհակառակն Հայոց յիշատակարանների մէջ՝ լինչպէս տեսանք արդէն, ցանուցրիւ են այդ դէպքերը, զանազան անձանց և ժամանակների հետ են կապած և տարբեր դրդիչներ ունին։

Եւ զարմանալի կը լինէր, եթէ այսպէս չը լինէր. ժողովուրդը դարերի ընթացքում իր տեսած գաղթերը միացրել՝ ձուլել է իր գլխի մէջ, և նրանցից ստեղծել է միայն մի գաղթ և մի հերոս, ծաղկեցնելով և ամբողջացնելով գաղթի սկիզբը, շարունակութիւնը և հետևանքը, նման բոլոր ժողովրդական վէպերի, հերոսների և նրանց կատարած առաքինութեան կամ ընդհակառակն չարութեան նկարագրի։

Ե. ՕՐԷՆՔ ԵՒ ՈՂՔ

Այս բոլորից յետոյ, այժմ մեր առաջ մի այլ երեւոյթ է պարզւում. մենք տեսնում ենք թէ ինչպէս մի կողմից զէպի հիւսիս գաղթող ժողովուրդը և ֆէոդալական իշխանները ձգտում են իրենց տոհմական ինքնուրոյն կեանքի վերջին օրերը քաշքշել լեռներում, ըստեղծելով իրենց տխուր անցեալի իբրև յուշարձան իրենց անգիր ժողովրդական աւանդութիւնները, մեւս կողմից հարաւում թէպէտ բուն հայրենիքում ծնացած բայց պառակտուածների բոլոր տնտեսական կորստարեր հետեւանքները զուշակող և տեսնող իսկ անձինք աշխատում են պատմական կեանքի այդ խանգարւած ու խըճճւած կծիկը մերթ խնամել օրէնքներ հրատարակելով հաւաքական գաղթերի և գահաժառանգութեան համար եղած գժտութիւնների դէմ, և մերթ բանաստեղծօրէն ողբերգութիւն են յօրինում լսած ու տեսածի համար։ Թէ օրէնքը և թէ ողբը կրկին ծագում են երկուսն էլ 13-րդ և 14-րդ դարերից, ուրեմն մատենագրական վկայութիւն էլ են նրանք մեր նախորդ էջերի նիւթի մասին. ուստի այդ գրականութիւնը առաջադրում ենք այստեղ, իբրև Թագաւորեան աւանդութիւնը լուսաբանող մի երեւոյթ.—

Ա. Օրէնք։ «ՃԺԴ. Յաղագս դատաստանաց աքսորելոց թագաւորի և որք ընդ նովաւ.—Թագաւորք կարգեալք յԱատուծոյ, որպէս Իսրայէլին, յԱատուծոյ բարձցին և կամ աքսորեսցին, իսկ իմարդկանէ կացեալք՝ ի նոցունց աքսորեսցին։ Եթէ իշխանք թագաւորեացուսցեն և ոչ ըստ արժանւոյն վարէ զթագաւորութիւնն, ինոցունց կարգողացն աքսորեսցի, այլ որդւոց նոցա ոչ է իրաւացի փոխել։ Իսկ թագաւորութիւն սեպհական լիցի ի հօրէ անկեալ առ որդի։ Իսկ զիշխանս, զոր կարգէ թագաւորն, ի նմանէն և աքսորեսցին և կամ խրատեսցին։ Իսկ զթագաւոր խրատել, եթէ այնպէս հարկ լիցի պահել զաղաղութիւն, կամօք լիցի այլ թագաւորի և հայրապետի և հաւասարութեամբ ամենեցուն։ Իսկ եթէ իշխանք և ազատք ինքեանց կացուցանեն իշխան, ինոցունց միաբանութենէ աքսորեսցի և խրատեսցի։ Այլ զթագաւորի կարգեալ իշխան թագաւորն աքսորեսցէ և խրատեսցէ։ Այլ իշխանաց իշխան—զիշխան խրատել և կամ աքսորել և զաղատ. Թէ ինոցունց կարգեալ լիցէ—նոցունց միաբանութեամբ արասցէ, և թէ ի թագաւորէ—թագաւորին կամօք արասցէ։ Իսկ ազատք զղինուորս ոչ իշխեն խրատել, այլ հանել յինքեանց. այլ խրատել իշխանաց լիցի։ Նմանապէս զղինուորք զղինակոնս ոչ կարեն աքսորել և ոչ խրատել, այլ՝ աքսորել—ազատք և խրատել—իշխանք։ Զայդ ըստ այմ կարգի իրաւացի գիտեմ դատաստան ի տունս թագաւորաց» (Դատաստանագիրք Մխ. Դօշի, էջ 422)։

Դատաստանագրքի հրատարակիչը, Վ. Ծ. Վ. Բասմաճեան, միևնոյն տեղում և առիթով մի արդարացի Ծանօթութիւն է դրել, որը ընդօրինակում ենք իբրև լուսաբանութիւն ՃԺԴ կանոնի և ինպատ մեր բոլոր ասածների։

Ծնիթ. Թ. 942. Սոյն յօդւածը յօրինելուն տեղի է տուել մեր հեղինակին անշուշտ ազգային պատմութիւնը։ Յայտնի է թէ Բագրատունեաց թագաւորութեան վերջերում հրպիսի խռովութիւններ ծագեցան արքայազունների և հզօր նախարարների կողմից, երբ որդին հօր դէմ, եղբայրը եղբօր դէմ ապստամբում էին և թագաւոր հռչակում իւրեանց, պատերազմով դիմում էին միմեանց վերայ, և այլն, չպահպանելով ոչ օրէնք և ոչ աւանդութիւն թագաժառանգութեան մասին։ Դորանով ոչ միայն վերջ ի վերջոյ կործանուեցաւ հայոց թագաւորութիւնը, այլև աւերուեցաւ բոլոր երկիրը, ոտնակոխ եղաւ ազգը։ Նոյնպիսի անկարգութիւնների նշաններն երևում էին արդէն և Կիլիկիայի Ռուբինեանց թագաւորութեան ժէջ Մըխիթարի ժամանակներում»։

Մեր կողմից կարիք ենք զգում յիշել ՃԺԴ կանոնի սկզբունքը թագաւորի մասին։ Հայաստանում Յուրեմնացու շնորհիւ հռչակած՝ Բագրատունիների ծագումը և Աատուծոյ խոստումը—թագաւորք իքէն ելցեն—միանում են ՃԺԴ կանոնի հիմնական սկզբունքի հետ. «Թագաւորք կարգեալք յԱատուծոյ, որպէս Իսրայէլին, յԱատուծոյ բարձցին և կամ աքսորեսցին»։—Այդ հասկացողութիւններից էր ծագում Պահլաւունիների և Վեստ—Ազատն Սարգսի գժտութիւնը, որը՝ չը նայած որ Հայկազն տոհմից էր, սակայն Բագրատունի Գագիկ Բ-ից նւաստ դատւեց։ Նոյնպէս՝ Աատուծոյ կարգած այդ տոհմից էին ծագում Աղւանքի, Վասպուրականի, Վը-

բաց, Ափխազների և կարուց թագաւորները, որոնք իրար կարգում էին և իրենց սեպհական, աստուածատուր շնորհը շահագործում ապատօրէն։

Բ. Ողը։ Պատմական կեանքի այն տխուր վիճակը, որից բղխում էր Մխիթարի ՃԺԴ կանոնը, ողբացել է հայոց միջնադարեան նշանաւոր եկեղեցականներից մէկը, Ստեփանոս Օրբելեան։ Ծագիլով ազնւական և իշխանական տոհմից, նա խնամուած է եղել իր ազգի և տոհմերի անցեալ տխուր բախտին, և պատմական հարցասիրութեամբ, այլ ոչ նոյնքան խոր զգածմամբ, որքան անզուգական Արիստակէս Լաստիվերցուն, նա պատկերաւոր ոճով ողբացել է ազնւական տոհմերի սպառումը[1]).

Իսկ եղօրնալ Իսմայէլին
Սրոյ ձեռին հագաբածին՝
Եղեալ երկիւղ տունս Արամին
Ջեռամբ Յուսիայ անիծելոյն,
Ճեղքեալ յերկուս թագաւորին
Բագրատունեացն և Աբծրունին,
Գագիկ որդին այն Դերենկին
Կապեալ իւր թագ ղէմ Սմբատին.
Որ և կորուստ եղև բնաւին
Հայոց ցեղիս բոլորովին։
Աթոռք բազում անկանէին.
Տունք ե՛ ազարանք կործանէին.
Իշխանք անհետ կորնչէին.
Ազգօք իւրեանց ջնջեալ հեղձին.
Ազատորեայն ի բաց խլին,
Նման ծխոյ սպառէին։
Եկեղեցիք քանդեալ լինին.
Եւ յաւարի հարեալք գերին.
Գեղք և աւանք աւերէին.
Քաղաքք և բերդք տապալէին։
Ահա սոքա այսպէս անցին,
Բնաւին ի բաց եղծեալ գնացին.
Որպէս զսաւերք այլ չերևին,
Նման երազոյ կարծեօք թուին.
Որպէս ծաղիկք ամարայնոյն,
Արեւակէզ թարշամեցին.
Որպէս սաղարթք վարսեալ ծառին,
Խորշակահար յամաքեցին.

1) Ողբ ի կաթուղիկէն 1885, Տփխիս, 36...

Ցեղոյ երազք եղեն բնաւին
Ջարթուցեալոց ի քնոյ մահճին։
Ո՛ւր են իշխանք գահագլխին,
Նախարարաց կոյտքն, որ կային։
Ո՛ւր զօրութիւնք բիւր բանակին,
Խուռնեալ ամբոխքն անթուելին։
Ա՜յ վայ քեզ վայ, որ չվճարին,
Վայ զքո փեսայքն առաջին,
Որ բնաւ ի քեզ այլ չերևին.
Վայ զքո երէցն Արշակունին.
Վայ զքո կրտսեր Բագրատունին.
Վայ զքո Սիւնին և զԱրծրունին.
Վայ զՄամիկոնին և զԱղուանին.
Վայ զՇիրակայն և զվանանդին.
Վայ զՏարօնոյն և զԾոփացին։
Վայլք քանիք քեզ հանդիպին,
Վայ ի վերայ վայից կուտին։

Զ. ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թէպէտ օսական աւանդութիւնը շատ բանահաւաքներ յիշել են այս կամ այն մանրամասնութեամբ, սակայն մենք իբրև բնագիր ընդունել ենք Կապիտան Նորդենստարենգի կազմած Յիշատակարանը՝ այս վերնագրով. „Свѣдѣнія объ адатѣ или судѣ по обычаямъ кавказскихъ горцевъ Владикавказскаго округа (Осетинъ и Чеченцевъ), որ բովանդակում է մի յառաջաբան և հինգ գլուխ 150 յօդուածով։ Հեղինակն այս յիշատակարանը կազմել է պաշտօնական պահանջով. ռուս կառավարութիւնը 1830 թուից սկսած հետամուտ էր հաղել ծանօթանալու և կարգադրելու կովկասեան ժողովուրդների կեանքը. Կապիտան Նորդենստարենգին բաժին է ընկել Օսական և Չեչենական շրջանը, որի մասին նա կազմել է իր Յիշատակարանը և ներկայացրել Վլադիկավկազի Կամենդանտ Գնդապետ Նեստորովին։ Այս վերջինը կազմելով Յիշատակարանի վերաբերեալ պատշաճ հաղորդագրութիւն — բաղորա — մարտ 31, 1844 թ. №267, դոկումեն №10, ներկայացրել է այն Գեներալ Գուրկոյին. սա էլ մակագրել է ինքնաձեռագրով. «Ուղարկել Ստավրոպոլ պահպանելու խաղաղ չեր-

քեզնների կառավարութեանը վերաբերող դիւանատան գործերի մէջ. մայիսի 15, 1844 թ., Սառանիցա Զեւվլեննաեա»։

Կապիտան Նորդենստոլենգի այդ Ցիշատակարանին մենք հանդիպել ենք՝ վաղուց սպառած մի մասնագիտական աշխատութեան մէջ,—Адаты Кавказскихъ Горцевъ I—II, 1882-3,—Одесса, որի հեղինակը, օդեին. պրօֆ. Նովորոսսիյսկի համալսարանում, Ѳ. И. Леонтовичъ, ունեցել է իր ձեռքին Նորդենստոլենգի յիշատակարանի բնագրից հանած մի ընդօրինակութիւն, որը և հրատարակել է իր աշխատութեան II մասի 8—30 էջերում։ Այս հրատարակութիւնից ահա և մենք հանել ենք Նորդենստոլենգի „Свѣдѣнія“-ն՝ ոչ թէ ամբողջը, այլ միայն սկզբից §§ 1—65 յօդւածները, ուր պատմած է օսական աւանդութիւնը։ Այնուհետև յօդ. 66—124 (Դատարան և Օրէնքներ) և 124—150 (Զեչհնական ադաթ) բայ ենք թողել։

§§ 1—65 յօդւածների կարգը մենք ճշդութեամբ պահել ենք։ Ձիշդ է՝ նրանցից ոմանք անմիջական կապ չունեն աւանդութեան հետ, բայց որպէսզի շարադրութիւնը չը խանգարւի, այդպիսիների բովանդակութիւնը սեղմած ոճով պատմել ենք իւրաքանչիւրն իր տեղում [ ] նշանների մէջ։

Այդպիսի համառօտութեան[1]) ենթարկւել են §§ 14—19, 21—22, 32—61, իսկ անփոփոխ պահել ենք միայն §§ 1—13, 20, 23—31 և 62—65։

Ինչ-ինչ հարցեր կը գտնի ընթերցողը հայերէն թարգմանութեան կցած մեր Նկատողութիւնների մէջ (Ա.—ԼԳ, էջ 27—46)։ Նրանց լուսաբանութիւնը հարկաւ աւելի ընդարձակ էջերի նիւթ կարող էր լինել, սակայն՝ ինչպէս շատ տեղ, նոյնպէս այդ անգամ աշխատել ենք համառօտաբոյս լինել հրատարակութեան նիւթականից ճնշւելով։

Ինչպէս նրանք, նոյնպէս և Յաւելւածները (Ա.—Դ, էջ 47—71), բացի բուն Ցիշատակարանի անբացատրե-

[1]) Այդ համառօտութիւնն իր սիրալիր աջակցութեամբ արդարագրել է Բժ. Ն. Ա. Եարմիչեան, որին և յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

ւած խնդիրները շօշափելուց, նպատակ ունէին վկայելու թէ հայ-լուսնական գրականութիւնը որքան մանուկ և կուսական է և որքան ընդարձակ է նրա հորիզոնը։ Հուսկ բանի՝ էջ 72 ունի մի ազգագրական քարտէզ, որի չնչին դիրքն ու համեստութիւնը ընթերցողների առաջ արդարացնելու համար միայն մի խօսք ունենք—«Որքան կարեմ՝ զայն առնեմ»։

ԳՐ. ՏԷՐ-ՊՕՂՈՍԵԱՆ

Նկատելով, որ մեր աղբիւրները մեծ մասամբ իրենց տեղում նշանակւած են, այստեղ թւում ենք նրանցից այնպիսիները միայն, որոնք կամ համառօտ ենք յիշել և կամ մեկից աւելի հրատարակութիւն ունեն։

1. Акты, Собраніе Кавк. Арх. Коммисіи.
2. Бутковъ П., Матеріалы для Новой Исторіи Кавказа I—II, С.П.Б. 1869.
3. Бѣляевъ Д., Ежедневные и воскресные пріемы Византійскихъ царей, С.П.Б. 1893.
4. Вѣстникъ Импер. Рус. Геогр. Об-ва.
5. „Вѣстникъ Европы„, 1886.
6. Географическое и Статич. описаніе о Грузіи, С.П.Б. 1808, изд. Акад. Наукъ.
7. Гакстгаузенъ А., Закавказскій Край I—II Москва, 1857.
8. Дубровинъ Н., Исторія войны и владыч. русскихъ на Кавказѣ.
9. Записки Императорской Академіи Наукъ.
10. Ковалевслій М. М., Родовой бытъ I—II 1905, С.П.Б.
11. „ Законъ и обычай на Кавказѣ, I—II, 1890, С.П.Б.
12. „ Очерки происхожденія и развитія семьи, 1896, С.П.Б.
13. Кулишъ П., Записки о Южной Россіи, С.П.Б. 1856,
14. Масловскій, Привеллигированныя сословія Кабардинскаго Округа.
15. Миллеръ Вс., Осетинскіе Этюды, I—III, 1883—7.
16. Надеждинъ П. П., Кавказскій край, Тула, 1901.
17. Сборникъ Свѣдѣній о Кавказскихъ Горцахъ.
18. „ „ о Терской Области.
19. „ „ о Кавказѣ.

20. Сборникъ Матеріаловъ для описанія мѣст. и племенъ Кавказа.
21. Ставропольскія Вѣдомости.
22. Тайлоръ Эд., Первобытная Культура, 1872.
23. Терскій Сборникъ.
24. Терскія Вѣдомости.
25. Яновскій А., Обозрѣніе Россійскихъ Владѣній за Кавказомъ, 1836, С.П.Б.
26. *Ագաթանգեղոս, Պատմութիւն, 1809 Թիֆլիս.*
27. *Ասողիկ, Պատմութիւն, 1885, Պ.-Բուրգ.*
28. *Արխատակէս Լատիվկրացի, Պատմ., 1844, Վիենաիկ.*
29. *Կիրակոս Գանձակեցի, Պատմ., 1858, Մոսկվա.*
30, *«Հանդէս Ամսօրեայ» 1900—1911.*
31. *Հեթում պատմիչ Թաթարաց, 1842, Վիենաիկ.*
32. *Մատթէոս Ուռհայեցի, 1898, Վաղարշապատ.*
33. *Յովհաննէս Կաթողիկոս, Պատմութիւն, 1853, Մոսկվա*
34. *Սմբատ պատմիչ, Պատմ., 1856, Մոսկվա.*
35. *Վարդան վարդապետ, Հաւաքումն Պատմութեան, Վիենաիկ, 1862.*
36. *Օրբելեան Ստեփ., Պատմ. Սխտական, 1911 Թիֆլիս.*

Ա.Զ.Դ. Խնդրում ենք «Լեռնականքի» քննադատներին ուղարկել մեզ նշանակած հասցէով իրենց քննադատութիւններից մի օրինակ հետևակ պրակում ամփոփելու համար։

Վ Ր Ի Պ Ա Կ Ն Ե Ր

Էջ	տող	սխալ	ուղիղ
ԺԱ.	37	էջ 61	էջ 62
Լ.Դ.	38	զուգորդում են	զուգորդւում են
8	13	Туганѣ	Тугане
11	13	որսորդների	կամաւորների
14	30	Туганѣ	Тугане
18	11	земелъ	земель
19	11	արտաքսում է	արտաքսւում է
62	7	народныхъ	народныхъ

ԿԱՊԻՏԱՆ ՆՈՐԴԵՆՍՏՐԵՆԳԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

СВѢДѢНІЯ

Объ адатѣ или судѣ по обычаямъ кавказскихъ горцевъ Владикавказскаго округа (осетинскихъ обществъ Тагаурскаго, Куртатинскаго и Аллагирскаго) 1844 года.

ПРЕДИСЛОВІЕ

§ 1. Жители Владикавказскаго округа состоятъ изъ двухъ главныхъ племенъ: осетинскаго и чеченскаго. Главное различіе между этими племенами состоитъ въ языкѣ и во внутреннемъ раздѣленіи на сословія. Обычаи же и обряды ихъ весьма сходны.

§ 2. Народы осетинскаго племени, обитающіе на сѣверной покатости Кавказскаго хребта, по лѣвому берегу Терека, отъ Казбека до равнинъ Большой Кабарды, суть: Тагаурцы, Куртатинцы и Аллагирцы.

ГЛАВА I.

Раздѣленіе каждаго общества или племени на сословія; права и обязанности каждаго сословія.

А. Тагаурское Общество,[1])

§ 3. Тагаурское общество раздѣляется на четыре сословія:

I. Узданьлагъ (дворянское сословіе).

II. Фарсаглагъ (сословіе вольныхъ людей).

[1]) Общество это называется такъ только у грузинъ и русскихъ, сами же они называютъ себя Тагсате.

ՏԵՂԵԿՍՏԻ

Ադաթի կամ դատաստանի մասին, համաձայն վլադիկավկազի շրջանում ապրող վովկաի լեռնականների սովորութեան, այն է՝ թագաւորեան, կուրտատեան եւ Ալագիրեան օս հասարակութիւնների, 1844 թ.:

ԵՍ ՈՒ ՆԱԽԱՍԱՑ

§ 1. *Վլադիկավկազի շրջանի բնակիչները բաղկացած են երկու գլխաւոր ցեղից —օս և չեչեն: Այդ ցեղերի գլխաւոր տարբերութիւնը նրանց լեզուն է և ներքին կեանքի դասակարգային բաժանումը: Իսկ նրանց սովորութիւններն ու արարողութիւնները շատ նման են իրար:*

§ 2. *Օս ցեղի ժողովուրդները, որոնք բնակւում են կովկասեան լեռնաշղթայի հիւս. լանջերին, Տերեկ գետի ձախ ափի երկարութեամբ, սկսած Կազբէկից մինչև Մեծ-Կաբարդայի հարթութիւնները,—սորա են. Թագաւորեան, Կուրտատեան(ա) և Ալագիրեան(բ):*

ԳԼՈՒԽ I.

Իւրաքանչիւր հասարակութեան կամ ցեղի դասակարգային բաժանումը: Ամեն մի դասակարգի իրաւունքն ու պարտաւորութիւնները:

Ա. ԹԱԳԱՒՈՐԵԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ[1])

§ 3. *Թագաւորեան(գ) հասարակութիւնը բաժանւում է չորս դասակարգի.*

I. *Ուզդանլագ (ազնւական դասակարգ):*

II. *Փարսագլագ (ազատ մարդկանց »):*

[1]) *Այդ հասարակութեան այդպէս են անւանում միայն վրացիները և ռուսները, իսկ նրանք իրենք իրենց անւանում են Թագաւաէ(գ):*

III. Кавдасардъ (сословіе дворовыхъ людей).
IV. Гурзіакъ (сословіе рабовъ).

§ 4. Сословіе узданьлагъ состоитъ изъ 11-ти фамилій, а именно: Тлате, Кондѣхе, Алдате, Тугане, Тхосте, Мамсоре, Есене, Канукое, Санаи, Дударе и Дзантіе. Другихъ узданьлагскихъ фамилій нѣтъ. Ни одна изъ этихъ 11-ти фамилій не считается старшей, ни младшей, а всѣ онѣ находятся въ одинаковой степени старшинства.

Права свои на узданьлагское достоинство фамиліи эти основываютъ на слѣдующемъ народномъ преданіи.

Тагауръ[2]), родоначальникъ этого народа, былъ, неизвѣстно когда, и при какомъ царѣ, наслѣдникомъ армянскаго престола. Когда по смерти отца ему, какъ старшему сыну, достался престолъ, то братья его отъ другой матери, желая воцарить старшаго изъ нихъ, возмутили народъ противъ Тагаура и хотѣли убить его.

Тагауръ, видя неминуемую гибель свою, бѣжалъ изъ Арменіи къ иронамъ или осетинамъ, жившимъ въ горахъ на сѣверъ отъ Мингреліи и Имеретіи. Онъ привелъ туда съ собою нѣсколько дворовыхъ людей (кавдасардовъ) и привезъ много денегъ и дорогой посуды, состоящей изъ небольшихъ круглыхъ серебрянныхъ столовъ, котловъ, большихъ и

[2]) Армянское слово тагауръ значитъ по русски: коронносецъ—наслѣдникъ престола.

III. *Կավդասարդ (ծառաների դաս.)։*
IV. *Գուրզիակ (սարուկների »)(ե)։*

§ 4. *Ուզդանլագ դասակարգը բաղկացած է 11 անից(զ), այն է՝ Թլաթէ(է), Կոնդեխէ, Ալդատէ, Թուգանէ, Տխոստէ, Մամսորէ, Եսենէ, Կանուկօէ, Սանայի, Դուդարէ և Զանտիէ։ Ուրիշ ուզդանլագ աներ չը կան։ Այդ տասնմէկ տներից ոչ մէկը չի համարւում ոչ աւագ և ոչ կրտսեր, այլ նրանք բոլորն ունին աւագութեան միատեսակ աստիճան։*

Այդ տները հետևեալ ժողովրդական աւանդութեան վրա են հիմնում իրենց ուզդանլագութեան արժանիքը։

Թագաւորը[2]), այդ ժողովրդի ցեղապետը, յայտնի չէ թէ երբ և ու՞ր թագաւորի ժամանակ, հայոց գահի ժառանգն էր։ Երբ, հօր մահից յետոյ, գահն անցաւ Թագաւորին, իբրև աւագ որդուն, նրա խորթ մօրից ծնւած եղբայրները, ցանկանալով իրենցից աւագին նստեցնել գահի վրա, ժողովրդին ղրդեցին Թագաւորի դէմ և կամեցան նրան սպանել։

Թագաւորը, տեսնելով իր անխուսափելի կորուստը, Հայաստանից փախաւ իբօննների կամ օսերի մօտ, որոնք ապրում էին Մինգրելիայից և Իմերեթիայից դէպի հիւսիս սարերի մէջ։ Նա իրեն հետ տարաւ սարերը մի քանի ծառաներ (կավդասարդ) և շատ փող և թանկագին ամանեղէններ, այն է՝ փոքրիկ արծաթեայ բոլորաձև սե-

[2]) *Հայոց Թագաւոր բառը ռուսերէն նշանակում է թագակիր—գանաժառանգ (Ը)։*

малыхъ чашъ и прочаго. Ироны, узнавъ о происхожденіи Тагаура, сдѣлали его своимъ вождемъ. Тагауръ тамъ женился и имѣлъ двухъ сыновей: Камбія и Тотека. Камбій имѣлъ трехъ сыновей: Тлате, Алдате и Азнауре; Тотекъ одного Сане.

По какимъ-то ссорамъ съ иронами эти четыре внука тагауровы перешли отъ нихъ съ своими людьми и имуществомъ въ куртатинское ущелье, гдѣ и по нынѣ сохранились развалины ихъ замка.

Поссорившись впослѣдствіи съ куртатинцами, тагаурцы переселились въ сосѣдственное ущелье, прозванное отъ ихъ народа Тагаурскимъ. Съ ними туда пришли ихъ дворовые люди (кавдасарды), купленные рабы (гурзіаки) и присоединившіеся къ нимъ изъ разныхъ племенъ вольные люди (фарсаглаги). Всѣ эти люди поселились на рѣкѣ Дарговсѣ, гдѣ тогда не нашли никакихъ жителей.

Съ размноженіемъ тагаурскаго народа, ему стало тѣсно на рѣкѣ Дарговсѣ. Поэтому избытокъ населенія разошелся въ ближайшія пустынныя ущелья; причемъ девять правнуковъ тагауровыхъ дали начало девяти узданьлагскимъ фамиліямъ: 1) Тлата, 2) Кондѣха (дѣти Тлата, сына Камбіева, сына Тагаурова),

դաններ, կաթսաներ, մեծ ու փոքր թասեր և այլն(թ)։ Երբ իրօնները տեղեկացան Թագաւորի բարձր ծագման մասին, նրան իրենց վրա առաջնորդ դրին։ Այնտեղ Թագաւորը ամուսնացաւ և ունեցաւ երկու որդի՝ Կամբի և Թոթեկ անունով։ Կամբին ծնաւ երեք որդի՝ Թլաթէ, Ալդատէ և Ազնաուրէ, իսկ Թոթեկը՝ մէկ—Սանէ։

Իրօնների հետ ինչ-ինչ վէճեր ունենալով, Թագաւորի այդ չորս թոռները տեղափոխուեցին, իրենց մարդկանց և կայքը վերցնելով, կուրտատեան ձորը, ուր մինչև հիմա էլ գտնւում են նրանց ամրոցի աւերակները։

Այնուհետև կուրտատների հետ էլ կռուելով, Թագաւորեաններն գաղթեցին դրացի ձորը, որը նրանց անունով էլ կոչուեց Թագաւորեան(ժ)։ Նրանց հետ եկան նաև նրանց ծառաները (կավդասարդները), զննած ստրուկները (գուրդիակները) և զանազան ցեղերից նրանց հետ միացած ազատ մարդիկ (փարսագլագները)։ Նրանք բոլորը բնակութիւն հաստատեցին Դարգովս գետի ափին, չգտնելով այնտեղ և ոչ մի բնակիչ։

Երբ Թագաւորեան ժողովուրդը շատացաւ, Դարգովս գետի հովիտը չը բաւականացաւ նրանց։ Ուստի ազգաբնակչութեան աւելացած մասը տարածուեց մերձակայ դատարկ ձորերը, և այդ ժամանակ էլ Թագաւորի իննը ծոռները սկիզբ դրին իննը ուզդանլագ անների, այն է՝ 1) Թլաթա,

3) Алдате, 4) Тугане, 5) Тхосте (дѣти Алдата, сына Камбіева, сына Тагаурова), 6) Мамсоре, 7) Есене, 8) Канукое (дѣти Азнаура, сына Камбіева, сына Тагаурова) и 9) Санаи (сына Сана, сына Тотека, сына Тагаурова).

Эти девять фамилій расположились жить: Тлате на рѣчкѣ Гизильдонѣ, Кондѣхе на рѣчкѣ Фридонѣ, Алдате, Тхосте и Мамсоре остались въ селеніи Дарговсѣ на рѣчкѣ того же имени, Туганѣ на рѣчкѣ Тиленкау, Есене на рѣчкѣ Каурадонѣ, Канукое на рѣчкѣ Верхняя Кубань, Санаи на рѣчкѣ Канидонѣ.

Скоро послѣ прибытія туда тагаурцевъ, переселилась въ ихъ сосѣдство, и въ это же ущелье, почетная осетинская фамилія Дударе. Тагаурскіе узданьлаги, по уваженію къ ея происхожденію, связамъ и способамъ, приняли ее въ свой народъ и въ свое сословіе уздальлагъ.

Такимъ образомъ, фамилія Дударе составила 10-ю фамилію тагаурскихъ узданьлагъ и стала на равнѣ съ прочими охранять и исправлять горную дорогу, пролегающую въ ихъ ущельи, и получить 10-ю часть сбора, взимаемаго съ купцовъ и товаровъ, слѣдовавшихъ этою дорогою.

2) Կոնդեխա (Թագաւորի որդու Կամբիի որդու Թլաթի որդիները), 3) Ալդատէ, 4) Թուգանէ, 5) Տխոսատէ (Թագաւորի որդու Կամբիի որդու Ալդատի որդիները), 6) Մամսորէ, 7) Եսենէ, 8) Կանուկօէ (Թագաւորի որդու Կամբիի որդու Ազնաուրի որդիները) և 9) Սանայի (Թագաւորի որդու Թոթեկի որդու Սանէի որդին)(ԺԱ)։

Այդ իննը տները տեղաւորուեցին այսպէս. Թլաթէ՝ Ղզլ-դոն գետակի, Կոնդեխէ՝ Փրիդոն գետակի հովիտներում, Ալդատէ, Տխոսատէ և Մամսորէ ճնշին Դարգովս գիւղում նոյնանուն գետակի ափին, Թուգանէ՝ Տիշենկաու գետակի, Եսենէ՝ Կաուրադոն, Կանուկօէ՝ վերին Կուբան և Սանայի՝ Կանիդոն գետակների հովիտներում(ԺԲ)։

Շատ չանցաւ Թագաւորեաններից այդ վերաբնակութիւնից, շուտով եկաւ նրանց դրացի և միևնոյն ձորը մի օսական պատւաւոր տուն Դուդարէ անունով։ Թագաւորեան ուզդանլագները յարգելով նրա ծագումը, կապերը և ընդունակութիւնները, նրան ընդունեցին իրենց ժողովրդի և իրենց ուզդանլագ դասակարգի մէջ։

Այսպիսով Դուդարէ տունը Թագաւորեան ուզդանլագների 10-րդ տունն եղաւ և սկսեց միւսների հետ հաւասարապէս պահպանել և վերանորոգել նրանց ձորի միջով անցնող լեռնային ճանապարհը, և ստանալ նոյն ճանապարհով անցնող ապրանքներից և վաճառականներից գանձուղ տուրքի 10-րդ մասը(ԺԳ)։

Въ царствованіе Императрицы Екатерины II, при первомъ основаніи старой военногрузинской дороги, русское начальство на Кавказѣ, желая обезпечить это сообщеніе съ Грузіей отъ набѣговъ хищниковъ, пригласило тагаурцевъ выселяться изъ ихъ ущелья на плоскость, лежащую впереди Кавказскихъ горъ.

Многіе тагаурскіе узданьлаги вышли на нее съ своими кавдасардами и охотниками изъ вольныхъ людей (фарсаглагами), основались тамъ жительствомъ и заняли мѣста, которыми и по нынѣ владѣютъ. Часть же ихъ фамиліи осталась по прежнему въ тагаурскомъ ущельи. Тагаурцы заняли на плоскости пространство: съ одной стороны отъ рѣчки Майрамъ-Адага до рѣчки Камбилеевки и отъ ней до старой военно-грузинской дороги, идущей отъ Владикавказа черезъ укрѣпленіе Елисаветинское на укрѣпленіе Константиновское; съ другой стороны, отъ передовыхъ Кавказскихъ горъ до Кабардинскаго хребта.

Около времени переселенія тагаурцевъ на плоскость прибыла въ ихъ ущелье изъ-за Кавказскихъ горъ осетинская узданьлагская фамилія Дзантіе изъ рода Агузовыхъ. Она поселилась на незанятыхъ никѣмъ мѣстахъ, между границами тагаурцевъ и куртатинцевъ, а частію

Եկաթերինէ II Կայսրուհու թագաւորութեան ժամանակ, երբ հիմնում էին առաջին անգամ հին ռազմավիրական ճանապարհը, Կովկասի ռուսական իշխանութիւնը, ցանկանալով Վրաստանի հաղորդակցութեան այդ գիծը ապահովել աւազակներից, թագաւորեաններին հրաւիրեց(ԺԴ) դուրս գալ իրենց ձորից և բնակուել այն հարթութեան վրա, որը տարածուում է Կովկասեան սարերի դիմացը։

Թագաւորեան ուզդանլագներից շատերը իջան հարթութիւնը իրենց կավդասարդների և որսորդների հետ, որոնք ազատ դասից՝ փարսագլագներից էին ծագում, հիմնեցին իրենց նոր բնակատեղին, և գրաւեցին այն տեղերը, ուր մինչև այժմ էլ տիրում են(ԺԵ)։ Իսկ նրանց մի մասը առաջուայ նման մնաց Թագաւորեան ձորում։ Հարթութեան վրա թագաւորեանները գրաւեցին մի կողմից Մայրամ-Ադագա գետակից սկսած մինչև Կամբելէևկա գետակը, և այնտեղից էլ մինչև հին ռազմավիրական ճանապարհը, որ Վլադիկավկազից գալով անցնում է Եղիսաբէթեան և Կոստանդինեան ամրոցներով. միւս կողմից՝ լեռնաշղթայի առաջնակարգ դիրքից մինչև Կաբարդինեան գագաթը(ԺԶ)։

Երբ թագաւորեանները գաղթում էին դէպի հարթութիւնը, նրանց ձորն եկաւ Կովկասեան սարերի միւս կողմից օսական ուզդանլագ Զանտիէ տունը Աղուզեանների ցեղից։ Նա հաստատուեց թագաւորեանների և կուրտատեանների սահմանների մէջ տեղը,

перешла потомъ на плоскость, гдѣ и теперь имѣютъ двѣ деревни (аула). Тагаурскіе узданьлаги, признавая ихъ одинаковаго съ собою сословія, вступили съ ними въ родство. По сей причинѣ и по праву имѣть кавдасардовъ, фамилія Дзантіе составляетъ 11-ю фамилію тагаурскихъ узданьлагъ; но объ ней не было упомянуто въ прошеніи тагаурцевъ на Высочайшее имя, поданномъ его сіятельству господину военному министру въ 1842 году, потому что фамилія Дзантіе, переселившаяся къ тагаурцамъ въ недавнее время, не имѣла права на участіе въ дѣлежѣ пошлинъ, взимавшихся тагаурскими узданьлагскими фамиліями до 1830 года съ купцовъ и провозимыхъ по ущелью ихъ товаровъ.

§ 5. Фарсаглаги[3]) составляютъ самое многочисленное сословіе народа. Они по настоящему не тагаурцы, а переселенцы отъ разныхъ другихъ племенъ, принятые тагаурцами и съ давнихъ временъ включенные въ ихъ общество.

§ 6. Кардасарды[4]) происходятъ отъ слугъ, привезенныхъ узданьлагами при переселеніи

3) Фарсаглагъ значитъ по русски посторонній или вольный человѣкъ и происходитъ отъ словъ фарсагъ—посторонній, вольный и лагъ—человѣкъ.

4) Кавдасардъ значитъ по русски въ ясляхъ рожденный и происходитъ отъ словъ кавдасъ—ясли и ардъ—рожденный, родъ.

ուր ոչ ոք չէր բնակւած. յետոյ նրա մի մասը իջաւ հարթութիւնը, ուր այժմ էլ ունի նա երկու աւան (աուլ)։ Թագաւորեան ուզդանլագները նրանց հաւասարացրին իրենց դասակարգին և ցեղակցութեան մէջ մտան նրանց հետ։ Թէ այս պատճառով և թէ կավդասարդ ունենալու իրաւունքով Զանտիէ տունը թագաւորեան ուզդանլագների 11-րդ տունը դարձաւ. սակայն նա չէ յիշւած թագաւորեանների այն խնդրի մէջ (ժէ), որ յանուն Կայսեր մատուցին նրանք նորին պայծառափայլութեան պարոն պատերազմական նախարարին 1842 թւին, որովհետև Զանտիէ տունը, որ մօտ ժամանակներս էր գաղթել թագաւորեանների հողը, իրաւունք չունէր բաժին ստանալու այն տուրքերից, որոնք վերցնում էին թագաւորեան ուզդանլագները վաճառականներից և նրանց ձորով անցնող ապրանքներից մինչև 1830 թիւը։

§ 5. Փարսագլագները[3]) ժողովրդի ամենաբազմամարդ դասակարգն են։ Նրանք իսկական թագաւորեաններ չեն, այլ զանազան օտար ցեղերից գաղութներ են, որոնց ընդունել են թագաւոր[illegible] հնուց ի վեր իրենց հասարակութեան մէջ են առել։

§ 6. Կավդասարդները[4]) ծագում են նախ՝ այն ծառաներից, որոնց ուզդանլագները բե-

3) Փարսագլագ ռուս. նշանակում է կողմնակի կամ ազատ մարդ և կազմւած է փարսագ՝ «կողմնակի», «ազատ» և լագ՝ «մարդ» բառերից։

4) Կավդասարդ ռուս. նշանակում է մսուրների մէջ ծնւած և կազմւած է կավդաս՝ «մսուր» և արդ՝ «ծնւած», «ծնունդ» բառերից (ժԸ)։

въ тагаурское ущелье, и отъ дочерей фарсаглаговъ въ такомъ случаѣ, когда узданьлагъ купитъ у фарсаглага дочь его не въ жены а въ работницы. Тогда дѣти, рожденныя ею, будутъ кавдасарды, принадлежащіе узданьлагу, хозяину ихъ матери.

§ 7. Гурзіаки[5]) происходятъ отъ людей пріобрѣтенныхъ покупкою, и отъ военно-пленныхъ.

§ 8. Узданьлаги, какъ принадлежащіе къ высшему сословію, пользуются уваженіемъ прочаго народа.

§ 9. Узданьлагское достоинство не пріобрѣтается ни покупкою, ни заслугами, а остается единственно въ родѣ этихъ 11 фамилій, признанныхъ народомъ въ этомъ достоинствѣ издревле.

§ 10. Одни только узданьлаги имѣютъ право владѣтъ кавдасардами.

§ 11. Узданьлаги могутъ владѣть гурзіаками.

§ 12. Узданьлаги имѣютъ право безъ суда наказывать принадлежащихъ имъ кавдасардовъ и гурзіаковъ.

§ 13. Одни только узданьлаги были первоначально владѣльцами земли, занятой этимъ народомъ въ тагаурскомъ ущельи, но впослѣдствіи 8 фамилій, т. е. фамиліи: Тлате, Кондѣхе, Алдате, Туганѣ, Тхосте, Мамсоре, Есе-

5) Гурзіакъ значитъ по русски изъ грузинъ и происходитъ отъ словъ гурзи—грузинецъ и акъ-изъ.

ըին իրենց հետ Թագաւորեան ձորը, և երկրորդ՝ այնպիսի փարսագլագ աղջիկներից որոնց գնում էր ուզդանլագը փարսագլագից ոչ թէ՛ի կնութիւն, այլ՛ի ծառայութիւն։ Այդպիսի գնած աղջիկներից ծնած երեխաները դառնում էին կավդասարդ և պահանում էին ուզդանլագին, այն է՝ իրենց մօր տիրոջը։

§ 7. *Գուրգիակները[5]) ծագում են այն մարդկանցից, որոնք գնելով և պատերազմական գերութեամբ են ձեռք բերւած։*

§ 8. *Ուզդանլագները, իբրև բարձր դասակարգ, վայելում են մեծացած ժողովրդի յարգանքը։*

§ 9. *Ուզդանլագի արժանաւորութիւնը ձեռք չի բերւում ոչ փողով և ոչ էլ ծառայութիւնով, այլ միայն այդ 11 տոհմերին յատուկ, որոնց հնուց ի վեր ժողովուրդը ճանաչել է այդ արժանաւորութեամբ։*

§ 10. *Միմիայն ուզդանլագներն իրաւունք ունին կավդասարդ պահելու։*

§ 11. *Ուզդանլագները կարող են ունենալ գուրգիակներ։*

§ 12. *Ուզդանլագները իրաւունք ունին առանց դատարանի պատժել իրենց պահանող կավդասարդներին և գուրգիակներին։*

§ 13. *Միայն ուզդանլագներն էին սկզբում այն երկրի տէրը, որը Թագաւորեան ձորում բնակւած էր այդ հասարակութիւնով. բայց վերջերը հետևեալ ութ տոհմերը— Թլաթէ, Կոնդեխէ, Ալդատէ, Թուգանէ, Տը-*

5) *Գուրգիակ (ժ.Թ) ռուս. նշանակում է «վրացուց» և կազմւած է գուրգի «վրացի» բառից և ակ «ից» մասնիկից։*

не и Санаи, продали фарсаглагамъ въ полное потомственное владѣніе участки земли сими занимаемые, и удержали за собою только тѣ участки земли, которые были занимаемы ими самими или ихъ кавдасардами. Такимъ образомъ, эти 8 фамилій лишились всякаго платежа подати отъ фарсаглаговъ за пользованіе землями въ горахъ.

§ 14. [Фамиліи Дударе и Канукое взимаютъ отъ фарсаглаговъ земельныя подати, т. к. не распродали имъ свои участки].

§ 15. [Фамилія Дударе получаетъ отъ своего фарсаглага: весною барашка, осенью одного барана, арбу сѣна, бурдюкъ сыру и 10 ф. коровьяго масла; а во время полевыхъ работъ съ каждаго двора по одному рабочему и переднюю ляжку съ каждаго зарѣзаннаго скота.

§ 16. [Фамилія Канукое получаетъ то же что и Дударе, но вмѣсто 10 ф. коровьяго масла получаетъ четверть пшеницы, кромѣ того, каждый новый поселенецъ въ его аулѣ обязанъ уплатить ему одну корову].

§ 17. [Эти 8 фамилій также получаютъ подати въ случаѣ образованія новыхъ поселковъ на принадлежащихъ имъ равнинахъ].

§ 18. [Фамилія Дударе и на низменности

խոստէ, Մամսորէ, Եսենէ և Սանայի, ծախեցին իրենց բնակավայր հողերը փարսագլագներին ժառանգաբար տիրելու լրիւ իրաւունքով և միայն այն հողաբաժինները պահեցին, որոնց վրայ բնակւած էին կամ հէնց իրենք կամ նրանց կավդասարդները։ Այդ կերպով այդ ութ տները զրկւեցին այն բոլոր հողային հարկերից, որը փարսագլագները առաջ վճարում էին նրանց՝ հողերի համար։

§ 14. [*Դուդարէ և Կանուկօէ տները իրենց փարսագլակներից հողի տուրք են ստանում, որովհետև իրենց կալւածները չը ծախեցին նրանց*]։

§ 15. [*Դուդարէ տունը ստանում է իր փարսագլակից հետևեալ տուրքը. գարնանը մի գառ, աշնանը մի ոչխար, մի սայլ խոտ, մի մոթալ պանիր, 10 գրվ. կովի իւղ, ամեն մի ընտանիքից մի բանւոր՝ վարի, հնձի և խոտհարի ժամանակ, և մի սացուի կուռը*](1)։

§ 16. [*Կանուկօէ տունը նոյն տուրքըն է ստանում, ինչ որ Դուդարէն։ Բայց 10 գրվ. կովի իւղի տեղ վերցնում է չետվերա ցորեն. այլև նրա տուրը գաղթող ամեն մի նորեկ մի կով է տալիս սկզբում*]։

§ 17. [*Վերևում յիշւած ութ տները հարթուքեան վրա նոյնպէս տուրք են ստանում, երբ թոյլ են տալիս, որ իրենց բնակած հողի վրա նոր գաղութ հաստատուի*]։

§ 18. [*Դուդարէ տունը հարթուքեան*

1183 — 10872
ՀԱՅԿ Ա Ս Ր Գ Ա Կ Ա Ն ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
БИБЛИОТЕКА
Ин-т Востоковед. АН Арм. ССР
ՀԱՅԿ Ա Ս Ր Գ Ա Կ Ա Ն ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
Отделение Общественных наук
ԳՐԱԴԱՐԱՆ
ЛИОТЕКА

получаетъ тоже самое, что и въ нагорной полосѣ].

§ 19. [Фарсаглагъ имѣетъ извѣстныя обязанности передъ узданьлагомъ, когда живетъ въ его аулѣ].

§ 20. Безъ позволенія узданьлага, фарсаглагъ не можетъ селиться на его землѣ или въ его аулѣ.

21. [Фарсаглагъ если не исполняетъ своихъ обязанностей передъ узданьлагомъ выселяется изъ его земель].

§ 22. [Узданьлагъ обязанъ защищать жизнь и имущество своего фарсаглага].

§ 23. Званіе фарсаглага наслѣдственное и никто изъ кавдасардовъ или гурзіаковъ не можетъ пріобрѣтать это званіе ни покупкою, ни заслугами.

§ 24. Фарсаглаги, какъ совсѣмъ вольные люди, состоятъ въ зависимости отъ узданьлаговъ только въ такомъ случаѣ, если они живутъ на земляхъ, принадлежащихъ симъ послѣднимъ, и даже тогда на взаимныхъ только условіяхъ. Фарсаглаги имѣютъ право переходить отъ одного узданьлага къ другому, когда имъ это угодно.

§ 25. Фарсаглаги имѣютъ право владѣть собственною землею, пріобрѣтенною покупкою или полученною по наслѣдству.

§ 26. Фарсаглаги могутъ имѣть гурзіаковъ пріобрѣтенныхъ покупкою, но дѣти этихъ гурзіаковъ будутъ фарсаглаги, т. е. вольные

վրա էլ ստանում է նոյնը, ինչ որ սարում է ստանում]։

§ 19. [*Փարսագլագը որոշ պարտաւորութիւններ ունի ուզդանլագի առաջ, երբ նրա գիւղումն է ապրում]։*

§ 20. *Առանց ուզդանլագի թոյլտուութեան, փարսագլագը չի կարող բնակուել նրա հողի վրա կամ նրա սուրում։*

§ 21. [*Փարսագլագը, եթէ իր պարտքը դէպի ուզդանլագը չի կատարում, արտաքսում է նրա հողից]։*

§ 22. [*Ուզդանլագը պարտաւոր է իր փարսագլագի կեանքի և գոյքի ապահովութիւնը երաշխաւորել]։*

§ 23. [*Փարսագլագի կոչումը ժառանգական է և ոչ մի կավդասարդ կամ գուրգիակ չի կարող այդ կոչումը ձեռք բերել ո՛չ փողով և ո՛չ էլ ծառայութեամբ։*

§ 24. *Փարսագլագները, իբրև բոլորովին ազատ մարդիկ, ուզդանլագից կախուած ունին այն դէպքում միայն, երբ նրանք ապրում են ուզդանլագի հողի վրա՝ այն էլ փոխադարձ պայմաններով։ Փարսագլագները իրաւունք ունին մի ուզդանլագից միւսին անցնել, երբ որ էլ ցանկանան։*

§ 25. *Փարսագլագները իրաւունք ունին սեպհական հող ունենալու, գնելով կամ ժառանգութիւն ստանալով։*

§ 26. *Փարսագլագները կարող են գուրգիակներ ունենալ, եթէ կըգնեն. բայց այդպիսի գուրգիակների որդիները փարսագլագ*

люди, а не гурзіаки или рабы.

§ 27. Кавдасардовъ фарсаглаги имѣть не могутъ.

§ 28. Званіе кавдасардъ наслѣдственное и никто изъ гурзіаковъ не можетъ вступить въ сословіе кавдасардъ.

§ 29. Кавдасардъ есть собственность той узданьлагской фамиліи, къ которой мать его принадлежала, и не можетъ быть никому ни проданъ, ни уступленъ.

§ 30. Онъ не можетъ выйдти изъ этого сословія ни покупкою ни заслугами.

§ 31. Кавдасардъ обязанъ жить тамъ, гдѣ прикажутъ ихъ владѣльцы, и исправлять работы отъ него назначенныя.

§ 32. [Кавдасардъ можетъ купить себѣ жену; сыновья его также будутъ кавдасардами и принадлежатъ узданьлагу].

§ 33. [Кавдасардъ можетъ пріобрѣсти землю покупкой или наслѣдственнымъ путемъ].

§ 34. Кавдасардъ можетъ купить гурзіакъ, но его дѣти тоже будутъ кавдасардами и принадлежатъ узданьлагу].

§ 35. [Гурзіакъ или раба собственность своего хозяина; она можетъ быть продана и подарена или раздѣльно или же цѣлой семьей. Хозяинъ можетъ ихъ убивать по личному произволу].

կըլինեն, այսինքն՝ ազատ մարդիկ, և ոչ թէ գուրգիակ կամ ստրուկ։

§ 27. Փարսագլագները կավդասարդ ունենալ չեն կարող։

§ 28. Կավդասարդ կոչումը ժառանգական է և գուրգիակներից ոչ ոք չի կարող կավդասարդ դասակարգը մտնել։

§ 29. Կավդասարդը սեպհականութիւն է այն ուզդանլագ տան, որին պատկանելիս է եղել նրա մայրը և չի կարող ոչ ծախուել և ոչ էլ շնորհուել որևէ մէկին։

§ 30. Նա չի կարող այդ դասակարգից դուրս գալ ոչ փողով և ոչ էլ ծառայութիւնով։

§ 31. Կավդասարդները պարտաւոր են ապրել, ուր որ կըհրամայեն նրանց տէրերը և կատարել նրանց նշանակած աշխատանքները։

§ 32. [Կավդասարդը կարող է գնել կին։ բայց նրա որդիքը նոյնպէս կավդասարդ են և պատկանում են ուզդանլագին]։

§ 33. [Կավդասարդը կարող է հող ունենալ կամ գնելով կամ ժառանգելով ծնողներից]։

§ 34. [Կավդասարդը կարող է գնել գուրգիակ. նրանց որդիքը նոյնպէս կավդասարդ կըլինեն և պատկանում են ուզդանլագին]։

§ 35. [Գուրգիակը կամ ստրուկը իր տիրոջ սեփականքն է. ծախւում է, ընծայւում է հաւ-հաւ և ամբողջ ընտանիքով. կարող է սպանել իր տէրից կամայական դրդիչով]։

Б. Куртатинское Общество[6]).

§§ 36—61. [Куртатинское общество состоитъ изъ четырехъ сословій одинаковаго происхожденія и состава, какъ и тагаурскія. Различія между правами и обязанностями этихъ двухъ обществъ незначительны].

В. Алагирское Общество.

§ 62. Алагирское общество раздѣляется на 2 сословія: узданьлагъ и фарсаглагъ.

§ 63. Узданьлагское сословіе состоитъ изъ 4 фамилій, а именно: Сидамонте, Дцадарцонте, Акузате и Кусагонте.

§ 64. Алагирцы[7]) опровергая происхожденіе тагаурцевъ отъ армянъ, утверждаютъ, что всѣ эти 3 осетинскія общества, т. е. алагирцы, куртатинцы и тагаурцы, происходятъ отъ одного и того же корня и разсказываютъ о происхожденіи ихъ слѣдующее:

Въ старинное время, неизвѣстно когда, вышли изъ Мислуга (страны далеко на югѣ) три брата воеводы, по имени Осъ, Картулъ и Лекъ.

Осъ завладѣлъ страною около города Го-

[6]) Куртатинцы называютъ себя Куртате.
[7]) Алагирцы называютъ себя Уалладжиръ.

Բ. ԿՈՒՐՏԱՏԻՆՑԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ[6])

§§ 36—61. [*Կուրտատեան(իա) հասարակութիւնը չորս դասակարգ ունի, միևնոյն կազմով և ծագումից, ինչ որ տեսանք թագաւորեան հասարակութեան մէջ(իբ)։*

Նրանց իրաւունքներն ու պարտաւորութիւնները աննշան տարբերութիւն ունին թագաւորեաններից]։

Գ. ԱԼԼԱԳԻՐՑԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ(իգ)

§ 62. *Ալագիրեան հասարակութիւնը բաժանւում է երկու դասակարգի՝ ուզդանլագ և փարսագլագ։*

§ 63. *Ուզդանլագ դասակարգը բաղկացած է ընդամէնը չորս տնից, այն է՝ Սիդամոնաէ, Ձադարցօնաէ, Ակուզաաէ և Կուսագոնաէ։*

§ 64. *Ալագիրցիք[7]) հերքում են թագաւորեանների հայերից առաջ գալը և հաստատում են, որ այդ բոլոր երեք օս հասարակութիւնները, այն է՝ Ալագիրցիք, Կուրտատեան և Թագաւորեան ժողովուրդները, առաջացել են միակ մի արմատից և նրանց ծագման մասին պատմում են հետևեալը։ Հին անյայտ ժամանակներում, Միսլուգից (հեռաւոր հարաւում մի երկիր է) եկան երեք զօրաւոր(իդ) եղբայրներ՝ Օս, Քարթուլ(իե) և Լէկ անուններով։*

Օսը տիրեց Գորի քաղաքի մօտակայ

[6]) Կուրտատեաններն իրենք իրենց անւանում են Կուրտատէ։
[7]) Ալագիրցիները իրենք իրենց անւանում են Ուալլաջիր։

ры, отъ него происходятъ осетинцы; Картулъ основалъ около Тифлиса свое царство. Отъ него происходятъ карталинцы. Лекъ пошелъ дальше на востокъ и основалъ тамъ свое царство, отъ него происходятъ лезгинцы.

Нѣкоторое время послѣ прибытія Оса въ горы, персидскій шахъ Хела объявилъ ему войну, напалъ на него на деревнѣ Закай, разбилъ его войска, убилъ самаго Оса и покорилъ тамошнихъ осетинъ.

Вслѣдствіе этого сраженія сыновья Оса, по имени Осъ Багатыръ и Осъ Чегатыръ, убѣгая отъ шаха Хелы, перешли съ своими приверженцами людьми черезъ Кавказскій хребетъ и расположились въ Аллагирскомъ ущельи, гдѣ четыре внука Оса: Сидамонъ, Дзадардцонъ, Аргузонъ и Кусагонъ, для защиты противъ грузинъ и персіянъ, построили каменную стѣну, высотою въ 9 аршинъ и толщиною въ 3 аршина. Развалины этой стѣны еще видны въ Аллагирскомъ ущельи.

По какимъ то внутреннимъ распрямъ два брата, правнуки Сидамона, по имени Курта и и Тага, переселились изъ Аллагирскаго ущелья въ сосѣдственное, названное по имени Курта, Куртатинскимъ ущельемъ. Здѣсь эти брата жили долгое время мирно, выстроили каменную стѣну противъ нашестія грузинъ, построили себѣ дома и башни для общей противъ вра-

երկիրները և նրանից ծագում են Օսերը։ Քարթուլը Թիֆլիզի մօտ հիմնեց իր թագաւորութիւնը և նրանից ծագում են Կարտալինցիք։ Լէկը գնաց դէպի հեռաւոր արևելք և այնտեղ հիմնեց իր թագաւորութիւնը, նրանից էլ ծագում են Լէզգիները։

Օսը սարերը գաղթելուց յետոյ պարսից Խելա շահը պատերազմ յայտարարեց նրան, յարձակուեց նրա վրա Զակայ գիւղում[22], Չախչախեց նրա զօրքերը, Օսին էլ սպանեց, և իրեն հպատակեցրեց տեղական օսերին։

Այդ կռի հետևանքն այն եղաւ, որ Օսի որդիները, Օս-Բագաատը և Օս-Չեգաատը անունով, Խելա շահից փախչելով, իրենց կուսակից մարդկանց հետ միասին անցան Կովկասեան լեռնաշղթան[23], տեղաւորուեցին Ալլագիրեան ձորում, ուր Օսի[24] չորս թոռները, այն է՝ Սիդամոն, Զադարցոն, Արգուզոն և Կուսագոն[25] վրացիներից և պարսիկներից պաշտպանուելու համար քարէ պատ քաշեցին, իննը արշին բարձրութեամբ և երեք արշին լայնութեամբ։ Այդ պատի աւերակները դեռ երևում են Ալլագիրեան ձորում[1]։

Ներքին գժտութիւնների պատճառով, Սիդամոնի ծոռները, Կուրտա[28] և Թագա եղբայրները, գաղթեցին Ալլագիրեան ձորից՝ Կուրտայի անունով Կուրտատեան կոչուած ձորը։ Այստեղ այդ երկու եղբայրները հաշտ ապրեցին, քարէ պատ կառուցին վրացիների խուժման դէմ և աներ ու ընդհանուր բնակատեղ պաշտպանուելու համար աշտարակ-

говъ защиты. Но впослѣдствіи эти два брата поссорились между собою. Ссора кончилась тѣмъ, что Курта съ своими приверженцами выгналъ Тагу со всѣми его людьми изъ Куртатинскаго ущелья. Тогда Тага съ своими приверженцами людьми расположился въ сосѣдственномъ ущельи, названномъ по его имени Тагаурскимъ.

§ 65. Права и обязанности узданьлагскаго и фарсаглагскаго сословій и отношенія ихъ между собою совершенно тѣ же, что и у куртатинцевъ.

ներ շինեցին։ Սակայն վերջում նրանք կըռւեցին իրար հետ. կռիւը վերջացաւ նրանով, որ Կուրտան իր համախոհներով Թագային արտաքսեց իր մարդկանց հետ Կուրտատեան ձորից։ Այն ժամանակ Թագան իր համախոհներով միասին տեղաւորւեց դրացի ձորում, որ նրա անունով կոչւած է Թագաւորեան(լբ)։

§ 65. *Ուզդանլագ և փարսագլագ դասակարգերի իրաւունքներն ու պարտաւորութիւնները և իրար մէջ ունեցած փոխադարձ յարաբերութիւնը նոյն են կատարեալապէս, ինչ որ Կուրտատեաններն ունին*(լգ)։

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ
ՅԱՒԵԼՒԱԾՆԵՐ

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. (էջ. 3). Յիշած է՝ Կուրտատ, Կուրտատուլի, Կուրտատի և Կուրտատուլի ձևերով։ Ըստ կազմութեան, իբր զուգակից Թաղիադին, Ալադին և այլն անուններուն, պէտք է լինէր ուղիղը Կուրտադին։ Մենք ընտրեցինք Կուրտատեան և Թաղիադեան կրճատումը, հետևելով ժողովրդական Կուրտատէ (տեկստ. ծնթ. 6. էջ 22) և Թաղիադ սղման։ Տես ներքև՝ նկատ. ԻԱ։

Բ. (էջ 3). Օս ժողովուրդը բաղկացած է ոչ թէ երեք այլ հինգ տոհմից. ա) Թագաւորեան (Ղզըլ-Դոնի հովիտը), բ) Կուրտատեան (Փիագ-Դոնի հովիտը), գ) Ալագիրեան (Արղոնի հովիտը), դ) Դիգորեան (Ուրուխի հովիտը) և ե) Թուալեան (գլխ. լեռնաշղթայից հարաւ, Ռաչին գաւառից արևելք)։ Մաքուր օսական լեզուով խօսում են առաջին երեք տոհմերը միայն և կոչւում են իրօն. Դիգորը և Թուալը իրօն չեն, և խօսում են առաջինը մի առանձնացած և մեացած տոհմերին բոլորովին անհասկանալի բարբառով, իսկ երկրորդը՝ Թուալը, խօսում է վրացերէնով աղճատած բարբառով։ 1822 թուից սկսած երեք իրօն տոհմերը ենթարկւած էին Վլադիկավկազի կամենդանատին, Դիգորը Կաբարդայի, իսկ Թուալը Գօրիի նահանգապետին[1])։ Նորզենսարենգը միայն Վլադիկավկազի շրջանի օսերի, այն է իրօններին, պատմագիրն է։ Ծագումը, պատմական բաղդը և աշխարհագրական դիրքը այդ տոհմերին տարբեր տարբեր բնաւորութիւն են ընծրհել. Թագաւորեան տոհմը բոլորից բարձր է իր մտաւոր ընդունակութիւնով, զսպած է պահում իրան, քաջ է և ծածկամիտ. հնութեան նայում է ազատօրէն և պահպանողական չէ։ Ալագիրեան տոհմը, ընդհակառակն՝ մեղկ բնաւորութիւն ունի. ինք-

[1]) Акты, т. VI, ч. II, стр. 472, док. № 839.

նուրոյն է, դիւրագրգիռ, բարեսիրտ և պահպանողական։ Դիպուրեան տոհմը յաղթանդամ է, բարձրահասակ, զեղանի, անվեհեր և հասատատամիտ[1]։ Օսերը շատ հին ժողովուրդ են. համարւում են Ալանների սերունդը։ Նրանց լեզուն հնդեւրոպական ծագում ունի, իսկ կենցաղը՝ ցեղական կեանքի բնաւորութիւնը[2]։

Գ. (էջ 3). «Թագաւոր» բառը այլևայլ ձևով է յիշւած 18 և 19-րդ դարերում. Ակադեմիկ Հիլդենշտեդ (1771 թ.)՝ округъ Тагата, по грузински Тагаури, Тагасуръ[3]): Հակառհաուզէն (1843 թ.)՝ Тагаоръ (ռուս. թարգմ.[4])։ Ֆայֆ (1871 թ.)՝ Тагауръ[5]) և այլն։ «Թագաւոր» բառը ժողովրդական մեկնութեան է ենթարկւել սելջուկեան արշաւանքից յետոյ այսպէս. ա) Էրնէստ Ֆալը մեկնում է օսական Լեզգա «անտառ» բառից[6]։ Վարդան Բարձրբերդցին նոյնպէս «ծմակ» է յիշում. ահա նրա խօսքերը.—«Յաւուրս Խոսրովու միաբանեալ կողմն ծմակային, բիւրք երիք, ասպատակեցին Այրարատ,որ և առաքինացաւ Վահան Ամատունի,սատակելով զզօրագլուխն նոցա, զվառնայն կճատակուռ թագաւ[7])»։ Այստեղ վերյիշւած է այն պատմութիւնը, որը պատմել են Փաւստոս Գ. 7 և Խորենացի Գ. 9 գլուխների մէջ, սակայն այդ աղբիւրներում բացակայում է այն մեկնութիւնը, որը տւել է Վարդան Ալանների և Մազքութների երկրի անւան։ գ) Վերջապէս Ստեփ. Օրբէլեանը Թորգոմի ութ որդոց բաժիններդ յիշելով՝ գրում է. «Տայ զծմակային աշխարհն հիւսիսային Բարթլոսայ և այլոց եղբարցն[8])»։ Վարդանի և Օրբէլեանի բոլոր հրատարակիչները ուշադրութեան չեն արժանացրել ծմակային մակդիրը, բայց դժւար չէ եզրակացնել, որ

1) П. П. Надеждинъ, Кавк. Край, 145—152.

2) Миллеръ Вс., Осет. Эт.; Ковалевскій М. М., Родовой бытъ և այլն։

3) Географ. и статич. описаніе стр. 8 и 96.

4) Закавказскій край, II 105.

5) Сбор. Св. о Кавказѣ I. 175.

6) Терскій сборн., 1892. II. 81, прим.

7) Հաւաքումն պատմ. 45.

8) Սիսական պատմ., 368.

այդ մի ժողովրդական մեկնութիւն է՝ միջին դարերին յատուկ. նման է Նեստորի Древляне, Поляне, Խորենացու Դիմաքսեան, Սմբատ և П. Кулишъ-ի յիշած Погибка[1]) և տանի չափ ժողովրդական մեկնութիւններին, չենք յիշում Փաւստոսին, Զենոբին, Յովհան Մամիկոնեանին և այլն։ Միջին դարերում պատմիչների համար նոյնիսկ մի անհասկանալի պահանջ էին այդպիսի մեկնութիւնները. վարդան Բարձրաբերդցին, օրինակ, մի տեղ օսական «Թագա» բառը ծմակ թարգմանելուց յետոյ, միւս տեղ օսական «Ծանար» գաւառի անունը մեկնում է հայերէն «ծան» արմատից.—«զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց»[2]։ Իսկ 19-րդ դարում բացի Էրնէստ Ֆալրից, նաև Ֆայֆը[3]) Ծանար անունը համարում է Նարտ և Զակ անունների բազադրութիւնը, իսկ Նար անունը отъ имени Mares, Mardi или Нарты, և այլն և այլն[4])։

Սելջուկեան շրջանից առաջ օսական գաւառները և տոհմերը յիշւել են սուտ-Խորենացու աշխարհագրութեան և արաբական յիշատակարանների մէջ, որոնք նոյնպէս լինկատի չեն առնւած օսական հնախօսութեան հեղինակներից։ Սուտ-Խորենացու ընդարձակը գրում է.—Եւ Թակոյր և Ալանք են յետ Դիքորին, յԱրտազ աշխարհի կուկասին լերանցն, ուստի հոսի գետն Արմբխարհի կուկասին լերանցն, ուստի հոսի գետն Արմբնայ[5])»։ Համառօտի մէջ. «Թակոցիկք, Արտազք, Դուալք, Ծանարք, Ծեքան. Թագաւորեան Սարմատք ձիակերք»։ Իբն-Ռուստէ (903 թ.) յիշում է Աս-Սերիր ազգ, իսկ Իբն-Խորդադբէ՝ լեռնանցքը անւանում է Բաբ-Սահիբ-Աս-Սերիր։ Աս-Սերիր նշանակում է աթոռ, իսկ Բաբ-Սահիբ-Աս-Սերիր՝ գուռն աթոռաւորի։ Հաւանօրէն «Թագաւոր» բառի թարգմանութիւնն է

1) Записки о Южной Россіи I. 104—109, 142.

2) Հաւաքումն պատմ., 101, տես նաև վերև՝ «Զուգակշիռ»։

3) Сбор. Св. о Кавк. I, 146, II. 98, և այլն։

4) Հմմտ. Hyde Clarke-ի կարծիքը Փոքր Ասիայի տեղւոյ անունների մասին Сб. Св. о Кавк. I, 326.

5) Ռուս հինգ-վերստ. քարտէզի Армехи (Кистинка), ըստ այլոց Տերեկի կամբէլևկա վտակն է. Терскій сборн. 1892 II. 78—80.

«Սահիբ-Ա.-Սերիր», որովհետև արևելեան պալատներում բարձ ու աթոռն էր շատ անգամ մեծութեան յայտարարը և ոչ թէ թագը։ Իրն-Ռուստէ յիշում է այլ ևս, որ Ալաններըը չորս տոհմից են բաղկացած. պատիւը ու իշխանութիւնը Дахсасъ տոհմին է պատկանում. նրանց թագաւորը կոչւում է Բագաիր. թագաւորը քրիստոնեայ է, իսկ հպատակների մեծ մասը կռապաշտ[1]։ Արդ՝ լինկատի ունենալով Արաբական յիշատակարանների այն ընդհանուր բնաւորութիւնը, որ նրանք ասուններըը աղջատ և այլ և այլ ձևերով են հաղորդում՝ անճանաչելիութեան չափ հնչիւնափոխութեան ենթարկելով, թերևս Дахсасъ և թագ (կամ թաք) բառերը նոյն նկատուին, յիշեցնելով սուտ-Խորենացու Թակոցիկը։ Մի ազատ ենթադրութեամբ կարելի է Բագաիր (·—աբ-քայ—) բառը համարել բարդութիւն խազարների Բագ «թագաւոր» և օսերի ազգային անուան՝ իր բաւերի, որով Բագաիր պիտի նշանակէր թագաւոր Իրոններին։

«Թագաւորեան» ցեղանուան հնագոյն ուրիշ գործածութիւն մեզ յայտնի չէ։

Այս բոլոր ծանօթութիւնները վկայում են, որ թագադիր Թաղիադեան-Բագրատունիները լեռներն են անցել աւելի վաղ, քան սելջուկեան արշաւանքը։

Կից այն հանգամանքին, որ թագ բառը համեմատական լեզուագիտութեան մէջ ճանաչւած է իրանական լեզուի ազդեցութիւնը,[2]) յիշում ենք այստեղ նոյն բառի կիրառութիւնը յունական քաղաքակրթութեան մէջ նախ քան յունա-պարսկական յարաբերութիւնն իսկ։ VII դ. ն. ք. Թեսաղոնիկէի 4 նահանգները միացան և նրանց դաշնագրութեան պետը կոչւեց Թագոս. պաշտօնը ընտրովի էր, յատկապէս ազնւական դասից, ցմահ էր, և զինւորական բարձրագոյն իշխանութիւնը նրա ձեռքումն էր։ VI դարում այդ դաշնագրութիւնը լուծւեց և Թագոս չը կար մինչև IV դարը, երբ Յոան-նը սահեցց, որ իրեն Թագոս ընտրեն նորոգ միացեալ դաշնագրութեան համար. այդ 374 թուին էր։ Այնուհե-

[1]) Сбор. мат. для оп. м. и пл. Кавказа XXXII, 6—8.

[2]) Hubschmann H., Arm. Gram. 153.

տև Թագոսի պաշտօնը գոյութիւն ունէր թէ անկախ և թէ մակեդոնական պետերի ժամանակ, մինչև Թեսաղոնիկէի Հռոմից նւաճելը։

Այս տեղեկութիւններին զուգորդ է այն յոլովութիւնը, որ յոյները հայերին էին տալիս. նրանք ենթադրում էին, որ հայոց ծագումը Թեսալացի Ամմինէոսից է և անւանում էին նրանց Ամմինիա։

Դ. (էջ 3). Թագի սերունդ կամ ծնունդ։

Ե. (էջ 5). Ցայգի չի յիշում Դուրգիակ, այլ՝ իբրև չորրորդ դասակարգ, նշանակում է куссакъ (բանւոր) և алходъ (գնւած ստրուկ)։ Իգորում չորրորդ դասակարգը կոչւում է хечаръ «աղախին» կամ ճշտագոյնը՝ «(ը) խցայրակ» որ նշանակում է ստրուկ, բայց բառացի՝ աղախնից[1]։ 1867 թուին լոնները ստրկութեան վերացմամբ, վերացան նաև կավպասարդ և գուրգիակ դասակարգերը օսերի միջից։

Զ. (էջ 5). Фамилія «տուն» թարգմանեցինք նախնեաց կիրառութեամբ, օր. տուն Արծրունեաց, տուն Աղձնեաց և այլն։

Է. (էջ 5). Տ և թ հնչիւնների տարբերութիւնը ռուս բնագրում պարզ չէ, միշտ ռուս. т տառն է հանդէս գալիս։ Այն անուններըը, որոնք մենք կարողացանք տուգել, գրւած են թ տառով՝ թէպէտ ռուսերէնը ունի միշտ т., օր. Թագաւար (Thagaur՝ ըստ կիպերթի), Թլաթէ, Թոթիկ և այլն, իսկ ճշտացած անուններըը, չը կարողանալով տուգել, թողել ենք ռուսական т ձայնանշանով։ Ռուս բանահաւաքների այդ պակասութեան մասին տես հանգամանօրէն «Լեռնականք» Ա, էջ 20։

Ը. (էջ 5). Թագաւոր բառի այդ սխալ մեկնութիւնը հետևանք է երևի կապիտ. Նորդենսարենդի հայերէն լեզւի անծանօթութեան։ Հակառուսզէնի ճանա-

[1]) Сб. Св. о Кавказѣ I 208; Леонтовичъ, Кавк. адаты, II. 31; Сб. Св. о кавк. горцахъ IX. „Изъ осетин. сказ. о нартахъ", 16.

պարհորդութեան ուս. թարգմանիչը նոյնպէս սխալ է հաղորդում՝ «тагаоръ—вѣнценосецъ[1])»։

Թ. (էջ 7). Տես այս արծաթեայ անօթների նշանակութիւնը վերև «Զուգակշիռ» և Նկատ. ԺԵ։ Ինչպէս ամեն նման դէպքերում, այստեղ էլ «և այլն» բազմաբովանդակ բառը խանգարում է մտապատկերի ամբողջութիւնը։ Դժբաղդաբար թէ այստեղ և թէ Акты ժողովածւի հաղորդած արձանագրութեան մէջ [2]) «и прочаго» ամփոփումը վկայում է, որ թէ բանահաւաք Նորդենսկիոլդը և թէ Կովկասեան հրովարտակներն ստուգող յանձնաժողովը ժողովրդական նիւթը ըստ էութեան և կարևորութեան քննելու և գնահատելու պայմաններից զուրկ են եղած, անծանօթ լինելով մեր միջնադարեան յիշատակարաններին, ինչպէս ցոյց ենք տւել վերևում նշանակւած հատւածներում։

Ժ. (էջ 7). Այստեղ խօսքը Ալանաց գունի կամ Դարեալի կիրճի մասին է։ Տես Նկատ. ԺԹ։

ԺԱ. (էջ 9). 1830-ական թւերին այդ ինքը տուն ալդարները (տես ցեղագրական Յաւելած Գ.) ունէին ընդամէնը 162 բակ (дворъ) և իշխում էին 538 բակ ժողովրդի վրա՝ կազմւած փարթամ ազգից, կավդասարդից և գուրզիակից։ Հետևեալ տախտակից[3]) երևում է, որ ալդարները ըստ գէնքի առաջին տեղն էին բռնում 1830 թւին, ապա Կուրտաեր, երրորդ տեղը բռնում էր Դիդուրը և վերջին տեղը Ալագիրը։

1. Թագաւոր. հասար. ունէր	700	բակ և	1200	դինւոր.
2. Կուրտաեր.	»	»	400	»	600	»
3. Դիդուրի	»	»	600	»	500	»
4. Ալագիրեան	»	»	2500	»	1800	»

Ռուս-օսական յարաբերութիւնը իսկապէս Թագաուրեան ալդարների պատմութիւնն է։

Ռուսները տիրեցին օսերին ալդարների ձեռնաուտ-

[1]) Закавк. край II 105.

[2]) «Զուգակշիռ» և Նկատ. ԺԵ։

[3]) Акты, т. VII стр. 906 и VIII стр. 89.

թեամբ և միջնորդութեամբ. „Русскіе во время Тагауріи переговоры вели всегда чрезъ посредство алдаровъ, которыхъ назначало правительство Маіоръ, Капитанъ и Поручикъ съ 1809 года. Назначеніе ихъ было весьма полезно для Россіи, ибо они имѣли большое вліяніе на народъ“։

Ալդարները սկզբում օգնելով կառավարութեան, ժամանակ առ ժամանակ ամանաթ էին տւել իրենց որդիներին Վլադիկավկազում կամենդանտի մօտ պահելու համար, օրական 25 կ. առձիկով, քանի որ ալդարների հպատակութիւնը զրաւական էր միայն հասարակութիւնների հնազանդութեան։ Վերջերում, սակայն, հաւանօրէն դրգռած Վրաստանի հակառուսական խլրտումից, ալդարները հաշտ չէին ռուսաց հետ. մերթ նրանք մատծեցին ամանաթ տալու պարտաւորութիւնից ազատւել. ահա թէ ինչ է գրում այդ մասին Գեն.-Մայ. Դելպօցո 1810 թ. յուլիս 20-ից. «Բոլոր Թագաուրեան «ստարշինաները» նկան ինձ մօտ և, ցանկանալով թուլացնել առաջուց երդումով դրած ուխտը իրենց ամենայայտնի անարդից ամանաթ տալու մասին, խնդրում են ինձ անհրաժեշտօրէն, որ նրանց որդոց, եղբայրների և ազգականների փոխարէն՝ իբր թէ շահերի չունենալու պատճառով, ամանաթ ընդունեմ նրանց ստորագրեալ ուղղեններից։ Այս խորհուրդը դաւադրական է (коварная) և նրանց՝ դեռ իմ ակնառութեան չենթարկւած մտադրութիւնների համար պէտք է որ օգտակար լինի, իսկ ռուսաց կառավարութեան համար վնասակար.—ուստի խնդրում եմ իմ այս՝ իբր թէ յօդուտ նրանց խնդրւածքի միջնորդող բարոյից յետոյ (на сей рапортъ мой, яко-бы просящій уваженія въ ихъ пользу), տալ ինձ հրահանգ նախկին որոշումից դուրս չը գալու և նման միջնորդութիւններով Ձերդ Բարձրութեան երբէք չը դիմելու[2])»։

Եւ մերթ բացարձակօրէն ընդդիմութիւն էին ցոյց տալիս։ Նոքա իրենց հակառակական միտումներով

[1]) Акты, IV, стр. 456, 460, док. № 624 и 634.

[2]) Ibid. стр. 461, док. № 639.

խրախուսւում էին բացի վրաց Թագաժառանգից նաև նրանով, որ դրանից առաջ «Օլագիրի և կուրտատեան բոլոր ցեղերի սաարշինաները, черезъ посылаемыхъ къ нимъ разныхъ Тагаурскихъ старшинъ, նկան և ռուսահպատակութիւն ընդունեցին, ամանաթ թողնելով Թագաւորեան ալդարների մօտ[1])»։ Այսպիսով բոլոր այժմ ալդարների ձեռքին էր. միայն իրենց ամանաթներին չեռ սատանալ. երբ այդ էլ չալողւից նրանց, այնուհետև սկսւից պարտիզանական կռիւը, որ վերջացաւ 1830 թւին։ Այդ ժամանակ օսերին առաջնորդում էր Գեն.-Մայ. Իշխ. Աբխազովի և ռուսաց բանակի դէմ Ալդար Բեսլան Շանայ ֆըրտ (որդի)։ Պարտիզանական կռիւն անչալող եղք ունեցաւ ալդարների համար և նրբանց առաջնորդը Սիբիր աքսորւից[2])։ Այնուհետև դադարեց թէ ալդարների դինւորութիւնը և թէ նրանց իրաւունքը հարկ առնելու Թագաւորեան ձորի անցորդներից։

ԺԲ. (էջ 9). Ռուսաց հինդ վերստեան և կիպերտի 1854թւի քարտէզները, նաև 18-րդ դարի երկրորդ բառորդից Հիլդէնշտեդ ճանապարհորդը այդ վտակների անուննները այլևայլ տառադարձութեամբ են յիշում. ոմանց ուղղութիւնն է միայն գծած քարտէզների վրա՝ առանց անունի։ Բոլոր յիշած լեռնային ջրերը միանալով կազմում են Ղզլ-Իռն, Կամբելէակա և Արմխիկիսեանական գետակները, որոնք երկու կողմից թափւում են Տերեկ գետի մէջ։

ԺԳ. (էջ 9). Այստեղ խօսքը Դարեալի կիրճի մասին է, որ կոչւած է Թագաւորեան, Caucasiae Pilae, Porta Cymana և վերջապէս 1785 թւից սկսած՝ վլադիկավկազեան և ռազմավիրական։ Թագաւորեանները այդ կիրճի աէրն էին մինչև դարերում, հաւանօրէն 13-րդ դարից սկսած, երբ Հալաւու խանի զօրքի մի մասը անցաւ այդ կիրճով կաւկալու հիւսիսային խաքանի դէմ,

[1]) Акты, IV, стр. 856.

[2]) Ibid. стр. 455—472, док. 625—6 и VII, стр. 356.

բայց հաստատւելով լեռներում, պատճառ եղաւ Զադաստարի և Թագա-Բազտարի աւանդութեան, որոնք թէ Հալաւու պատմական զօրավարներն էին և թէ օսական աւանդութեան հերոսները (տ. «Թագիադին» Յառաջաբան)։ Միջին դարերում ալդարները տուրք էին տառնում վաճառականներից, առաջնորդելով նրանց կարաւանները այդ կիրճով դէպի լեռները և հակելով, որ դէնք չբմուծւի։ Այդ պատճառով էր, որ 1770 թւին 90 ռուս զինւոր և 10 օֆիցեր Թագաւորեան պահակների ձեռքով ոչնչացան այդ կիրճում։ Ռուսները միանգամից չը տիրեցին այդ կիրճին, այլ հետզհետէ և այլևայլ միջոցներով։ Միաժամանակ Գեներ. Գուդովիչ պաշտօնապէս ճանաչեց ալդարների իրաւունքը և սահմանեց կիրճով անցնող ամեն մի վաճառականից 10 ր. տուրք յօգուտ ալդարների, բայց 1830 թւին պարտիզանական կռւով էլ վերջ դրւեց նաև դրան[1])։

ԺԴ. (էջ 11). Այս «հրաւիրեց» բառով չի պարզւում ալդարների այդ վարմունքը—իրենց հայրենիքը, արդիւնաւոր ձորը և կիրճը ռուսներին յանձնելն ու հիւսիսային անպաշտպան սարալանջը քաշւելը։ Նորդենաարենգի պաշտօնական յիշատակարանը իհարկէ չէր կարող պատմել այն խնդիրը, թէ ինչ միջոցներով ռուսները կարողացել են Կովկասի անկախութեան ոգին խորտակել և խաղաղ քաղաքակրթութեան շաւիղը ուղղել կիսավայրենի ցեղերին, քանի որ նրա հեղինակը ապրում էր Կովկասեան պատերազմի շրջանում. բայց ուրիշ հեղինակներ բաւական լուսաբանել են այդ խնդիրը։ Նախ՝ ծայրէ յիշում է որ ալդարները շլացան պատիւներով, չինով, հոդարաժիններով, շքանշաններով և այլ այսպիսի բաներով և անցան ռուսաց կողմը[2])։ Երկրորդ՝ П. Бутковъ[3]) յիշում է, որ ռուսները կաշառքներով էին գործում և քաղաքական նպատակով պատրաստում էին արհեստական միջցեղեան կռիւներ և բացարձակ ապ-

[1]) Акты, т. III, гл. „Осетины, Тушины и Хевсуры“ и т. VII, стр. 356 и 373.

[2]) Сб. Св. о Кавк. I, 206—7.

[3]) Матеріалы для нов. ист. Кавказа, II, 110—111.

գային մենամարտութիւն, որպէսզի իրար կոտորելով լեռնականները թուլանան, պակասեն և թշնամանան իրար դէմ։ Այս հեղինակը նոյնիսկ լեռնցոց բնաւորութեան շատ բացասական կողմերի աղբիւրը համարում է ռուսների քաղաքականութիւնը։ Երբորդ՝ Н. Грабовскій[1]) ձայնակցում է Бутковъ-ին։ Հակառակուղէն կրկնում է նոյնը[2]) և այլն և այլն։ Մեզ թւում է, թէ էական միջոցը, որ ռուսներին օգնեց լեռնցոց տիրելու, Զաղաթօժեան և Դօնի կազակների գաղթերից առաջացած ռազմական ուժգնացն էր, որ ամենից աւելի դրդեց ինգուշներին, չէչեններին և օսերին թողնել լեռների ծայրերը և գաղթել հարթութիւնները։ Այսպէս՝ աուլների «նագէլ» հողերն առանց օրէնքի և իրաւունքի բաժանւում էին այս ու այն գաղութին կառավարչական անձանց մասնաւոր կարգադրութեան ոյժով։ Օգտւում էին գլխաւորապէս կազակները և զրկւում էին տեղացիները։ Տասնեակ տարիների ընթացքում այդ ընթացքը սահմանել էր անելանելի դրութիւն. մասնաւորապէս Թագաւորեան ձորի Եղիսաբէթեան և Կոնստանդինեան ամրութիւնները էական նշանակութիւն ունեցան ալղարների՝ հարթութիւնները իջնելու խնդրում, որովհետև ամրութիւնները ոչ միայն զինուորական կէտեր էին, այլ և՝ նրանց կից գտնւող զինուորական ամբողջ կազմի ընտանեկան կեանքի շնորհիւ, նրանք քաղաքական գաղութներ հանդիսացան և միաժամանակ տեղականացրին շրջակայ հողերը։ 1868 թ. Գեն.-Ադ. Միք. Տար. Լօրիս-Մելիքեանի նախագահութեամբ յատուկ յանձնաժողովը տեղացիներից խլած հողերի խնդիրը վերջնականապէս վճռեց յօգուտ կազակների, նկատելով, որ տեղացիներից կազակներին և պանձարանին անցած հողերը խլել նրանցից և կրկին առաջւայ տէրերին՝ տեղացիներին յանձնելը „не соотвѣтствуетъ политическимъ видамъ правительства“։ Այն հարցը, թէ տնտեսական միջոցով տեղացիներին նեղելը որքան էական դեր էր խաղում կառավարութեան նկատումների շարքում, այդ հարցը պարզուց նոյն յատուկ

[1]) Сб. Св. о Кавк. горцахъ IX· „Ингуши“ стр. 12.

[2]) Закавк. край II. 124...

յանձնաժողովի ժամանակ իսկ. թէպէտ նա վճռեց, որ խլած հողերի փոխարէն տեղացիներին տալն անտառներից մաքրուղ լեռները և իրրև վարելահող մըտցրեն «նագէլի» կարգը, տուլներին բաժանելու համար, բայց դա մի անտիմնատալ արտայայտութիւն էր, և-րևի, Գեն. Միք. Լօրիս-Մելիքեանի հումանիտար բնութիւնից դէպի տեղացի տարրը, մինչդեռ իրրև ելք՝ հնչում էր նա ֆալշ պետական քաղաքականութեան դիմաց։ Ուստի յատուկ յանձնաժողովի այդ վճիռն անտառապատ լեռների նկատմամբ, փոխարէնային հատնութիւն գտնելով հանդերձ, տալիս է վերստին կարգադրութեան, որ լեռների անտառները ջնջելն էլ որոշ չափի և հսկողութեան տակ դրւի։ Այս բոլորը, որ մենք քաղում ենք Евг. Максимовъ-ի հետաքրքիր յօդուածից[1]), ցոյց է տալիս, որ մեզից աւելի պատճառներ կային լեռնական ժողովուրդների տեղափոխութեան հիմքում. նրանց խմբական ընդհանրացումը միայն կարող է լուսաբանել կիսավայրենի ժողովուրդների քաղաքակրթութեան առաջին քայլերը XIX դարում, այսինքն այն՝ ինչ որ Նորվենսարենը «հրաւիրից» բառով է ամփոփել։

Ժե. (էջ 11). Մինչև 1844 թիւը, երբ գրւած է այս յիշատակարանը։ Ինչպէս յայտնի է՝ ալղարները վերջ ի վերջոյ գործն գնձարանական հողերի վրա տպրող շինականներ։ Մինչև 1844 թիւը, ուրեմն օսական տիրապետութեան առաջին 15 տարւայ ընթացքում (1830—1844), արդէն պարզած էր այդ հարցը հետևեալ հատաքրքիր ձևերով, որոնց մանրամասնութիւնը ցոնուցրիւ վիճակով գտնւում է պաշտօնական Акты հրատարակութեան հատորների մէջ։ Կարարդայի ուզդենները և թաթար մուրզերը մի խնդրագրով 1825 թ. մայս. 26. № 249 դիմեցին Кавказское Дворянское Депутатское Собраніе, որպէսզի պետական ծառայութիւն մտնելու համար ազնւականութեան վկայական տանան։ Մի տարի և վեց ամիս յետոյ, ի պատասխան յիշեալ Собраніе-ի գրութեան՝ թէ ինչպէս վար-

[1]) Терс. Сбор. III, кн. II, 44—45.

ել լեռնական ֆէոդալ իշխանների յիշեալ խնդրագրին, Գեն. Երմոլովը հրամայեց (յունուար 12 № 209 1827) Начальникъ Кавказской Области-ի միջոցով յիշեալ Собраніе-ին, որ նա հաւաքէ ասիական բոլոր ցեղերի դոկումէնները և խնդիրները և ուսումնասիրէ ու հարստացնէ համեմատութիւններով թէ ռուսական կարգերի և թէ պաշտօնատար անձնաւորութիւնների կարծիքների հետ։ Այս գիտի բազմակողմանի նիւթը ապա ներկայացնել իրան Գեն. Ермолову́ для дальнѣйшаго о томъ представленія[1]). Այդ աշխատանքը տասը տարի տևելուց յետոյ, հանդէս են գալիս ահա Օսական 12 ազնուական ալդարների տոկումէնները 1837 թուին հետևեալ մերժողական արձանագրութեամբ.

12 документовъ, достоинство коихъ нельзя опредѣлить по правиламъ сенатора Мечникова, данные осетинамъ на безпрепятственный пропускъ ихъ къ царямъ, на оказываніе имъ гостепріимства и проч., представленные осетинами, въ числѣ 162-хъ дворовъ, въ доказательство непринадлежности ихъ князьямъ Мачабели[2]).

Մինչդեռ այսպիսի բովանդակութեամբ վկայաթղթերը իսկապէս պատմական տուգութիւն ունին՝ իբրև թագաւոր Օրբելեանների իրաւունքի կրկնութիւնը գէթ այն ձևով, որով հաղորդած է Սիմեոնաց պատմիչի յիշատակարանում (տես վերև «Զուգակշիռ»), ընդհակառակն, 1839 թուին հետևեալ վճիռն արձակեց Кавказскій Областной Совѣтъ-ը նրանց մասին.

Совѣтъ находитъ: что Кабардинскіе князья... и Осетинскіе старшины, по званію своему, считаются отличительными отъ обыкновенныхъ простыхъ азіатскихъ родовъ; но таковое званіе ихъ основывается только на народномъ преданіи, քան որում միջին դարերում քաջը և զինավարժը հերոս հանդիսանալով և հռչակուելով, հնազանդեցրել է թոյլերին իր իշխանութեան, չը նայած որ ինքը մեծագոյն բազմութեան արիւնից էր ծագում և ոչ թէ մաքուր, հնագոյն և բարձր տոհմից ու արիւնից։ Ուստի ազնիւ տոհմն ու իշխանական արժանիքը միայն դոկումէններով կարող է հաստատուել և ոչ թէ ժողովրդական աւանդութիւնով[1]։

Այնուամենայնիւ ալդարները վերջ չը տուին իրենց դիմումներին. 1842 թուին պաշտօնապէս խնդիր ներկայացրին յանուն կայսեր. իսկ 1844 թուին Նորդենստիերնպին թելադրեցին իրենց ծագումն ու իրաւունքները։ Այդ բոլորն այն հետևանքն ունեցաւ, որ 1851 թ. կառավարութիւնն ալդարներին ազատեց Մաչաբելեան տոհմի տանգութիւններից և գանձարանի շինականներ դարձրեց նրանց[2])։

Այսպէս ուրեմն՝ ալդարներն իրենց հողային և անձնական իրաւունքներից թէպէտ զրկուեցին ոչ թէ միանգամից, այլ հետզհետէ տեղական գործավարութեան ընթացքով, սակայն 1844 թուին, Նորդենստիերնպի ժամանակ, բաւական որոշած հարց էր այդ։ Ուստի թէ пригласило (հրաւիրից) և թէ охотниками (կամաւորների հետ) իմաստները չեն համապատասխանում այն պատմութեան, որ մինչև այդ թուն ունէին վերայիշեալ խնդիրները։

Ժ.Զ. (էջ 11). Ուրիշ խօսքերով, Թագաւորեանները բռնեցին լեռները վլադիկավկազ քաղաքից դէպի արևմուտք մինչև Փիագ-Դոնի հովիտը, ուր ապրում էին կուբատեանները, և դէպի արևելք մինչև կամբիլեևկա տեղը, որի աջ ափի լեռներում ապրում էին ինգուշները իրենց հռչակաւոր Անգուշա կամ Ինգուշա տուլով։ Սա այն տունն է, որը ռուսները քանդեցին և բնակիչներին կրկին կազակներով, վերակոչելով Тарская станица[1]);

Ժէ. (էջ 13). Այստեղ յիշած դոկումէնի մասին մեր ձեռքի տակ եղած նիւթերը լռում են. նա հետաքրքիր

[1]) Акты, т. VI., ч. II. стр. 651. док. № 1011.

[2]) Акты, VIII, стр. 89, док. № 61, „Записка Коммисіи для разсмотрѣнія Грузинскихъ и Имеретинскихъ документовъ 1837 года.

[1]) Акты, т. IX, ст. 407—8, док. № 359 Постановленіе Кавказскаго Областнаго Совѣта отъ 9 іюня 1839 № 61.

[2]) Акты, т. X стр. 879.

[3]) Терскій Сбор. 1892, кн. II, 75; Сб. Св. о Кавк. горцахъ V, стр. 125.

է նրանով, որ ալգարնները այդ խնդրագրի մէջ պատմել են իրենց ծագումը, անձնական իրաւունքներն ու կալւածատիրական արտօնութիւնները։

ԺԸ. (էջ 13). Կավդասարդը ծնւում էր «նօմուլուսից» (անուանով կին —nominalis uxor) հարճից։ Նօմուլուսն ապրում էր ատն այն ժամում, որը անասուններին էր յատկացրած. նա քնում էր ախոռում և այնտեղ յղանում և ծնում էր իր որդոց իր տէրոջ՝ ուղղանկատի, համար իբրև սարսուռների։ Կավդասարդը միայն մի դէպքում կարող էր ազատուել սարկութիւնից և դառնալ ուղղանկատ, այն է՝ երբ մեռնէին նրա ուղղանկատ հայրը և այդ հօրից ու նրա օրինաւոր կնոջից ծնւած բոլոր ազնւական զաւակները. այդպիսի դէպքում կենդանի մնացած կավդասարդը ազատագրւում էր և ժառանգում իր ուղղանկատ հօր անձնական ու ժառանգական պատիւն ու առաջւածքը[1]։

ԺԹ. (էջ 15). Տես Նկատ. ե. (էջ 33)։

Ի. (էջ 17). §§ 14—19 մէջ թւած հարկերը պայմանւում էին միջին դարերում նաև Աբարատեան դաշտում. «Թխուլի իրաւունքով, գրում է Բաստամեանը, կալւածատէրը առանում է որոշեալ մասը իւղից, պանրից, հաւից, ձուից և այլն[2])»։ М. М. Ковалевскій այդպիսի նման դէպքերը համարել է իբր միատեսակ պայմանների հետևանք[3])։ Գոնէ Թխուլի իրաւունքին յարմար չէ այդպիսի մեկնութիւնը և մենք պիտի առնենք յոյց տալու վերևի նման դէպքերի փոխադարձ և կապակցեալ յարաբերութիւնը։

ԻԱ. (էջ 23). Կուրատաեան հասարակութիւնը ապրում է Թխագ-Ձոնի ձորում (գրւած է՝ Պֆօկ, Ֆօզ և Պօզ), Տերևկի մի վտակի հովտում։ Յայտնի են Դալակկաու, Լաչ և Բարսիկաու աուլները։ Հին հայ հեղինակները չեն յիշել Կուրտաղին անունը։ Տես Նկատ. Ա. և ԼԱ։

[1]) М. М. Ковалевскій, Очерки происхож. и разв. семьи, 86—7; Сборн. Св. о Кавказѣ I, 207.

[2]) *Դատաստ. Մխիթ. Գոշի, էջ 316, ծնթ. 682.*

[3]) Законъ и обыч. на Кавк. I, 163.

ԻԲ. (էջ 23). Կուրատաեան ուղղանկատ անները ութ են. — Тамбонате, Наефонате, Оласехъ, Кунанате, Дадегате, Гутіате, Адіате и Богульте.

ԻԳ. (էջ 23). Ալագիր հասարակութիւնը բնակւում է Արդոն գետի հովտում։ Գրւում է նաև Օլլագիր, Վալլագիր, Ուալագիր, Վալաջիր։ Հին հայ հեղինակները չեն յիշել այդ անունը։ Ոմանք կարծում են Alilat դիցաբանական անունն է դա, իսկ ուրիշները նկատում են այդտեղ սարմատ. ալա «սար» բառը։ Օսերէն Օլլագ նշանակում է «վերին», «նախակարգ» և այդ պատճառով «Օլլագիր» ըստ այլոց նշանակում է վերին իրօն[1])։ Այս ենթադրութիւնները հիմնւած են նմանահնչիւն ձևերի վրա, և պատմականօրէն ստուգել նրանց անհնարին է։ Մեր կարծիքը տես վերջում Յաւելւած Ա։ Ալագիրցոց նշանաւոր աւաններն են Ալագիր, Ուենալ, Նուզալ, Ցէյ և այլն։

ԻԴ. (էջ 23). Այս հատւածին ձայնակցում է, ինչպէս նկատել ենք «Զուգակշռի» մէջ, մեր գրաւոր միջնադարեան մատենագրութիւնը։ Осъ, Картулъ и Лекъ անուանները հայերէնում, օր. Ստեփ. Օրբելեանի պատմութեան մէջ, հաղորդւած են Քարթուլ, Լեկ և Հերաւս (=Իր Օս?) ձևով։ Воеводъ (=զօրավար) բառի տեղ կարդում ենք «արուագոյնք և հսկայակերպք». — Էին նորա որդիք ութ արուագոյնք և հսկայակերպք. Հայկ, Քարթլոս, Բարգօս, Մովկան, Լեկան, Հերօս, Կովկաս և Եգրէս[2])»։

ԻԵ. (էջ 23). Տես այս անուան տառադարձութիւնը Նկատ. ԼԱ։

ԻԶ. (էջ 25). Արդոն գետի մի վտակը կոչւում է Զակկա, որի ափին գտնւում են Նար և Զակկա աւանները (վերջինս երկրորդական անունով կոչւում է Ս. բայդկաու). Ծայֆ կարծում է, որ սուա-Քորենացու

[1]) Вс. Милперъ, Осет. Эт. I, 128 и II, 55.

[2]) *Պատմ. Սիսական, 368.*

յիշած Ծանարքը այդ հովիտն է և բաղկացած է Նար և Ջակ անուններից։ (Տես նկատ. Գ, էջ 31)։

Իէ. (էջ 25). Այս անցքը գտնւում է Ալանաց դռնից դէպ արևմուտք Արդոն գետի ձորում. կոչւած է կասար և Մամիսոնեան, ապա ռուսները անւանեցին ռազմաօսեթեան։ Հեթում պատմիչը յիշում է ԻՍ. գլխի մէջ Կումանիոյ, Կասպիոյ և Բուլղարաց թագաւորութիւնները և Կածարայ երկիրը։ Այս անուններից առաջինը Կումա գետի անունից է առաջացել և ենթադրւում են որ Մաջառացիք, որոնց ժառանգորդը Ունգարիա հասաւ՝ ըստ Հեթումի, նոյն Կումանացիք են։ Կասար և Կածար նոյն լեռնանցքի անունն է, իսկ Բուլղար անունը մնացել է մինչև այժմ Զերեկ գետակի հովտում, ուր օսերից արևմուտք ապրում է Բալկար հասարակութիւնը։

ԻՀ. (էջ 25). Օս անունը առաջին անգամ յիշում է Վարդան պատմիչը—«Թամար ընկէց զայրն ռուս, և էառ զՕան Սօսլան»[1]։ Յետոյ յիշում է Ստեփ. Օրբելեան. «Դուռն Ալանաց ...է մուտ Խազրայ, Ալանաց, Օսից, Խփչաղաց»[2]։ Ռուս յիշատակարաններից ոմանց, նրանց թւում նաև Նորգենսարենգի, մէջ Բագատար և Զագատար ձևերը դարձրած են մէկ Багатыръ, մէկ՝ Багатуръ։ Ոմանք էլ ընդունել են Багатыръ և Багатуръ իբրև մակդիր, իսկ «Օս» նախանդամը նոյնացրել են վրաց աղբիւրների մէջ յիշած մի ինչ որէ Օս անունով ժողովրդական հերոսի՝ իբրև պատմական անձնաւորութեան հետ[3]։ Տես «Թագիադին» գլխում։

ԻԹ. (էջ 25). Այս անուններն իրենց վերջաւորութեան շնորհիւ համեմատւում են Հայաստանի Ասպօն, Տարօն, Դարիւն, Ցրօն, Մամիկոն և այլն, և Ասորաբաբելական՝ Բաբելոն, Սարդոն, Սարհադդոն անունների հետ։ Յունաստանի, Փոքր-Ասիայի և Պաղեստինի

[1]) Հաւաքումն պատմ., 139.

[2]) Պատմ. Սիսակ., 476.

[3]) Сб. Св. о Кавказѣ I, 191; Сб. Св. о кавк. горцахъ V, „Матер. для ист. Осетинъ“ XXXI.

մէջ էլ եղել են այդ վերջաւորութեամբ շատ յատուկ անուններ։ Անյաջող կերպով, ինչպէս այդ նկատել են նաև ուրիշները, ոմանք փորձել են ժողովուրդների ծագման խնդիրը լուծել այդ անունների հնչիւնական զուգորդութիւնների հիման վրա[1])։

Լ. (էջ 25). Ուրիշ աւանդութեան համաձայն Օս—Բագատարը ունեցել է 7 որդի—Միդամոն, Ցարազոն, Կուսագոն, Զախիլ, Տհալօ, Ագուս, որ հարձից է առաջ եկել և եօթերորդը անհետացած անունով և սերնդով։ Այս առասպելական աւանդութիւնը, որ հայ յիշատակարանների մէջ յիշած Թորգոմի ութ որդոց վէպի կըրկնութիւնն է, ծայրը պատմական է համարել. նա Օսին սեմական ծագումն է յատկացրել, որ ապրում էր իբր 2000 տ. ն. Ք., և 7 տների նախնական բնակավայրը որոնել ու գտել է իբր թէ Փոքր-Ասիայի անկիւններում, իսկ 7-րդ տան անհետացած անունը որոշել է — — «Phazemon»[2])։

ԼՍ. (էջ 25). Курта անունը հէնց այդպէս էլ հնչւում է. բայց լեռնական լեզուներում կ և ք, տ և թ հնչիւնները փոխանակւում են շատ անգամ. այսպէս նաև Картулъ անունը հայոց յիշատակարանների մէջ հաղորդած է Քարթուլ ձևով, ուստի Курта զուգորդում է Քուրդ, Քուրդոյ սիւնեցու անուան[3]) և սանեկի Ամիր Քուրդ Մամիկոնեանի մակդիրին, որը Հուլաւուին ժամանակակից Սադուն Աբծրունու պապն էր[4])։ Աբծրունիքից այս անունը առաջ անցաւ Սիւնիք, իսկ ապա լեռները, ինչպէս կը տեսնենք Յաւելւած Ա։ Համմա. Նկատ. Ա. և ԻՍ. (էջ 29 և 42)։

ԼԲ. (էջ 27). Ալպիլբեան աւանդութեան այս տունդենցի մասին, որով Թագան հանդէս է բերւած աժնաֆոյլը և ամենքից վանւած, տես Յաւելւած Ա։

[1]) Св. Св. о Кавказѣ I, 326 и II, 95.

[2]) Նոյնը. I, 191 и II, 100.

[3]) Սա. Օրբ., Սիսակ. 51, 52 և 208, Յ. և. Շահխաթունեան՝ Սատրագրութիւն Բ. 95—101.

[4]) Կիրակոս և Մագաքիա.

Լ. Գ. (էջ 27). Կապիտան Նորդենստրենդի յիշատակարանի շարունակութիւնը անմիջական կապ չունի Թագաւորեան աւանդութեան հետ, ուստի § 65-ով դադարում է մեր ընդօրինակութիւնը։ Մնացած յօդուածները պատմում են ժառանգութեան, անշարժ կայքի և դատարանի մասին։ Տես վերև «Մատենագրութիւն»։

Թագաւորեան և Ալագիրեան աւանդութիւնների մէջ յիշուած հերոսներն ու նրանց սերունդը օս ժողովրդի ամբողջ բանաւոր ստեղծագործութեան մէջ մի նշանաւոր առանձնայատկութիւնով են հանդէս գալիս։ Ինչպէս յայտնի է՝ օսերը մեծ տրամադրութիւն ունին հերոսապատումների հանդէպ։ Նրանք դիւցազներգութիւնը սիրել են և սիրում են մինչև այսօր։ Նոյն իսկ նրանց Նարտեան երգերը ժողովրդի աչքում սրբազան համարմունք ունին։

Սակայն այս երևոյթի հանդէպ, տեսնում ենք, որ Իրօն հասարակութիւնները զարմանալի կերպով երգի նիւթ չեն դարձրել ո՛չ Թագային, ո՛չ Կուրտային, ո՛չ Օս Բագատարին և ո՛չ Օս-Զազատարին, որոնց գործերն ու դաղթը պատմում են պրօզայով, զուրկ ոգևորութեան և հիացման վիճակից։ Նոյնիսկ տարբերւում են իրարից ժողովրդի աչքում Նարտեան երգերը, իբրև սրբազան վէպ, և Թագաւորեան աւանդութիւնը, իբրև պատմական յիշատակարան։

Այդ երևոյթի պատճառը դաղթի պատմական բնաւորութիւնն է, այն է՝ դաղթի յետին ժամանակը և նրա անմիջական դրդիչներն ու տխուր հետևանքը (տ. «Թաղիադին» և Ա. Յաւելած)։ Այդ պատճառով, ահա, կապիտան Նորդենստրենդի Տեղեկագիրը ներկայանում է իբրև մի պատմական յիշատակարան, չը նայած որ ժողովրդական աւանդութիւն է բովանդակում նա։

ՅԱՒԵԼԻՑԱՆԵՐ

Ա. ՀԱՅ—ԱԼԱԳԻՐԵԱՆ ԴԱՂԹԸ

Տերեկի կամքելէկևա վտակից դէպ արևելք ապրում են չեչինները բաժանւած շատ հասարակութիւնների՝ կիստին, Գալգալ, Իչկերին և այլն։ Ակուշա աուլը, որ պատկանում է Իչկերին տոհմին, ծագում է հայերից. «Акушинцы ведутъ свой родъ отъ армянъ, Цадахаринцы—отъ грузинъ»[1]։ Թէպէտ այս աւանդութիւնը չեն հերքում ոչ որևէ Ակուշեցի և ոչ էլ նրա դրացի ժողովուրդները, սակայն անհրաժեշտ է այն ստուգել։

Акуша, Akuscha աուլը գտնւում է Դաղստանում Սուլակ գետի կաղիկումուխեան-կոյսու վտակի վրա՝ Գունիբից արևելք։ Այդ աուլից քիչ հարաւ, արևելքից դէպ արևմուտք ձգւող մի լեռնաշղթայ կոչւում է Ա-լակիւռ դաղ, Alagyr Dagi[2]։ Ի հարկէ՝ Օսեր չը կան այսօր այդ կողմերում, այլ Ալագիրեան Օսերի և Ալակիւռ դաղի մէջ տեղում այսօր բնակւում են Կուրտաուեան, Թագաւրեան, կիստին և Գալգալ հասարակութիւնները։ Այդ հեռու տարածութիւնների միևնոյն անունով կոչելու պատճառը բացատրելու համար, քիչ է՝ ի հարկէ, բաւականանալ յիշելով այն ընդհանուր երևոյթը, որ Օսերը, ինչպէս այդ ստուգած է բազմիցս, երկար ժամանակ լեռներում թափառել են անհաստատ բնակութեամբ, փոթձելով ամեն մի ձորի յարմարութիւնը իրենց ինքնապաշտպանութեան համար[3]։ Ընդհակառակն այն է, որ ժողովրդական նիւթերը ուրիշ հիմքեր

---

1) Сбор. Св. о Терск. Обл. I, 1878, 266.

2) Բարխուդարեան Մ. Ծ. վ. «Ազատից երկիր», 124։ Պետրս 1854 կովկ. քարտէզ։

3) Терс. Сб., III кн. II, 1893. 97—8.

ին բովանդակում թէ Ալագիրի և թէ Թագաւորեան օսերին առընչութեան մէջ դնելու Ակուշեցոց հետ, որոնք հայկական ծագումն ունէին։ Այսպէս՝ Ալագիր հասարակութեան 4 ազնւական տներից երրորդը կոչւում է Ակուշ անունով՝ Акузате, իսկ Թագաւորեան 11 ալդար տներից Զանտիէն ծագում է Ազուլեան տոհմից[1]։ Ուստի ւնում է ստուգել այն խնդիրը միայն, թէ ալագիրցոց Ակուզատէ, և թագաւորեանների Ազուսով տները մի ծագումն ունին՝ թէ ոչ. և թէ՝ այդ տոհմերը և Ակուշա աւանը արդեօք Սիւնիքի Ակոշ գիւղի հետ ծագմամբ մի ին թէ տարբեր։ Որ երկու հարցն էլ գրական միտք ունին, այդ ստուգւում է գրաւոր յիշատակարանների և արձանագրութիւնների համեմատութեամբ այսպէս։ Նախ՝ նրանք պատմում են մի գլխաւոր առանձնայատկութիւն, որով և յիշեալ տները հանդէս են գալիս լեռնական աւանդութեան մէջ, թէ ալագիրցիները և թէ թագաւորեանները Ազուսեան և Ակուզատէ տներին ստորնակարգ արժէքի վերագրելիս։ Ճիշտ է՝ թագաւորեանները Ազուսեան Զանտիէների հետ ցեղակցութեան մէջ մտան, և բացի այդ Զանտիէ տունը ազնւական համարելու իրաւունք ստացաւ՝ կավդասարդ ունենալու պատճառով, սակայն նա հողային տիրապետութիւնից զրկւած էր. այսպէս օր. Թագաւորեան ձորի իրաւունքին Զանտիէ ալդարները մասնակից չէին, ինչպէս պատմում է Նորգենատրենդի յիշատակարանը (վերև էջ 11). թէ ինչ էր այդ զրկողութեան պատճառը՝ յիշւած չէ այնտեղ։ Ակուզատէ տունը նոյնպէս չվայելից հողատիրութեան իրաւունքը նաև Ալագիրում. իրենց զէնքի ոյժով Ալագիր մտնելուց յետոյ, ինչպէս պատմում է Ալագիրեան աւանդութիւնը, նրանք այնուհետև էլ զբաղւեցին միայն զինուորութեամբ. նրանք իրենց քաջութեամբ առակի նիւթ դարձան. ահա բանահաւաքի խօսքերը. „Агусовы не имѣютъ земли; они прежде занимались исключительно военною службою. При угощеніяхъ часто слышится слѣдующая поговорка: желаю тебѣ множества какъ Сидамонъ, почета—какъ Куссагонъ, силы—какъ Агусъ[1]).

Թէ ինչ էր հողային իրաւունքից զրկւելու պատճառը՝ այդպէս ասւած չէ, բայց ուրիշ անգամ կարդում ենք, որ Ազուս տոհմը գանւում էր այն պայմանում, որի մէջ հող ունենալ չէր կարելի, այն է՝ թէ նա հարճածին էր. «Оси-Багатаръ имѣлъ 7 сыновей, которые назывались: Сидамонъ, Царазонъ, Куссагонъ, Дзахилъ, Тетло, Агусъ, — послѣдній рожденный отъ наложницы: *Ուրիշ տեղ*—Дзахилъ считается за Кавказомъ незаконнымъ сыномъ родоначальника ихъ Осса[2]).

Իսկ պիտանք, որ հարճածինները-կավդասարդները իրնէ հող չունէին (ա. Նկատ. ԺՀ. էջ 42)։ Ահա այդ է պատճառը, որ Թագաւորեան ալդարները Ազուլեան Զանտիէին՝ «Կովկասեան սարերի միւս կողմից» եկած այդ գաղութին, ընդունելով հանդերձ իրենց երկրում, այնուամենայնիւ թոյլ չտւին նրան Դղըլ—Դոնի և Դարգօվի ձորերում բնակւել, այլ նա հաստատւեց Թագաւորեանների և Կուրտատեանների սահմանի մէջ տեղը, ուր ոչ ոք չէր բնակւած. *յետոյ* նրա մի մասը իջաւ հարթութիւնը» (վերև էջ 10—13)։ Իրենց ձորի իրաւունքից էլ զրկեցին նրան և յանուն կայսեր տրւած խնդրագրի մէջ չյիշեցին նրա անունը։

Սակայն՝ ինչու էր այդպէս, այդ ինչ հարճածնութիւն էր, ով էր հիմնել Ակուշա աուլը—այս հարցերը չեն բացատրւած լեռնականների աւանդութեան մէջ։ Այլ նրանց պատասխանում են հայոց գրաւոր յիշատակարանները, լրացնելով օսական և չեչնական բանաւոր աւանդութիւնների հասկանալի պակասութիւնը՝ նոյնիսկ մանրամասնութեամբ, հաստատելով, որ նախ՝ Ակոշ գիւղը արդարև ստոր ծագում ունէր, երկրորդ՝ Ալագիրը, Կուրտատ և Ակուզ տոհմերը գալիս են Սիւնիքից 13-րդ դարի վերջերում։

---

[1]) շ, գ, և ս հնչիւնները ոչ միայն տարբեր հասարակութեան մէջ, այլ և միևնոյն հասարակութեան տարբեր աուղներում հնչում են իրար փոխանակելով (Сбор. Св. о Кавк. II, 88). Акузате անւան վերջավանկը յոգնականեցուցիչ ածանց է, ինչպէս՝ Սիպամոն-ատ, Կուսագոն-ատ և այլն։

[1]) Сб. Св. о Кавк. II, 153.

[2]) Сб. Св. о Кавк. I, 191, и II, 152.

Այսպէս է պատմում այդ գաղթի նախապատրաստական շրջանը Սահմ. Օրբելեան իր գրքի ԿԶ գլխի մէջ։ 1251 թուին Օրբելեան Սմբատ իշխանը, ներկայանալով Մանկու խանին, իր վրա հաստատել ուից Լօռին և Սիսնիքի ու Աղւանքի մեծ մասը՝ Նորավանքից մինչև Տաթև։ Սմբատը թաթարական կուսակցութեան յարած, մահմեդականութիւն ընդունած և ապա զղջացած ելիկում Օրբելեանի թոռն էր։ Հակնիակութիւն և համակրութիւն չունէին թէ ելիկումը և թէ նրա տունը մի քանի պատճառով, ինչպէս կը տեսնենք, և մանաւանդ սկզբում այժ չունէր նա գլխաւորելու իր տոհմակից Աւագ Օրբելեանին, որը վրաստէր էր, և վաղուց բռնացած տիրում էր Սիսնիքին, Լօռուն և Աղւանքին։ Սմբատը և նրա 4 փոքրահասակ եղբայրները նոյնիսկ մահուան վտանգի մէջ էին, Աւագը նրանց կեանքին ուզում էր վերջ դնել։ Նրա մահից յետոյ էլ նրա Գոնցա անունով կինը և Թիֆլիսարնակ դուստրը, որը Խոշաք էր կոչւում, արգելք հանդիսացան Սմբատին՝ տիրելու Մանկու խանի շնորհած երկիրներին. ուստի 5 տարի յետոյ երկրորդ անգամ Սմբատ գնաց Մանկու խանի մօտ և այս անգամ վերադառնալով, անարգել տիրոյթներին, որովհետև ուժեղացել էր թաթարական կուսակցութիւնը։ Նա շուտով Գոնցային ծովամիջում ոչնչացրեց և նրա աղջկանը թաթար հարկահանին կնութեան տուաւ և իր սերնդի իշխանութիւնը ապահով գարձրեց թէ արտաքին և թէ ներքին ոսոնձգութիւններից։ Նրա եղբայր Տարսայիճը չը բաւականացաւ այդքանով. իր օրինական կինը, սիսնիքի թաթար իշխանի քրիստոնեացած աղջիկը, գնա կենդանի էր, երբ երկրորդ կին առաւ Խաչէնի Զալալ թագաւորի աղջկանը՝ այդպիսով արիւնախառնութիւն առնելով Օրբելեան և Բագրատունի տների մէջ. այդ քրիստոնեայ կնոջից ծնուած երկու աղջիկներին նա յետոյ կնութեան տուաւ վրաց արքունիքը և ազնիւ իշխանական պայազատներից մէկին։ Մի երեսուն տարի այդ միջոցներով թաթարասէր Օրբելեան կուսակցութիւնը զօրացաւ յանձին Տարսայիճի, որի որդին՝ այդ զօրութեան շնորհիւ, կարողացաւ Սիսնեայ

մեարապօլաութիւնը վերականգնել 1280-ական թուերին։

Սակայն այս յաջողութեան պատմութիւնը ուրիշ էջ էլ ունի։ Նախ քան այդ՝ վրաց թագաւոր Գէորգին, Թամարի հայրը, նկատելով Օրբելեանների մէջ թաթարութիւնը, ապաստալար կարգից նրանց փոխարէն Խուտլուբան անունով մի իշխանի, որը խիչաղ ծագումից էր. այդ առանձին խորհուրդ ունէր։ Լեռնական խաղաղ պէտք է ամէն կերպ աշխատէր յօգուտ վրաց, որովհետև նա պատկանում էր վօլգայի թաթարական կուսակցութեան, որը օթերիի թշնամի էր պարսկական և Մուղանի թաթարական խանութեան։ Ահա այդ խաղաղ Խուտլուբան ապաստալորը տեղական հայ իշխանների մէջ երկպառակութիւն ձգեց, որոնց մի մասը յարել էր վրաց, իսկ միւսը՝ թաթար Մանկու խանին։ Իսկ վերջում երբ Պարսկական թաթարները ապաստերը չէ յիշւում, այլ սրա փոխարէն ինքը Գէորգին հայոց արիւնակից իշխաններին ձեռքմէկու դէմ գինից. թաթար կուսակցութեան դեկավարը, Սմբատի եղբայր Ելիկումը, «դիպակուր լինի և բժշկաց և հրամանէ Աւագին», որ վրաց կուսակիցն էր, և որը յետոյ Ելիկումին էլ ջնջել էր աշխատում իր Գոնցա կնոջ և Խոշաղ աղջկայ գործակցութեամբ։ Սակայն երբ Սմբատ յաղթեց բոլորին Մանկու խանի օգնութեամբ և երկրի հին վրական կուսակցութեան բոլոր դաւանութիւնին տիրեց, այն ժամանակ պարտաւած կուսակցութիւնը ծախից իր կալւածքները և քաշուեց լեռները, սովորական ճանապարհով Դարբանդի դռնով դէպի Դաղստան, խիչաղներին առնմանակից։ Ճիշտ է՝ յետոյ Հուլաուն Մուղանից շարժուց դէպի հիւսիս և արշաւեց վօլգայի թաթարական խանութեան վրա, սակայն պարտութիւն կրելով յետ դարձաւ՝ հաղիւ իր գօրքի մի աննշան մասն ազատելով։

Մենք քիչ յետոյ կը տեսնենք իրենց կալւածները ծախող գիւղերի տեղափոխութեան վկայութիւնները. այժմ այդ գաղթի, բացի քաղաքական պատճառից, ուրիշ մի՝ ոչ պակաս մեծին գործերի հանգամանքեան նայած, շարժառիթը պիտի պատմենք, ցոյց տալու

համար Աղուանից-Ակուգատէ տան հարճածնութեան սկիզբն ու հետևանքը։

Սմբատի հայրը Լիպարիտ և պապը՝ Ելիկում սկզբում միայն իբրև թաթարասէր առելի էին տեղական հայ իշխաններին։ Սակայն վերջում ցեղական առելութիւնը զօրեղացաւ հետևեալ պատճառով։ Սմբատի հօր պապը, այն է՝ Ելիկումի հայրը՝ Լիպարիտը, իր եղբօր Իւանէ սպասալարի խորհրդով ծածուկ դնացել էր Պարսկաստան, որպէսզի թաթար աթաբակ Ելակուզից օգնութիւն բերէ վրաց իշխանութեան դէմ գործելու. բայց երբ 13-րդ դարի սկզբում այդ դաւադրութիւնն անյայտ անցաւ և Վրաց կուսակցութիւնը յաղթեց մի առ ժամանակ, անյաջողութեան լուրն առնելով Լիպարիտ Պարսկաստանում սպասեց գործի ելքին. յետոյ միանալով, օտար երկրում թողեց մի որդի Ելիկում անունով, Սմբատի և Տարսայիճի պապը. Ելիկում 12 տարի Պարսկաստանում մնալուց յետոյ, կրթելով թաթարասիրական ոգով, մանուկ հասակից ցոյց էր տալիս խիստ հնազանդութիւն և համակերպութիւն դէպի խաները։ Ուստի վերջում հարաւային Սիւնիքի աթաբակի ձեռքի տակ նշանակուեց Նախճաւանի գաւառի Երնջակ և Ջահուկ բերդերի կառավարիչ, երբ վրաց կուսակցութիւնը թուլացել էր այդ կողմերում։ Սակայն թէ Լիպարիտ և թէ Ելիկում, արդէն իբրև բացարձակ թաթարասէրներ, Վրաց պետական ազնուականների ցուցակից ջնջած էին՝ իրենց դաւադիր պապի պատութիւնից յետոյ, և իբրև հակաքրիստոնեայ իշխանութեան գործիչներ՝ առելի էին տեղական հայ իշխանների աչքում։ Ուստի Երնջակի և Ջահուկի նոր կառավարիչը, Ելիկում, օտար ոմն էր այժմ հայոց աչքում։ Սակայն բացի օտարութիւնից նա հաւատի մէջ թուլացած էլ էր, և ուրիմն ամեն կերպ անընդունելի էր վրացական կուսակցութեան վարժուած և ընդել և բնիկ Օրբելեան իշխաններին հպատակ ժողովրդի համար։

Ահա այդ բացասական պայմաններով օժտուած բիտասարդը, Ելիկումը, գալով Երնջակ, մտածում է իր տոհմական արժանապատուութիւնը նորից բարձրացնել,

բայց անյաջող կերպով. ճիշտ է՝ Սիւնեաց Սահմանոց եպիսկոպոսը նրան թողութիւն տւեց, իսկատ առնելով նրա զղջումը հաւատուրացութեան համար, սակայն աղջիկ չտուեց նրան հայոց իշխանական տներից և ոչ օգ։ Սիւնեաց պատմիչը իր հօր պապի այդ դրութիւնը որքան էլ ցանկացել է մեղմացնել, բայց նրան այդ չի յաջողել. «Ոչ գտանէր ի քրիստոնէից զոք պատշաճ իւրոյ խնամութեան, զի աշխարհս այս դեռ ևս ի նեղքոյ իշխանութեան պարսից էր», գրում է նա այդ առթիւ՝ հասկացնելով, որ պարսկամոլ իշխանին ոչ ոք աղջիկ չը տւեց։ Ուստի Ելիկումը կնութեան առաւ աղջիկ Սահմանոց եպիսկոպոսի, այդ քրիստոնէական հէնց Սահմանոց եպիսկոպոսի, որ նեղման անսպառ աղբիւրի, քրոջ աղջկան, և որովհետև սա մի՝ յիշատակութեան անարժան ջահկացու դուստրն էր՝ Խաթուն անունով, ուստի Ելիկում մխիթարւում էր այսպէս. «Հաւանեաց խնամութեան Սիւնեաց եպիսկոպոսի տեառն Սահմանոցի, զի հողևոր տաճիճանաւ բարձր էր քան զնա»։

Այսպիսի աննպաստ պայմաններում կարծես արժանի էին Ելիկումին, որ թոյլ մարդ լինելով, շուտով ուրացաւ հաւատը. յետոյ թաթարները նրան սպանեցին, իսկ նրա Խաթուն կնոջը իբր հարճ պահից մի պարսիկ, մինչև որ Խաթունի ժօրեղբայրը՝ Սահմանոց եպիսկոպոսը, ազատեց նրան և նրա մանկահասակ Լիպարիտին պարսկի ձեռքից։ Այս Լիպարիտ տէր ուներ տղաներ, որոնցից Սմբատ և Տարսայիճ երևելի եղան, ինչպէս յիշեցինք վերևում։

Բայց այս բոլորից՝ մեր միջնադարեան յիշատակարաններին անսովոր մի առանձնայատկութեամբ, Լիպարիտի մօր ծագումը հետաքրքիր մանրամասնութեամբ է հաղորդւած։ Տէր Սահմանոցը Ակռշ պիւղից էր. պիւղը նրա կալւածքն էր. նա ինքը հասարակ շինականի ծագումն ունէր և իբրև տոհմական ամեն արժանաւորութիւնից զուրկ՝ իր տաճիճանով միայն արժանի համարւեց Լիպարիտի փեսայութեան. իր պիւղը նոյնպէս։ Իր քրոջը նա կնութեան էր տւել վրաէր Օրբելեանների ձեռքում գտնւող Ճահուկ պիւղը. «Էր կին ազատագի և վարքմամբ միջ

Չահկեցոյ, որում Արաս ասէին»։ Այս ապատապրի բառը ազնւական չէ նշանակում։ Իրնէ և միջին դարերում հայերն ունեցել են չորս դասակարգ. 1) Հօրորդի (ազնւական) 2) Ազատորդի (հպատակներ) 3) հարճորդի և 4) շինական (իրաւազուրկ)[1]։

Խաթունն ,ահա, իր այդպիսի նւաստ ծագմամբ իսկապէս պատշած չէր Ելիկումին, իսկ նրանցից ծնւած սերունդը, ինքնըստինքեան, հեղինակութիւն վայելել չէր կարող բնիկ Օրբելեաններին հպատակ ժողովրդի մէջ։ Լեռնականներին հասկացողութեամբ այդպիսի սերունդը կավզատարդ է — հարճածին. իսկ հայոց հասկացողութեամբ նրանք ճըռ - Օրբելեաններ պիտի համարւէին, ինչպէս և վկայում է հակամիտ կերպով Սիւնեաց պատմիչը հաղորդելով, թէ բուն Օրբելեանները նոքա են, որոնք սերւելին ոչ թէ Ելիկումից օգնութիւն խնդրելու համար գնացած Ելիկումից, այլ նրա եղբօրից՝ Իվանէից, որը Պարսկաստանում չը մնաց, այլ Գանձակ գարձաւ և Թամարի ժամանակ էլ թողութիւն առանալով, վերադարձաւ իր տեղական պատւին ու Օրբէլի քաղաքը սեպհականացրեց իրեն. «Յորմէ ծնան որդիք և այժմ նոքա են Օրբելք»։

Այսպիսի հարճածին Օրբելեաններին, ահա, չը հնազանդւելին հին վրաստ կուսակցութեան պատկանող իշխանները. նրանք ծախելով իրենց գիւղերը, լեռներն անցան, ուր իրենց նոր գաղթավայրերը կոչեցին հին բնակատեղու անուններ։ Յայտնի են նաև վաճառման և նւիրման մանրամասնութիւնները. ամենից աւելի օգտւում էին վանքերը, երբ գնող չը կար. այդպիսի դէպքերում նւիրաբերւում էին հողերն ու գիւղերը այս ու այն վանքին. բայց մուրհակագրում էլ էին վանքերի վրա, որպէսզի մէկ իշխանը չը զօրեղանայ միւսի դէմ, հանելով գիւղն ու ժողովրդին իր վաստակի գնացած իշխանի իրաւունքից. շատ անգամ էլ վանքերին մուրհակագրելը կնշդ նշանակութիւն էլ էր ունենում, որպէսզի տեղական կալւածատէրը կամ ժողովուրդն աշ-

[1]) *Ագաթ. 223։ Շարական Յարութեան Դ.«Տէր յերկնից»։ Նոր. Բիւզանդացի՝ Հայկ. Բառաքնն. 119/15։*

խատէր մուրհակագրութեամբ խուսափել իր նոր անհամակրելի իշխանի հետ գործ ունենալուց։

Հետեւել արձանագրութիւնից երեւում է որ Սիւնեաց եպիսկոպոսը իր քրոջ աղջկան Ելիկումին կնութեան տալուց յետոյ, անհամակրական հողի վրա ծագած գաղթի երեւոյթը նկատելով, իր կալւածքը՝ Ակոշ գիւղն ու նրա ժողովուրդը Նորավանքի անունով մուրհակագրեց.

Թվ. ՉՐ. Ես Սահմանս Սիւնեաց արեւ եպիսկոպոս զմիր հայրենի գիւղն Ձակոշ (կամ զԱկոշ) իմոյս սուրբ ուխտ(իս) տուաք հայրենիք իւրով ժողովրդով իշխատակ հոգւոյ իմոյ. ով որ հակառակ կայ՝ ՅԺԸ սուրբ հայրապետաց նզոված[1])։

Միայն Ակոշեցիք չը գաղթեցին լեռներն ու հիմնեցին նոյնանուն աւանը։ Լեռներում XIX դարի հռչակաւոր վէպերը, իշխերեան չեչենների մէս գիւղը, հիմնեցին Սիւնեաց վէպի աւանի տարագիրները. սոքա հիմնեցին Սիւնեաց վէպի աւանի տարագիրները. սոքա կորպեան տոհմից էին, և լեռներում ապա հանդէս եկան կուրատաղին ձևով. ահա վէպէնի կորպեանց մասին արձանագրութիւնը.

Կամաւ Ամենակալին Աստուծոյ այս գիր յիշատակի և արձան անջնջելի Մինոյ Խաթունիս է դառը մեծի արքային Ջալալի և ամուսնոյ մեծարգի իշխանին Տարսայիճին, և իմ որդւոյս Ջալալիս, որ գնեցաք ի մեր հալալ ընչից գնորքերդին այգին ի վէպի, և զայն ի կորդւոյ գնեցաք ի հայրենատիրացն և անկեցաք և բոլորեցի զչորս դիսն ...[2])։

Այս վէպի յիշում է Օրբելեանը մի ուրիշ անգամ Սմբատի գրւած գաւառների մէջ.

Էառ և զեղեգիս և զամենայն գաւառն վայոց Ջորոյ, զՓոդանանն, զՈւթձ, և զվէպի իւր Ձորձէ մինչև յերևրաւնս[3])։

Աղթամարեան տոհմը, որը յիշեցինք առաջ, բնակւում էր Սիւնիքի Արփայ գիւղում, որ նշանաւոր էր իր այգիներով. յետոյ վաճառելով իր կալւածքը, նա անցաւ լեռները և հիմնեց Սամուր գետի վրա Ախտա-Ախաթ-Ախացը, որ այժմ քաղաք է և յայտնի իր ջերմուկով։ Հիմնեց նաև Ալփաւութ գիւղը։

1) *Ալիշան-Սիսական, 113.*
2) *Ստ. Օրբ.—պատմ. Սիսական 191։*
3) *Նոյնը—411։*

«Աղթամարեան գաւմն իրն ժամանակաց բնակեալ էին յԱռփայ գիւղն... յորով կթախտս ցուցանեն Աղթամարն և Արփասանն։

Ամիրա Կապանեցի «գնէ զԱղթայ այգին՝ որ ի յԱռփայ, լ-մեծ իշխանէն Տարսայիճէն, որ էր և նոցա գնեածք ի բուն հայրենատէրանցն[1]։

Այդպիսի գաղթերից է նաև Գեղարքունիքի Մաճառակաձորը, որն անցաւ լեռներըը, բայց թէ ո՛ր մասը՝ յայտնի չէ. այսօր Մոզդուկի շրջակայքում գտնուղ նոյնանուն աւանը վկայում է նրա վերջնական հանգրուանների։ Կլեկերտ յիշում է Madjar, տեղացիք՝ նոյնպէս, իսկ ռուս. քարտէզներըը՝ Карабаглы св. Крестъ։

Նոյնպէս Արցախի Վարանդա գաւառամասի անուղղակի հիմունքից Սուսնջայի վանքներից մէկի վրա Վարանդա քաղաքը[2]։

Իսկ Սիւնիքի Ճահուկ կամ Ճախուկ գաւառի և նոյնանուն աւանի անուղղակի հիմունքներին լեռներում երկու Ջահ անուններով գիւղեր, քարտէզների Tschoch-ը։ Այսօրուայ Զոխեցիք ճանապարհորդներից մէկին հաղորդել են նոյն բանը. ահա նրանց խօսքերը։

Մեր նախնի պապերն աւանդած են որդոց որդի, թէ հայ եղած են գիւղիս բնակիչներն։ Գալիս է արաբացոց Արու-Մուսլիմ զօրավարն և ընդունել է տալիս թէր այժմ գաղտանցոց մահմետական կրօնը, և նստում Ռոճա գիւղում։ Հայ-քրիստոնեայ ձոխն նոյնպէս։ Այս պատճառաւ տարին մի անգամ գիւղի աւագ կարգացողն կատարում է մեծ հանդէս. պատնից հանում է խաչն և եւթը անգամ բարձրացնում և գայլային իջեցնում է խաչը Ռոճա գիւղի վրա։ Աւանդած է մեզ նոյնպէս ոչ աղջիկ առնել այլ լեզուներից և ոչ աղջիկ տալ այլ լեզուներըի[3])

Վերջապէս Ալագիր անունը այդ մեհենյն Կորդ (աղջին) և Ակուշ (աստէ) առնմերի հետ անցաւ լեռներըը։ Եւ երևում է, որ ոչ Ալագ-իր ոչ Alilat մեհենութիւնները ճիշտ չեն[4]). Նա վոխադրուած է Սիւնիքից ապագէս. Հալիձոր հոչակաւոր ամրութեան անունը Հալէ արմատից է, ի կամ է վերջածանցով՝ Հալի կամ Հալէ ձոր, որը

[1]) Ջալալեան, Ճանապարհորդութիւն Բ. 198—9, Մաթէ. Օրբ. Գլ. Հ. և կե։

[2]) „Варандоевская—фамилія пришельцевъ". У. Лаудаевъ—Чеченское племя, 10.

[3]) Մ. Ծ. վ. Բարխուդ. Ագւանից երկիր և գրայիք 16։

[4]) Տես Նկատ. ԻԹ, էջ 43։

գարձել է Հալա—ձոր. վերջածդամբը լեռնցիք գարձրել են ջիր, ինչպէս Սիւնիքում Թաթարները նոյնը գարձրել են գուր, օր. Արջաձոր՝ Աճիզուր, Ջագիձոր՝ Ջանկիզուր[1]) եայլն։ Ալագիր ձևը հետազօտողներն են կռմռել. իրենք իրենց ալագիրցիք անուանում են Ուալլաջիր[2])։

Հալիձորի խնդիրը Տարսայիճից լուրջ ուշադրութիւն է պահանջել։ Այդ գիւղը Հալէ, Հալիս, Հալեցիք, Հալիձոր ձևերով յիշած է շատ քիչ անգամ. ըստ Ալիշանի, նա «ի պատմութիւն յիշի զառաջինն 'ի սկիզբն ժ. դարու, յորում մեծաճառատ սիկին մի. Համառօտութեան անուն դուստր Բարգենի իշխանի՝ տիրապար ընծայեաց նորաշէն եկեղեցւոյն Տաթեւոյ[3])։ 13-րդ դարում Տարսայիճը Հալիձորը ուել Նորավանքին հետևեալ պայմաններում. Տաթեւը և Նորավանքը մրցում էին իրար հետ այդ ժամանակ. Տաթեւը չէր կամենում հնազանդել Նորավանքին և նոյնիսկ Սաեփ. Օրբելեան նորընծայ Մհերապօլոին այն առաքելանի, որ վերջինս սահմանած էր խոհեմարար համբերել անհնազանդներին մինչև նրանց մահը.— «Բազում վիշաս կրեալ յեպիսկոպոսացն որ ի Տաթեւ մինչև վոխեցան նոքա ժամուամբ»։ Թէ այդ շրջանում կալւածական և բարոյական շահերից ղրդուած երկու վանքերը ինչքան ժամում էին իրար, երևում է Սաեփ. Օրբելեանի յորդորից—«Մի լիցի հետ և նախանձ ի մէջ ատանս այս. և բնակիչք սոցա մի իշխասցին առել միմեանց, եթէ դու Տաթեացի և կամ Նորավանեցի»[4])։ Ահա X դարից սկսած Տաթեւին պատկանող Հալիձորը, երեք և կէս գար նրա հետ ընդելական կեանք վարելուց յետոյ, 13-րդ դարի երկրորդ կիսին մասնակից է դառնում փէոդալ իշխանների, Թաթարական-վրական կուսակցութիւնների և Ճրո-Օրբելեան մհերապօլոի մրցումներին. Նորավանքի հիւսիսային պատի վրայ Տարսայիճը արձանագրում է, որ Հալի ձորը և Շնհները այսուհետև

[1]) Ալիշան՝ Սիսական 255 և 275.

[2]) Տես ծնթ. Նորդենսարենգի Բ. 7, էջ 22։

[3]) Սիսական, 256։

[4]) Պատմ. Սիսական, ՀԱ։

պատկանում են Նորավանքին. նրանց հարկն էլ նւա-
ղեցնում է. ահա նրա արձանագրութիւնը Ալիշանի
Սիսական 191 էջից.

Կամաւն Աստուծոյ (այս) իմ գիր է Տարսայիճիս իշխանիս,
որ իշխեցող էի Սիւնեաց նահանգիս Որոտան և Շնհերոյ. որ եկե-
ղեցի տուի շինել Սիրանէս վարդապետին, ու Հալէձորոյ (ու) Շընհերոյ հայրենիքն տուի իւր սահմանաւքն յորդէց յորդիքն նորա հայրենիքն ալի. ու ինչ գեկեղեցիս լինելոյն խիշայ կու տայաք սպիտակի, այն խիշային փոխան գԱզազար Ըղերնեցին տվաք, նրա հայրենիքն լինի, նորա գեղին կայ յաղդէ յազդ. ու գՀալէձորոյ հարկն սահմանեցաք ի տարում վաճառն սպիտակ տայ. այլ ազատ է յամեն հարկաց. այլ ոչ ամիրայ ոչ պարոն ոչ ձեռնաւորի ոչինչ հաշիւ չկայ հետ Հալէձորոյ, ոչ շոր[1] տայ ոչ այլ ոչ ուխ. Ով յետ մեր գայս հաստատ վճիռս խափանէ ու գմեր հրամանքս ունայն առնէ, յերից տուրը ժողովոյն որոշեալ եղիցի և ընդ խաչհանուացն եղիցի. ես Տարսայիճս իմ ձեռաւքս հաստատեցի գդիրս գայս:

Այս արձանագրութեան նզովքից և ոճի խըստութիւնից երևում է, որ Հալիձորը նախկին սիրոջից՝ Տաթևից խլելն ու Նորավանքին մուրհակագրելը մի թեթև խնդիր չէր. սպասւում էր, որ ոչ թէ օտար իշխանները, այլ բնիկ ամիրան, պարոնը կամ նրանց ձեռնաւորը Նորավանքից կը խլեն այն. ըստ որում պատիժը քրիստոնէական է—երեք տուրը ժողովի նզովքը և խաչհանութեան բաղդը. չի յիշւած ոչ Մահմէդի և ոչ Ղուրանի անունը: Ոչ պակաս ուշադրութեան արժանի է իրրև գործելակերպ Հալիձորեցիներից վանքին հասանելիք տուրքի նւազեցնելը Տարսայիճի հրամանով:

Այդ բոլորի դրդիչը կրկին կուսակցական միտումն էր. Տաթևը կուսակից էր այդ շրջանում Թաթարական —Մահմէդական զօրեղացող կուսակցութեան հակառակորդներին՝ Թագաւորապն Ելդարին, Բիւրապետ Դուբալին և նրանց համախոհներին: Նոյնիսկ Տաթևի վանքը կալանաւորման տեղ դարձաւ Թաթար կուսակցութեան պարագլուխներից մէկի՝ Խուռումչու համար, ինչպէս այդ բոլորը մենք յիշել ենք «Ելդար» հատւածի մէջ: Դուբալը և Ելդարը միաւած էին վրաց և յունաց կողմը, այսինքն՝ Աւազ Օրբելեանի պէս մտածողներ էին, Տաթևը նոյնպէս: Նորավանքը պէտք է ահա հանդիսանար

[1] Շրջել (=«շուռ տալ» դարարագի բարբառով):

Տաթևի հակակշիռը և նպաստէր Թաթարասէր Օրբելեանների կուսակցութեան զարգացման: Այդ նպատակով Տաթևի ժողովրդին և գիւղերը խլում էին նրանից և տալիս Նորավանքին. և որպէսզի ընդհատած միրոջ կարօտը չըզգացւի, նոյնիսկ պահեցնում էին հարկերի քանակը: Այդ է ցոյց տալիս միայն Տարսայիճի արձանագրութիւնը:

Ահա վերոյիշեալ բոլոր աւանները, որոնք այսպիսով մտանակից են դարձած XIII դարի պատմութեան, ինչպէս հայոց արձանագրութիւնների նոյնպէս և լեռնական աւանդութիւնների մէջ հանդէս են գալիս խմբակցած իրենց բաղդով. ոչ միայն իրենց տոհմագրական և դասակարգային նկարագրով են նրանք իրար հետ բաղդեւած, այլ նաև աշխարհագրական միջավայրով—Սիւնեաց գաւառը հարաւում և Իչկերեան շրջանը լեռներում. այդպէս են Ակուշա-Акуза, Վէդէն, վարանդա, Ախթա, Հալիձոր-Ալաջիր և Կորդի-Курта անուանները:

Իրրև հին իշխանական տոհմերի հեւձւած շառաւիղներ, նրանք թէպէտ սակաւաթիւ բայց ուժեղ տարրեր էին լեռներում, և այս ու այն ձորում չէզոքացած՝ պահպանում էին իրենց անունն ու սովորութիւնները, մինչև որ մահմէդականութիւնը նրանց բոլորին ի վերջոյ պաշարեց նեւթապէս և բարոյապէս: Արդէն քանակով էլ աննշան էին դարձել, կորցրել էին իրենց ունեցած հայրենիքի, լեզւի, և կրօնի վերաբերեալ հոգեւոր կապը. և թէպէտ յաղթական մուտք ունեցող գաղթեր էին սկզբում, սակայն վերջում դարձան պատմութեան առաջ պարտւած և ձուլուած տեղական տարրերի հետ: Եւ այսօր հազիւ հնարաւոր է, եթէ ոչ բոլորովին անհնար, նրանց նախկին կեանքը ուրուագծել մէկ կամ միւս հնաւանդ սովորութեան և արարողութեան միջոցով. Ուրուսրիևցոց խաչի երդումը այդպիսի մի հետք է, որ նկարագրւած է «Լեռնականք» Ա. պրակում և թերևս որոնողների համար դժւար չը լինի գտնել նոյնպիսի հետքեր ուրիշ լեռնական հասարակութիւնների կեանքում ևս:

Մենք յիշում ենք նրանցից մի քանիսը միայն: Նախ՝ ուսս պատմարանի և կովկասագէտի խօսքերը,

որոնցից երևում է, որ հայոց եկեղեցական իշխանութեան հետքերը պահում են ցայսօր իսկ մահմէդական ժողովրդի մէջ։

М. М. Ковалевскій պատմում է, որ ինքը տեսել է Ղազիղումախի մեչիդում չորս սև փայտի հատուածներից կազմած մի գաւազան, той самой формы, какую мы встрѣчаемъ на армянскихъ епископскихъ посохахъ: извивающая двуглавая змѣя, пасти которой направлены въ противоположныя стороны. Посохъ этотъ употребляется кадіемъ въ торжественныхъ случаяхъ. Магометанское преданіе считаетъ его принадлежащимъ главѣ того духовенства, которое дѣйствовало въ Кази-Кумухѣ до водворенія въ немъ мусульманства[1]).

Երկրորդ՝ առաջարկում ենք համեմատութիւնը մի ժողովրդական երգի հայերէն ընտրքի և Ղումուխներէնից[2]) ուստ. թարգմանութեան։ Պարզ նկատելի է, որ հայերէն ընդարձակը համաոտակ է լեռնցին և աւելի գեղեցկացրել՝ քան հայերէնն է[3]).

Տղայ — ա՛ չալ աղջիկ՝ ձուր ես գնում.
Աղջիկ — ա՛ պէլ տղայ՝ բաղն եմ գնում։
— ա՛ չալ աղջիկ՝ բաղն ձուր ես գնում.
— ա՛ պէլ տղայ՝ վարդի եմ գնում։
— ա՛ չալ աղջիկ՝ վարդն ինչ ես անում.
— ա՛ պէլ տղայ՝ եարիս եմ զրկում։
— ա՛ չալ աղջիկ՝ քու եարը մեռնի.
— ա՛ պէլ տղայ՝ քու լեզուն լալկի։
— ա՛ չալ աղջիկ՝ քու եարը կորչի.
— ա՛ պէլ տղայ՝ քու լեզուն ուռչի։
— ա՛ չալ աղջիկ՝ ես քեզ կուզեմ.
— ա՛ պէլ տղայ՝ ես քեզ չեմ առնի։
— ա՛ չալ աղջիկ՝ զոռով կըառնեմ.

[1]) Законъ и обычай на Кавказѣ I, 148.

[2]) Ստատիրզեան շրջանում ապրող Ղումուխ ժողովուրդն ունի հայոց հետ շատ նմանութիւններ իր ընտանեկան և կրօնական կեանքով. նրանց тусевъ տերմինի և հայոց տուժել, տուգանք բառերի մասին տես Հանդեսագանք Ա. 6։

[3]) Հայերէնը մեզ շնորհել է սիրալիր կերպով պ. Ս. Դէմուրեանը, առանց կարողանալու յիշել նրա առաջին հրատարակութիւնը։ Յայտնում ենք պ. Դէմուրեանին մեր խորին շնորհակալութիւնը։

ա՛ պէլ տղայ՝ երկրեցս կըկորչեմ.
ա՛ չալ աղջիկ՝ կը գամ կըգտնեմ.
ա՛ պէլ տղայ՝ ձուկը կը դառնամ ջուրը կընկնեմ.
ա՛ չալ աղջիկ՝ թռչի կը դառնամ ես քեզ կը բռնեմ։
ա՛ պէլ տղայ՝ ծիտ կը դառնամ երկինք կը թռչեմ.
ա՛ չալ աղջիկ՝ բազէ կը դառնամ եղնիցդ կընկնեմ։
ա՛ պէլ տղայ՝ էրինջ կը դառնամ նախիր կը մտնեմ.
ա՛ չալ աղջիկ՝ չուդառ կըդառնամ քեզ կառնեմ։
ա՛ պէլ տղայ՝ ջուր կը դառնամ կը վազեմ.
ա՛ չալ աղջիկ՝ փարչայ կը դառնամ որ բռնեմ։
ա՛ պէլ տղայ՝ ասեղ կը դառնամ թութը կը մտնեմ.
ա՛ չալ աղջիկ՝ խայ(ե)աթի կըդառնամ կուրծքդ կըմտնեմ։
ա՛ պէլ տղայ՝ գառը կը դառնամ սուրուն կը մտնեմ.
ա՛ չալ աղջիկ՝ չոբան կը դառնամ քեզ կառնեմ։
ա՛ պէլ տղայ՝ վարդ կը դառնամ բաղը կը նստեմ.
ա՛ չալ աղջիկ՝ բլբուլ կը դառնամ վրդէդ կերգեմ։
ա՛ պէլ տղայ՝ կորեկ կը դառնամ գեանդն կը փռեմ.
ա՛ չալ աղջիկ՝ թութը կը դառնամ քեզ վեր կը քաշեմ։
ա՛ պէլ տղայ՝ քարէձ կը դառնամ քարը կը մտնեմ.
ա՛ չալ աղջիկ՝ ֆորսկան կը դառնամ քեզ կը գտնեմ։

Տղայ — Сѣрые олени бѣгутъ съ поляны;
Прекрасныя дѣвушки любуются ими.
Скажи, что будетъ, если я тебя поцѣлую?
Աղջիկ — Если ты рѣшишься меня поцѣловать,
Я превращусь въ бѣлаго голубя
И улечу подъ небеса,—тогда ты что сдѣлаешь?
Տղայ — Если ты улетишь подъ небеса голубемъ,
Я сѣрымъ ястребомъ нагоню тебя,
Я тамъ схвачу тебя,—ты что тогда сдѣлаешь?
Աղջիկ — Если ты схватишь меня подъ небесами,
Я обращусь въ рыбу и скользну въ море;
Тогда, въ морѣ, ты что со мною сдѣлаешь?
Տղայ — Если ты уйдешь въ морѣ,
Я, обратясь въ желѣзный крюкъ, нырну въ море,
И тамъ подцѣплю тебя,—ты что тогда сдѣлаешь?
Աղջիկ — Если ты въ море меня подцѣпишь,
Я разсыплюсь просомъ по травѣ,
Тогда ты что со мною сдѣлаешь?
Տղայ — Если ты разсыплешься просомъ по травѣ,
Я сдѣлаюсь пѣтухомъ и подберу просо,
Тогда ты что сдѣлаешь?
Աղջիկ — И подъ небесами, и въ морѣ, и въ травѣ,
Ты преслѣдуешь меня; мнѣ остается одно:
Я умру, скроюсь въ сыру землю; мои родные,
Подруги меня ужъ не увидятъ.

Տղայ —Если ты умрешь, твои родные и подруги
Лишатся тебя, тогда и я умру, лягу
Въ ту же сырую землю—и тамъ, взамѣнъ всѣхъ,
Одинъ останусь съ тобою![1])

Երրորդ՝ կայ նաև մի աւանդութիւն, որի մէջ ուղղակի անուանւած է չէչնների գաղթը Սիւնիքից—

По одному изъ народныхъ сказаній, прѣдки чеченцевъ вышли изъ Шама или Шеми (Сиріи) и поселились въ мѣстности Нахчи Ванъ (нынѣ Нахичеванскій уѣздъ Эриванской губ.), а оттуда, черезъ Абхазію проникли въ Кабарду и, тѣснимые габорами (кабардинцами), заняли горную часть своей теперешней территоріи. Чеченцы сами себя называютъ *нахчой*[2]). *Այս անունը ոմանք ժողովրդական մեկնութեամբ չէչեն. «նախչի» պանիր բառից են մեկնում։*

Ըստ Հիւբշմանի, որ Նախճաւան անունը քննել է անկախ լեռնցոց ծագման խնդրից, ենթադրւում է «Նախճի կամ Նախուճ յատուկ անուն մը—|—աւան=Նախճի կամ Նախուճի աւան[3])։

Չորրորդ՝ Դաթեւնա գիւղի մօտ, Աւար-Ղոյսու գետակի ափին մի եկեղեցու աւերակների հետ. պատի մէջ նկատւում են աւազան, սեղանի երկու կողմերում խորշդարանների և վարագոյրի գոյութեան հետքեր, —մի խօսքով Հայոց եկեղեցուն յատուկ նշաններ[4])։

Հինգերորդ՝ Տերեկի Սունջա վտակի Արղուն բաղուկն անցեալ դարի կէսերին ռուսներն ամրացրին Воздвиженская *բերդով։ Այդ տեղի ընտրութիւնը կապւած էր մի գիւտի հետ. 1844 թ. օգոստոսին* Чахкиръ (=Ջահկիր, Ճահկիր) *աուլի մօտ գտնւեց մի խաչքար երեք արշին երկար., 7 վերշ. լայն. և 4 վերշ. հաստ., դեղին կրային քարից, որը մերձակայքում բացակայում է. խաչքարն աննկար և անարձանագիր էր։ Չախ-*

[1]) Сбор. Св. о Терской обл. вып. I, *էջ 292—3։*

[2]) Терск. Сбор. вып. III кн. II, Евг. Максимовъ—„Чеченцы“ 21 և Сб. Св. о Кавк. горцахъ VI, У. Лаудаевъ—Чеченское племя 3.

[3]) *Հին Հայոց Տեղոյ անունները. Հանդ. Ամս. 1907, 55 բ։*

[4]) *Մ. Ծ. վ. Բարխուդ.—Աղանից երկիր, 27.*

կլուցինները ժամմէդական են, խաչքարը սեպհականութիւն համարեցին Շատվեան հասարակութեան, որը Հատտա է կոչւում[1])։

Մենք չենք շարունակում Կորդիան, Ակուշան և միւս գաղութների բոլոր հետքերը Դաղստանում ցոյց տալ այստեղ[2])։ *Այս նմուշները յիշելուց յետոյ, այժմ մնում է կցել այդ բոլորին մի վերջին հարց ևս. ինչպէս գիտենք՝ նախկին ալաններն իրանց մարւող ժողովուրդը ինքն իրեն Իրոն է կոչում, իսկ վրացիներն ու բոլոր դրացիները նրան Օս են անւանում։ Այդ հիմնական անուններից բացի, նոյն ժողովրդի առհմական անուններն, հանդիսանում են օսար և եկամուտ. այդպէս են Ալագիր, Կուրտա, Թագաւոր, և ապա նաև Ակուլ։ Բայց այս տարօրինակ չէ. ինքը Օսական աւանդութիւնը գաղթից սերւած է ընդունում իր բոլոր իշխանական անները, իսկ ձորերի անունը կինքւած է եկամուտ բնակիչներից։ Նրանք զէնքի ուժով տիրեցին երկրին, իրենց սեպհականեցրին հողը, իսկ տեղացիները՝ նահատելով յաղթական տարրի մէջ պատերազմական շնորհք, ազատւեցին նրանց պաշտպանութեան, ինչպէս նոյնիսկ աւանդութիւններն են պատմում և նորագոյն հետազօտողներն էլ հաստատում են նոյնը, ինչպէս* М. М. Ковалевскій, Вс. Миллеръ *և ուրիշները (տ. Լեռնականք Ա. Վերջարան)։*

Այժմ մենք չենք յիշում մանրամասնօրէն այն ընդարձակ պատմութիւնը, որ ունի մեր ակնարկած գաղթը 13-րդ դարից սկսած, նրա չուերթը, պատճառները, հետևանքները ու գաղութների ոմանց անդրադարձ վերաբնակութիւնը Ազանքում և Սիւնիքում և ապա նաև Արարատեան դաշտում, վերջապէս՝ գաղթող տոհմերի ծագումն ու անցեալը.—այդ բոլորը մի առանձին հատոր է։ Իչկերինցոց Ակոշ և Ալագիր անունների

[1]) *Այս վկայութեան ազբիւրը մեր ժողովածւի մէջ, դժբաղդաբար, չենք նշանակել. հանօրէն կամ* Н. Семеновъ, Очерки Народ. обыч. Кумыковъ (Терс. Сб. кн. II, отд. II, 25—103) *և կամ* М. М. Ковалевскій, Родовой бытъ *երկերից է այն առնւած։*

[2]) *Մ. Գօշի Դաւառատանագրքի ապդեցութիւնը տ.* М. М. Ковалевскій—Законъ и обычай на Кавк. I—II.

աւելով մեր ընդհանուր ակնարկն ու ցուցումները յատկապէս Ալագիր Օս հասարակութեան աւանդութեան անդրադարձերին վերաբերում. և այժմ հասկանալի է միանգամից երկու հարց. նախ՝ որ Բագրատունի Թագուհանիներին՝ իրրև Աղուանից հին թագաւորների շառաւիղներին, Սիւնիքից Ակոշեցոց գնալ ապաւինելը՝ իդէմս Ակուզա-ակ և Ազուա-եան անների—հասկանալի է այնպէս, ինչպէս նաև Ակուշեցոց՝ իրրև նւաստ ծագմամբ, ըստ լեռնցոց՝ հարճածին ժողովրդի, սատրնակարգ դիրքը բուն Բագրատունի Թագուհիների կամ Ալդարների աչքում: Եւ երկրորդ՝ թէ Ալագիրցիք և թէ Թագաւորեանները իրենց հետ տարել են իրենց մրցողական և փոխադարձ անհաշտ և ամբարիշտ ոգին հէնց իրենց նախկին հայրենիքից. յետոյ այդ ոգին զարգացել է մանաւանդ պարսկական, տաճկական և ռուսական շահերի ընդհարման շրջաններում. Ըստ Ծայքի՝ Ալդարները XVIII և XIX դարերում գտնւում էին կրթաիկական բոպէում. «Նորամանկութեամբ հակւում էին թէ ռուսաց կողմը, որոնցից .սատնում էին չին, շքանշան և այլն, և թէ կնդծ պաշտպան էին նեղկայանում իրենց ցեղակիցների ազատութեան: Այդ երկդիմի և սևռոգական վերի հետևանքն այն եղաւ, որ վերջ ի վերջոյ նրանք անհամակրութիւն շահեցին իրենց ցեղակիցների մէջ, և առաջինը հէնց իրենց հպատակ ու ցեղակից ժողովուրդներն երես դարձրին նրանցից ու մերժեցին բոլոր այն արտօնութիւնները, որոնք նրանք նախկին դարերում խնդալէս ունէին, նախ քան ռուսաց ձեռքով այդ իրաւունքների ջնջելը» (Сб. Св. о Кавказѣ I, 206—7) Իրերի այդ վիճակում բնական ընթացքով թէ հպատակները և թէ Ալդարները այլոց հպատակութեան ենթարկեցին վերջնականապէս, թողնելով իրենց թշնամութեան և զարաւոր միջատնմեան աւերութեան ու մրցման իրրև սխալ յիշատակ իրենց ժխտողամիտ աւանդութիւնը, որի պատմիչը եղել է կապիտան Նորդենսարենդը:

Բ. ՀԱՅ-ՉԵՐՔԵԶԱԿԱՆ ԳԱՂՈՒԹ

«Չերքեզ» անունը ոմանք համարել են «չերք» արմատից և էս յոդն. յատնիկից. ոմանք էլ չոր կամ չեր «ճանապարհ» և քեզ կամ քես մոնղոլ. «հատ» արմատից = թալանող, ըստ որում չերքեզ ժողովուրդը ապրում էր կողոպտութիւններով[1]: Գոնէ յայտնի է, որ Դերբենդի դուռն իր բազմաթիւ անուններից մէկով յիշեցնում է այդպիսի արշաւանքները. Պրոկոպիոս Ծուր է կոչում Դերբենդը, որ նոյն է չոր-ճանապարհ և Ճոր (այ պահակ) բառերի հետ (Bell. Goth. IV. 3.):

Սակայն մի կողմ թողած ժողովրդի և նրա անուան ծագումը, անկասկած է, որ Դերբենդի դուռն արևելքում և Թագաւորեանը արևմտքում ակնատես են եղել շատ անգամ այն գերիների տանջանքներին, որոնք իրրև արշաւանքի զոհը, պէտք է լեռնական հրոսակների սորուկը դառնային: Այդ հանրածանօթ հանգամանքի հետ է կապած ահա այն, ինչ որ Հայ-Չերքեզական գաղութի մասին պիտի ասենք:

Չերքեզներն ունին երկու դասակարգ. Ուորկ՝ ազնուական և Պշիտլ՝ ոչ-ազնուական. դրանցից իւրաքանչիւրն էլ ունի իր բաժանումները յատուկ իրաւունքներով: Ոչ-ազնուականն ունի пшекеу, азадъ, логанапутъ, огъ և унатъ, որոնք աւելի-անուններով կոչւում են նաև զարաքիշի, չազար և կազախ: Пшекеу (բառացի՝ իշխանաբակ) և азадъ-(ազատ) ենթարկւած էին իրենց տիրոջը, պէյի կամքին: Հողագործ դասը, крестьяне, կոչւում էր огъ, իսկ կալւածատիրող դաշտային և ընտանեկան գործերը կատարողը՝ логунапутъ. վերջիններս, այն է՝ огъ և логунапутъ, սորուկ էին. նրանք կազմւած էին պատերազմական գերիներից[2]:

---

1) П. П. Надеждинъ, Кавк. Край, 202.

2) Масловскій—Привиллегир. сословія Кабардин. Окр. 1—2 և այլն:

Լեռնականները միչև վերջերս էլ հողի մշակութիւնը և դաշտային ամեն տեսակ աշխատանքը սուր և անարդ զբաղմունք էին համարում. ձին, արշաւանքը, շաբաթներով և ամիսներով թափառումները, զէնքը—սրբա էին ազնիւ լեռնցու պարծանքն ու զբաղմունքը, իսկ հողն ու մշակութիւնը—подобныя занятія были совершенно неприличны նրա համար: Այս հանրածանօթ երևոյթի պատճառով առեղծւել էր զերմներից և դնւած մարդկանցից սերուկ դասակարգը և դրա հետ է կապւած հայեցէն հող—огъ բառի լեռնցոց մէջ քաղաքացիութիւն դանելը. արհամարհւած զբաղմունքն ու զբաղւողը կոչւեցին հէնց նրա արհամարհւած լեզւով էլ: Սա նոյն երևոյթն է, ինչ որ «Ռուսական Իրաւագրքի» մէջ вервь ոչ-ռուսական տերմինի մասին նկատւած է. вервь՝ իբրև օրէնսդրական գաղափար, տեղ գտաւ օտար երկրում, չը նայած որ նրան համապատասխանող բառն ունէին ռուսները[1]: Բայց ուշադրութեան արժանի է այն տարբերութիւնը, որ միևնոյն вервь քաղաքացիութիւն չունեցաւ ռուս. գրականութեան մէջ և միայն իբրև մեռած տառ, ընդհակառակն огъ դասակարգն ապրեց չերքեզական առւներում, իբրև նրանց սև աշխատանքը կատարող ոյժ, իբրև каракиши: 1809 թւից սկսած հակւելով ռուսաց կառավարութեան կողմը, նրանք 1840-ական թւերին արժանացան արտօնութեան և խմբւելով հաստատեցին Նոր-Արմաւիր աւանը, Կուբանի ձախ ափին, նախկին «Կովկասեան գծի» մի ամրոցի հանդէպ[1]: Այսօր Արմաւիրի հայ ազգաբնակութիւնը չորս գիւղամաս ունի (ոչ-պաշտօնական), որոնցից գլխաւորապէս «Հաքու(ճ) հարլ» (Ցածկովքի աւան)-ի մէջ են բնակւում ծագրական արտայայտութեան ենթարկւած անձերից մի քանիսը. մէկին յատուկ է Նզի վրա նստած ես շրջում, միւսին՝ Ջօտ տուր ապուրին (բրնձաջրի քաղցու), երրորդին՝ Գնաս ալթարը կրակը ձգիր: Այս ծագրերից առաջինը հետևանք է մանաւանդ այն հանգամանքի, որ չերքեզների

1) М. М. Ковалевскій, Родовой бытъ I, 83—4.
1) Ս. և. Ջալալեան. Ճանապարհորդութիւն բ. 364.

մէջ հնուց ի վեր հերոսութեան առարկան ձին էր ու զէնքը. սերուկ դասը ձի պահելու իրաւունք չունէր, իսկ երկրագործութիւնն ու եղը գին ու պատիւ չունենալով հանդերձ, թուլութեան և անարդանքի նշանակութիւն ունէին ազնիւ չերքեզի համար. մանաւանդ եղը քրտինքի և դառն աշխատանքի ծաղրն էր: Միւս երկուսը նոյնպիսի ծաղր են հողագործի աղքատութեան առիթով:

«Հող» բառը անցել է նաև Փոքր-Կարաբղայի Ուրուսբի գիւղը՝ իբրև կրօնական արարողութեան տերմին[1]). голу հոգևոյն իր ննջեցեալի համար զանց առնող մարդը անբերբիութեան և սովի կենթարկւի և ընդհակառակն՝ առատ հունձ կունենայ նա, ով իր նախնիքների համար կըկատարի голу հոգևոյը: Որ այդ հասկացողութիւնը, տերմինը «Հողը գնալ» «Իգնահող» ձևերով և качъ երդումը հայկական են—կասկած չը կայ. միայն պէտք է նկատել, որ մի տեղ огъ և միւս տեղ голу ձևերով միևնոյն հող բառը հանդէս է եկել հասկանալի կերպով:

Ինչպէս ռուսաց ժիդ жидъ բառը հայոց Ջրհուդն է, որ լեռներում հնչւում է чифудъ[2]), նոյնպէս հայոց հ ձայնը օս լեզւում ֆ-ի է փոխւած հետևեալ բառերի մէջ, որ քաղում ենք Հիւբշմանի քերականութիւնից. հատանեմ — fadun, հետ — fäd, հերու — farä հայր — fid կամ fidä. այդպէս է նաև հուն — fändag[3]) և որդի (հորթ-որթ-որդ[4]) — färt:

Նկատելու արժանի է, որ մեր բարբառների մէջ էլ նախաձայն հ ո-ից առաջ դառնում է կամ ֆ կամ ւ, այսպէս՝ հոտ, հորս, հող և հորթ մի անգամ դառնում են ֆոտ, ֆորս, ֆող, ֆորթ և միւս անգամ ւոտ, ւորս, ւող և ւորթ, մօտենալով՝ նախաձայն ւ-ի կորուսմամբ չերքեզական փոխառութեան: Թերևս հայոց հող բառը և օս. jyre (chugen) դաշ, երկիր բառերը նոյն-

1) Լեռնականք Ա. 19 և Вѣст. Евр, 1886 II- 555,
2) Энцик. сл. Брок, XXI стр. 464—6.
3) Сб, Св. о Кавк. II. 90.
4) H. Hubzchmann, Arm. Gram. 483

պէս կապ ունին, որովհետև՝ թէպէտ Հիւբշման հող բառը բաց է թողել և նրա ու «հիւղ» նիւթ բառի մէջ առընչութիւն չի նկատել (Arm. Gram. 361), սակայն Մէյէ հայ. հող և հսլ. поле «դաշտ» բառերը արմատակից է նկատում (MSL, VIII, 154), որին և հաւանում է Հոլգեր Պեդերսէն, թէպէտ մասամբ. իվերջոյ՝ նոյնպէս հ-ի կորուստամբ հանդէս է գալիս լեռներում չեչեննների մէջ խոր, հոր հայերէն բառը հետևեալ անուններին մէջ.

Аксакъ—Темиръ—оръ, т. е. ровъ хромого Темира, Гожакъ—оръ, т. е. пещера или подкопъ Годжака и Ровъ этотъ называется Гаукай-оръ[1]).

Հայ-Չերքեզական գաղութի առիթով յիշում ենք իբրև մի ակ վկայութիւն Հակատհաուզէնի խօսքերը, որ Պիցունդը գաղութի յիշատակութեան կցում է նա.

Неподалеку на сѣверъ, въ горахъ находится Армянская церковь и небольшой монастырь, въ который часто отправляются и Абхазы для поклоненія. Говорятъ также, что здѣсь есть библіотека".

[1]) Сб. Св. о Кавк, горцахъ, VI, У. Лаудаевъ—„Чеченское племя„ 41, 45, 61.

[1]) Закавк. Край. I. 5.

Գ. ԱԼԴԱՐՆԵՐԻ ՅԵՂԱՑՈՒՅՑԸ

ՀԱՄԱՁԱՅՆ ՆՈՐԴԵՆՍՏՐԵՆԳԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻ

ԹՂԹԱՄԱՐ



Տես էջ 9 և նկար. ԺԱ. (էջ 34):

Ա. և Բ. Թղթատերի արվերը են, ա—ի՝ քառանկ և 1—9՝ ծառերը, որոնց անունով կոչվեցին 9 ձորերը:

Գ. Ալդարների գաղթի ուղին, որ անցնում է Կասպից ծովի արևելեան ափերով, Ղարաբաղի վերևով և դրանից յետոյ Ալգասեի վերևով, մինչև Ալգասեի և Մամուրեի միջև ընկած լեռնանցքը, որտեղից իջնում է Մամուրեի ձորը:

Դ. ՅԵՂԱՅՈՅՑ ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՑ ՏՈՀՄԻ

ԹԱԳԱՒՈՐՈՂ ՃԻՒՂԵՐԻ

ԱՆԻՒՄ, ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ ԵՒ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Աշոտ Պատրիկ Սմբատեան 743 թ.



— 70 —

— 71 —

Ի նպատակ ենք ունեցել՝ բացի մեր միջնադարեան պատմութիւնից, նաև Ջուանշիր պատմիչ վրաց, և արձանագրութիւն Մարմաշէնի, Մրէնի և Ալէմի։

1911 թ. օգոստոսին մեր ճանապարհորդութեան ժամանակ Ալէմի տաճարը, որ VII դ. է հմտաւած, խիստ անխնամ վիճակի մէջ էր գտնուում։ Հայոց Դշխոյի հազարամեայ յիշատակը գէթ պոյտն խնամքի արժանի պիտի համարուէր...

«Լեռնականք»-ի Գ. Պրակի սուտարութեան պատճառով (բաղկացած կը լինի երկու մեծ հատորից), առաջարկում ենք մեր ընթերցողներին իրենց շրջաններում կոչ անել նրա հրատարակութեան նպաստելու։ Պայմանների և տեղեկութիւնների համար խնդրում ենք դիմել նշանակած հասցէով։

ՕՍՄԱՆ ԵՒ ԴՐԱՑԻՆ.

Գծագրած է տաս. 20 վերստ. քաղաքեցի, պաշտօնական հրատ. 1903 թ.։
Արդիպատրաստեցին Հիմնադրամի և ուրիշների։

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1971 Թ.

ՀԱՅԿ Ս Ս.Ռ. Գ. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ОТДЕЛЕНИЕ ОБЩЕСТВЕННЫХ НАУК
ГРАДАРАН
Библиотека

902.6
S-37

Հղ.

Հեղինակի մատենագիտական աշխատութիւնները՝

1. Եղիշէի Պատմութեան աղբիւրը։
2. Նկատողութիւններ Եղիշէի Պատմութեան վերաբերեալ։
3. Նկատողութիւններ Փաւստոսի Պատմութեան վերաբերեալ։
4. Նախնի Հայոց հոգեպաշտութեան շրջանից։
5. Լեռնականք Ա.— Ուրուսբի։
6. » Բ.— Թագաւորեան Հատարակութիւն։

ԳԻՆՆ Է 75 ԿՈՊԷԿ

Հասցէ՝ Шуша, Армянская Духовная Семинарія,
Григорію Теръ-Погосянъ.